

ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆԵԱՆ

Հ Ա Յ Ո Ց

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. ՏԱՐԻ  
Հ Ի Ն Շ Ր Զ Ա Ն

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1943

Հ Ա Լ Է Պ

---

Յոյ. «ՅԻՆՐԻՍ» ՎԱՐՊԳԵՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՊԱՎԱՊ ԷԼ ԳՍԱՊ • ՀԱԼԷՊ

9(47.925)

19346

U-50 Արժույտն, Ա.  
Հայոց միւսճարպուն.  
Վ. Իսրայիլ.

ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆԵԱՆ

9(47.995)(075)  
Ս-50

ՅՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

A 34129

14346

ՀԱՅՈՑ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐԻ  
ՀԻՆ ՇՐՋԱՆ



# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



## Ա. Դ Ա Ս

### ա. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐ

*Մարդկութիւնը կը բաժնուի չորս ցեղերու .*

1- Սպիտակ կամ կովկասեան ցեղ,

2- Դեղին կամ մոնկոլեան ցեղ,

3- Սեւ կամ խափօիկ ցեղ,

4- Պղնձագոյն ցեղ :

*Սպիտակ ցեղը ունի երեք ստորաբաժանումներ .*

ա- Սեմական ժողովուրդներ, օրինակ՝ Բաբելոնացիներ, Ասորեստանցիներ, Փիւնիկեցիներ և այլն :

բ- Քամեան ժողովուրդներ, օրինակ՝ եգիպտացիներ և այլն :

գ- Հնդեւրոպական կամ արիական ժողովուրդներ, օրինակ՝ Հնդիկներ, Պարսիկներ, Յոյներ,

Իտալացիներ, Ֆրանսացիներ, Գերմանացիներ, Անգլիացիներ, Ռուսեր, ՀԱՅԵՐ և այլն :

### բ. ՀԱՅԵՐԸ ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՆ

*Հայերը սպիտակ ցեղի հնդեւրոպական ճիւղին*

*կը պատկանին, որովհետեւ հայոց լեզուն ԵԱՏ կը*

*նմանի հնդեւրոպական ժողովուրդներու լեզու-*

ներուն: Հնդկերոպական բոլոր ժողովուրդներու լեզուները իրարու կը նմանին. օրինակ՝ հայերէն կ'ըսեն մայր, ֆրանսերէն՝ մէր, անգլերէն՝ մըսըր, լատիններէն՝ մասէր, յունարէն մէսէր և այլն: Հնդկերոպական ժողովուրդները մարմնական նմանութիւններ ալ ունին իրարու:

Հնդկերոպական ժողովուրդները ներկայիս ամենէն շատ քաղաքակրթուած են: Ուրեմն Հայերը կը պատկանին քաղաքակրթ սղգերու խումբին:

## Գ- ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Բոլոր այն ժողովուրդները, որոնք հնդկերոպական ցեղախումբին կը պատկանին, շատ դարեր առաջ բնակած են միեւնոյն տեղը, Կեդրոնական Ասիոյ մէջ: Անոնք հոն խօսած են միեւնոյն լեզուն և եղած են մէկ ցեղ:

Հնդկերոպական ժողովուրդներու առաջին կամ մայր հայրենիքը եղած է Կեդրոնական Ասիան: Անոնք իրենց առաջին հայրենիքէն գաղթած են հետեւեալ պատճառներով.

1- Անոնք որսորդ ու խաւճարած էին: Որսորդ ու խաչնարած ժողովուրդները զիւրաւ կրնան գաղթել, մինչդեռ երկրագործ ժողովուրդները ստիպուած են մնալ միեւնոյն տեղը:

2- Իրենց հայրենիքը շրջապատուած էր թեւամի դեղին ցեղերով, որոնք կը նեղէին զիրենք:

3- Անոնք շատցան և ստիպուեցան ուրիշ տեղ գաղթել:

Ահա այս պատճառներով հնդկերոպական ժողովուրդները լքեցին իրենց առաջին հայրենիքը և մեկնեցան ուրիշ երկիրներ:

## Դ՝ ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

### ԻՆՉ ՃԱՄԲՈՎ ԵՒ ՈՒՐ ԳԱՂԹԵՑԻՆ

Հնդերոպական ժողովուրդները մէկ անգամէն չգաղթեցին իրենց առաջին հայրենիքէն, այլ՝ ժամանակ առ ժամանակ և խումբ առ խումբ :

Կեդրոնական Ասիայէն նախ դէպի հարաւ կազմակերպեցին առաջին արեալանք մը: Այս գաղթողները ճամբան երկու խումբի բաժնուեցան. առաջին խումբը մտաւ Հնդկաստան, իսկ երկրորդ խումբը՝ Պարսկաստան և Մարասան: Այսպիսով առաջ եկան Հնդիկ, Պարսիկ և Մար ժողովուրդները:

Յետոյ կազմակերպեցին երկրորդ արեալանք մը, դէպի արևմուտք: Անցան Արալ Լիճի և Կասպից Ծովու հիւսիսէն և մտան ԵՒՐՈՊԱ: Երկար ժամանակ մնացին Աև Ծովու հիւսիսը, ուրկէ ասրածուեցան Եւրոպայի զանազան կողմերը: Այսպիսով առաջ եկան Եւրոպայի ներկայ ազգերը, որոնք մեծամասնութեամբ կը պատկանին հնդերոպական ճիւղին:

Եւրոպա եկող գաղթականներէն մաս մը շարունակեց իր ճամբան և անցնելով Դանուբ գետէն ու Տարտանելի նեղուցէն՝ մտաւ Փոքր Ասիա: Փոքր Ասիա եկողները կազմեցին Փոիւզացի և ՀԱՅ ժողովուրդները:

Հնդերոպական Հայերը, հազարաւոր տարիներ տեւող ճամբորդութենէ մը ետք, վերջապէս է. դարուն (Ք. Ա.) հասան Հայաստան: Անոնք հոն գտան իրենց մէ առաջ հաստատուած բնիկ ժողովուրդ մը: Հնդերոպական Հայերը խառնուեցան այդ տեղացի ժողովուրդին հետ:

(Հնդերոպական ժողովուրդները ուր որ գացին միշտ բնիկ ժողովուրդ մը գտան և ձուլուեցան անոր հետ:)



### ԱՆՏԱՏՐՆԻ ԲԱՌԵՐ

Հնդեւրոպական, ստորաբաժանում, խաշնարած, արշաւանք (ժողովրդային), բնիկ ժողովուրդ :

### ԸՆԴՂԱՅՆՍԻ ԿԷՏՅԵՐ

1- Գիտունները մարդկային ցեղերը դասաւորած են ըստ անոնց մարքի գոյնից եւ ըստ անոնց խօսած լեզուից :

2- Նկարագրել հին մարդու կենցաղը եւ զրադումները, մասնաւորաբար՝ անշուշտ եթէ կարելի է՝ ըստ H. G. Wells - ի «The Outline of History» խորագրով նշանաւոր գործին (1931, էջ 76-83, 106-112 եւայլն) :

3- Խօսիլ գաղթող եւ բնիկ (տեղացի) ժողովուրդներու, ինչպէս նաեւ խասօնարած եւ երկրագործ ժողովուրդներու մասին :

4- Ըսել թէ հին ժողովուրդները անհասարակ գաղթող եղած են (որովհետեւ որտորդ էին եւ կամ խաշնարած). ուստի հին ժամանակներուն ժողովուրդները միշտ խառնուած են իրարու հետ :

5- Խօսիլ հնդեւրոպական ժողովուրդներու նախալեզուից կամ սանսկրիթ լեզուին մասին :

6- Յիշատակել Հնդեւրոպական ժողովուրդներու լեզուներուն հասարակաց եղող բառեր. օրինակ՝ մայր, հայր, եղբայր, քոյր, դուռ (Անգլ. door), հեր (Անգլ. hair) եւայլն :

7- Մորկեցնել հաշիւը կամ ճիշդ արժէքը Քրիստոսէ առաջ (==Ք. Ա.) եղող թուականներուն :

### ՀԱՐՅԱՐԱՆ

1- Մարդկութիւնը քանի՞ ցեղերու կը բաժնուի: 2- Սպիտակ ցեղը քանի՞ ստորաբաժանումներ ունի: 3- Հայերը ո՞ր ստորաբաժանումին կը պատկանին: 4- Ինչո՞ւ: 5- Հնդեւրոպական ժողովուրդները նախապէս ո՞ւր բնակած են: 6- Ինչո՞ւ գաղթած են անոնք: 7- Հնդեւրոպական ժողովուրդները ի՞նչ ճամբով եւ ո՞ւր գաղթած են (ցոյց տալ քարտէսին վրայ): 8- Հնդեւրոպական Հայերը ե՞րբ մտան Հայաստան: 9- Հնդեւրոպական Հայերը գորո՞նք գտան Հայաստանի մէջ :


### ՀՐԱՀԱՆԳ

1- Տղաքը թող պահ մը խորհրդածին թէ մարդը ի՞նչպէս պիտի ապրէր բնութեան մէջ, եթէ մարդոց ձեռքով շինուած ունէ բան չգտնուէր երկրի վրայ :

2- Պատասխանել հետեւեալ հարցման. — Ինչո՞ւ համար նըմանութիւններ կան հնդեւրոպական կոչուած ժողովուրդներու լեզուներուն մէջ :

3- Գծել եւ կամ ցոյց տալ հնդեւրոպական ժողովուրդներու արշաւանքներուն ուղեգիծը :





## Բ. Դ Ա Ս

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԲՆԻԿՆԵՐԸ

#### ա- ՍՈՒԲԱՐԻՆԵՐ

Հայաստան շատ հին երկիր մըն է : Հնդեբու-  
պական Հայերէն բազմաթիւ դարեր առաջ ուշիմ մար-  
դիկ ապրած են մեր հայրենիքին մէջ , երբ ուրիշ ազ-  
գերու հայրենիքները անմարդաբնակ էին :

Հայաստանի առաջին նախաբնիկները եղած են  
**Սուբարիները**, որոնք մեծ ժողովուրդ մը եղած են :  
Անոնք միայն Հայաստանի մէջ չեն բնակած , այլ՝ ամ-  
բողջ Առաջաւոր Ասիոյ մէջ (այսինքն Կապադովկիա ,  
Կիլիկիա , Սիւրիա , Միջագետք , Անդրկովկաս , Մա-  
րաստան և այլն) :

Սուբարիները անյիշատակ ժամանակներէն մին-  
չև 2000 թուականը (Ք. Ա.) ապրած են Հայաստանի  
մէջ : Անոնք կը պատկանին սպիտակ ցեղին :

Սուբարիները շատ քաղաքակիրթ եղած են :  
Գիտունները պեղումներ կատարեցին անոնց բնակած  
երկիրներուն մէջ և գտան արձանագրութիւններ , քան-  
դակներ , անօթներ , զէնքեր , որոնք կը ցուցնեն թէ  
այդ հեռաւոր դարերուն , Սուբարիները բարձր քաղա-  
քակրթութիւն մը ունեցած են : Անոնք շինած են  
գեղեցիկ ու քանդակազարդ տուներ : Կատարած են  
պղինձի գիւտը և անոր գործածութիւնը սորվեցուցած՝  
Ասիոյ միւս ժողովուրդներուն : Սուբարիները եղած են  
ճարտար արհեստաւորներ : Անոնք շինած են գեղեցիկ  
անօթներ :

Սուբարիները զիտէին գրել : Անոնք կը գործա-  
ծէին սեպագիրը :

Սուբարիներու իշխանութիւնը Հայաստանի մէջ  
վերջացաւ 2000 թուականին (Ք. Ա.) , որովհետեւ  
անոնց վրայ յարձակեցաւ ռազմասէր ժողովուրդ մը :

Սուբարիները եղած են ստեղծագործ եւ աշխասատր: Մենք մեր ուժիմութիւնն ու աշխատիրութիւնը ժառանգած ենք Սուբարիներէն, որոնք մեր նախահայրերն են:

Սուբարեան գեղեցիկ արձան մը



Քարի անօրով ստուածութիւն  
[Հալէպի Քանգարան]

## Բ- ԽԱՐՐԻ - ՄԻՏԱՆԻՆԵՐ

Ռազմասէր ժողովուրդ մը, 2000 թուականին (Ք. Ա.), յարձակեցաւ Սուբարիներու վրայ եւ կործանեց անոնց իշխանութիւնը: Այս ռազմասէր ժողովուրդը հնդկերոպական էր: Անիկա եկած էր Սև Մովուհիւսիսային կողմէն, անցնելով Կովկասեան լեռներէն: Հնդկերոպական այս յարձակողները տիրեցին Սուբարի-

Ներու վրայ և 2000 թուականին (Ք.Ա.) հիմնեցին  
երկու հզօր թագաւորութիւններ :

- 1- Հիքիքներու թագաւորութիւնը, Կապադովկիոյ մէջ :
- 2- Խարի - Միսանիներու թագաւորութիւնը, Հայաստանի մէջ :



Ոգիի մը արձանը՝ Խարի - Միսանեան գործ

[Հալէպի Քանդարան]

Ուրեմն Հայաստանի երկրորդ իշխանութիւնը եղաւ Խարրի-Միտանինելու թագաւորութիւնը: Անիկա առաջ կկամ էր բնիկ Սուբարիներու եւ նորեկ հնդեւրոպական ժողովուրդի միացումով: Սուբարիները կը կազմեն հասարակ ժողովուրդը, իսկ հնդեւրոպական յարձակողները՝ ազնուական դասակարգը:


Խարրի-Միտանիներու իշխանութիւնը տեւեց 2000 — 1200 (Ք. Ա.), այսինքն 800 տարի: Խարրի-Միտանիներու թագաւորութիւնը շատ զօրաւոր եղաւ իր ժամանակին հզօրագոյն տէրութիւնն էր: Խարրի-Միտանիները ունեցան բարձր քաղաքակրթութիւն մը: Անոնք նշանաւոր եղան վաճառականութեան եւ արհեստներու մէջ:

Խարրի-Միտանիներու թագաւորները առեւտրական եւ քաղաքական դաշինքներ կնքեցին Եգիպտոսի փարաւոններու հետ:

Խարրի-Միտանիներու տէրութեան կործանումը.— Քրիստոսէ առաջ 1200 թուին՝ հնդեւրոպական ուրիշ ժողովուրդ մը, Փոլիզ-Մոսք անուանով, արեւմտեան կողմէն մտաւ Փոքր Ասիա, անցնելով Տարտաննէն: Փոլիզ-Մոսքերը նախ կործանեցին Հիթիթներու թագաւորութիւնը եւ հիմնեցին Փոլիզացիներու տէրութիւնը կապադովկիոյ մէջ: Յետոյ իրենցմէ մաս մը, Մոսք անուանով, մտաւ Խարրի-Միտանիներու երկիրը: Մոսքերու արշաւանքով՝ Խարրի-Միտանիներու տէրութիւնը տկարացաւ եւ սպա կործանեցաւ: Իսկ պարտուած Հիթիթներէն շատեր, Փոլիզ-Մոսքերու յարձակումէն փախան ու ապաստանեցան Հայոց երկիրը:

#### ԱՍՏԱՏՐՈՒԻ ԱՍՈՍԻ

Նախաբնիկ, անմարդաբնակ (ինչո՞ւ), Առաջաւոր Ասիա, անյիշատակ ժամանակ, պեղում, արձանագրութիւն, քանդակ, անօթ, սեպագիր (=բւեւեւագիր), ստեղծագործ, նախահայր, ռազմաւէր, հասարակ ժողովուրդ (=երրորդ դասակարգը), ազնուական դասակարգ, առեւտրական եւ քաղաքական դաշինք, փարաւոն, ապաստանիլ:



Հիբիբ քազաւոր մը

**ԸՆԴԼԱՅԵՆՆԵՐ ԿԷՏՆԵՐ**

1- Սուբարիները այլ անունով Սուսերներն են : Խօսիլ սուսերական քաղաքակրթութեան մասին, որ ափենահինն է եւ մարդկային քաղաքակրթութեան խարխիւր, որուն վրայ բարձրացած են ուրիշ քաղաքակրթութիւններ :

2- Հայաստան հին երկիր մըն է : Անոր հողին վրայ հինէն ի վեր ապրած են ստեղծագործ եւ աշխատասէր մարդիկ (օր. Սուբարիները) : Ուրեմն ներկայացնել Հայաստանը իբրեւ քաղաքակրթութեան սպասարկու երկիր մը : — Կանգ առնել Սուբարիներու նկարագրին վրայ :

3- Նախ առարկայական ձեւով մը բացատրել թէ ի՞նչ է քաղաքակրթութիւնը, եւ ապա ըսել թէ մարդիկ ինչո՞ւ ստիպուեցան քաղաքակրթուիլ, այսինքն յայտնել քաղաքակրթուելու նախնական կամ առաջին նպատակը :

4- Բացատրել թէ կաւէ անօթի մը նայիլով գիտունը ի՞նչպէս կրնայ ըսել թէ այդ անօթը շինող եւ գործածող ժողովուրդը եղած է քաղաքակիրթ : — Մարդկային ի՞նչ տեսակ աշխատանքներ կամ արհեստներ ու արուեստներ կրնան կիրարկուիլ կամ ի յայտ գալ անօթի մը վրայ ( անօթի ցիւրք, ձեւը, երկրաչափական գիծը,

քանդակները, նկարները, գոյները եւ այլն ) :

5- Խօսիլ հին ժողովուրդներու գործածած զիրերու մասին. պատկերագիր (մեհենագիր), սեպագիր :

6- Շեշտելի թէ հնդեւրոպական ժողովուրդները, իրենց արշաւանքին, երկար ատեն հոծ թիւով կանգ առին Սեւ Մովու հիւսիսը, ուրիշ ժամանակ առ ժամանակ գաղթեցին այսպէս ուղղութեամբ :

#### **ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Հնդեւրոպական Հայերէն [ այսինքն է. դարէ ] առաջ մարդիկ ապրած են Հայաստանի մէջ: 2- Որո՞նք եղած են Հայաստանի առաջին նախարնիկները: 3- Սուբարիները ո՞ւր բնակած են: 4- Սուբարիներու կեանքը [կամ իշխանութիւնը] ե՞րբ սկսաւ եւ վերջացաւ Հայաստանի մէջ: 5- Սուբարիները ո՞ր ցեղին կը պատկանին: 6- Սուբարիները քաղաքակիրթ եղած են: 7- Ի՞նչ բանէ գիտենք անոնց քաղաքակիրթ ըլլալը: 8- Խօսէ՛ Սուբարիներու քաղաքակիրթութեան մասին: 9- Սուբարիներու իշխանութիւնը ե՞րբ վերջացաւ Հայաստանի մէջ: 10- Սուբարիներու նկարագիրը:

11- Որո՞նք կործանեցին Սուբարիներու տէրութիւնը: 12- Այս Հնդեւրոպական ժողովուրդը **ՈՒՐԿԷ** եկաւ: 13- Ո՞ր երկու **ՏԵՐՈՒՔԻՆՏԵՐ** հիմնուեցան 2000 թուականին [ Ք. Ա. ] Առաջաւոր Ասիոյ մէջ: 14- Խարրի-Միտանիները ո՞ր երկու ժողովուրդի միացումով առաջ եկան: 15- Խօսիլ Խարրի-Միտանիներու գործերուն եւ քաղաքակիրթութեան մասին: 16- Որո՞նք կործանեցին **Հիքիքներու** եւ **Խարրի-Միտանիներու** թագաւորութիւնները: 17- Ե՞րբ:

#### **ՀՐԱՀԱՆԳ**

1- Յոյց տալ քարտէսին վրայ Առաջաւոր Ասիան բաղկացնող երկիրները:

2- Այցիլն տեղական թանգարանը եւ գրաւոր արտայայտել տպաւորութիւնները: Իսկ Հալէպի ուսանողները պարտաւոր են այցելել Հալէպի Պետական թանգարանը, ուր կան Սուբարեան եւ Խարրի-Միտանեան հնութիւններ:

#### **ԱՂԲԻՐՆԵՐ**

**Սուբարիներու մասին.** — Լէօ, Հայոց Պատմութիւն, Հտր. Ա., Թիֆրիս, 1917, էջ 209—216, եւ Պրոֆ. Ա. Խաչատրեան, Հայաստանի Սեպ. Շրջ.ի Պատմութիւն, Երեւան, 1933, էջ 73—148:

**Խարրի-Միտանիներու մասին.** — Պրոֆ. Ա. Խաչատրեանի յիշեալ գործին 148—468 էջերը, քաղուածաբար:



## Գ. Դ Ա Ս

ԲԱՑԱՏՐԵԼԻ ՌԵՍՈՒՑԶԻՆ ԿՈՂՄԵ

### ա- ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

Խարրի-Միտանիներու իշխանութիւնը կը վերջանայ 1200 թուականին (Ք. Ա.) : Այս ժամանակ, ժ.Ք. դարուն (Ք.Ա.), պարտուած ու հալածուած Հիթիթները կ'ապաստանին վերին Հայաստան : Իսկ Մոսքերը կը մտնեն հարաւային Հայաստան : Խառնաշփոթութիւններ տեղի կ'ունենան Հայաստանի մէջ. — Ցեղեր կը սկսին խառնուիլ իրարու հետ : Հեղհեռէ առաջ կու գայ նոր ժողովուրդ մը, Ուրարացի անունով :

Ուրարացի ժողովուրդը եկուոր չէր, այլ՝ տեղացի : Անիկա խառնուրդն էր հին Սուբարիներու, եկուոր ու հնգերոպական Խարրի-Միտանիներու, հնգերոպական Մոսքերու և գաղթական Հիթիթներու : Ուրեմն Ուրարացիները ձուլումն էին այս չորս ցեղերու :

Ուրարացիները թ. դարուն կը գտնան Հայաստանի տէրը և կ'իշխեն մինչև է. դար (Ք.Ա.) :


### բ- ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐՈՒ ԵՐԿԻՐԸ

Այս ժամանակ (ժ.Ք. — թ. դար Ք. Ա.) Հայաստան բաժնուած էր գլխաւոր երկու մասերու .

1- Նայիրի և

2- Ուրարտու :

Նայիրի կը ներկայացնէր Հայաստանի հարաւային մասը, վանայ Մովու շրջականերէն մինչև Ուրմիոյ Մովը : Ասորեստանեան սեպագրութիւնները Նայիրի անունով կը ճանչնան Հայաստանի թէ՛ հարաւային և թէ՛ հիւսիսային գաւառները : Նայիրի հաւանաբար կը նշանակէր «գետերու երկիր» : Նայիրի բաժնուած էր բազմաթիւ գաւառներու և փոքր թագաւորութիւններու : Ուրարտուն կը ներկայացնէր Հայաստանի



სამხრეთი კავკასია

տանի աւելի հիւսիսային մասը: Ուրարտուի ժողովուրդը հետզհետէ զօրացաւ և արեւելիկ Վրայ ևս և իր անունով ամբողջ երկիրը կոչուեցաւ Ուրարտու: Ասոր համար է որ Սարրի-Միասնիներու յաջորդող ժողովուրդը ծանօթ է Ուրարտացի անունով:

**ԲԱՏԱՏՐՈՒԻ ԲԱՌՈՐ**

Եկուոր, խառնուրդ և ծուլում (ցեղային) :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- ժԲ. դարէն սկսեալ ո՞ր ցեղերը կողք - կողքի կ'ապրէին Հայաստանի մէջ: 2- Այս չորս ցեղերու կենակցութիւնը [ բացատրել բառս ] ո՞ր ժողովուրդին ծնունդ կու տայ: 3- Ուրարտացիներուն մէջ կա՞յ հնդեւրոպական տարր [ արիւն ]: 4- Ուրարտացիները ե՞րբ կը տիրեն Հայաստանի :

5- ժԲ—Բ. դարերուն [ Բ. Ա. ] Հայաստան քանի՞ մասերու կը բաժնուէր: 6- Ո՞ւր կը գտնուէին Նայիրին և Ուրարտուն :

**ՀՐԱՀԱՆԻ**

Գծել Ուրարտուի քարտէսը :

**ԱՂԲԻՐ**

Ուրարտացիներու ծագումը. — Պրոֆ. Ա. Խաչատրեան, Հայաստանի Սեպ. Շրջ.ի Պատմ., էջ 247—264, 272, 274—284, քաղուածաբար :



**Դ. Դ Ա Ս**

**ՈՒՐԱՐՏՈՒԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ**

Արամէ (860—843 Բ. Ա.)

Ուրարտացի քաջ թագաւոր մը, Արամէ անունով, 860 թուին (Բ. Ա.) հիմնեց զօրաւոր թագաւորութիւն մը: Արամէէն առաջ Ուրարտուն բաժան - բաժան եղած էր բազմաթիւ իշխանիկներու միջև: Արամէ միացուց զանոնք և կազմեց միացեալ թագաւորութիւն մը: Արամէ եղաւ հիմնադիրը Ուրարտական տէրութեան: Անոր մայրաքաղաքն էր Արգասկուն:

Արամէի ժամանակ աշխարհի ամենէն հզօր ու աշխարհակալ տէրութիւնը Ասորեստանն էր, որ կը գտնուէր Ուրարտուի հարաւային կողմը: Ասորեստան-

ցիները անգութ էին և բռնակալ: Անոնք տիրած էին իրենց շրջակայ ժողովուրդներու վրայ և զանոնք կը նեղէին չարաչար: Ասորեստանցիները միշտ կը յարձակէին Ուրարտուի վրայ, կ'աւերէին երկիրը և ծանր սուբք կ'առնէին ժողովուրդէն:

Արամէ հայրենասէր և ազատասէր թագաւոր մըն էր: Անիկա չէր ուզեր որ իր հայրենիքը ոտնակոխ ըլլայ Ասորեստանցիներէն: Արամէ անգաղար կռուեցաւ Ասորեստանցիներու դէմ և քաջաբար պաշտպանեց իր սիրելի հայրենիքը:

## ԱՐԱՄԷ ԵՒ ՍԱՂՄԱՆԱՍԱՐ Բ.

Արամէի ժամանակ Ասորեստանի թագաւորն էր Սաղմանասար Բ.: Անիկա չէր ուզեր որ իր երկրին հիւսիսը կաղմուի զօրաւոր թագաւորութիւն մը:



Սաղմանասար Բ. կ'առօաւէ Հայաստանի վրայ

Սաղմանասար Բ. պատրաստեց իր բանակը և երեք անգամ արշաւեց Ուրարտուի վրայ՝ Արամէի դէմ կռիւ ընելու: Անիկա աւերեց բազմաթիւ քաղաքներ և կանգնեց յաղթութեան կոթող, որուն վրայ հպարտութեամբ այսպէս գրեց իր յաղթութիւնները.

«Ուրարտացի Արամէն զարհուրեցաւ զէնքերուս ոյժէն, լքեց իր քաղաքը և փախաւ Աղզուրի լեռան վրայ: Անոր ետեւէն բարձրացայ լեռան վրայ, ուր սաստիկ պատերազմ մղեցի: Յաղթեցի Արամէի զինուորներէն

Ուրարացի ազգիկներ



Կը պատսպանեն իրենց հայրենիքը

3400 հոգիի: Գրաւեցի անոր բանակատեղին: Առի եւ տարի անոր մարտակառքերը, ձիաւորները, ձիերը, ջորիներն ու հարստութիւնները: Արամէ բարձրացաւ դժուար լեւան մը վրայ՝ ազատելու համար իմ ձեռքէս: Իմ ահաւոր ոյժովս վայրի ցուլի մը պէս՝ ոտնակոխ ըրի իր երկիրը և աւերակ դարձուցի իր քաղաքները: Արգասկուն աւերեցի, քանդեցի, հրով այրեցի և անոր դրան առջև կառափներէ կոթող կանգնեցի: Շատերը ողջ-ողջ կախեցի գերաններէ, իսկ ուրիշները դամեցի գերաններու բոլորտիքը՝ ցիցերու վրայ... »

Սաղմանասար Բ. կը չափազանցէ իր այս արձանագրութեան մէջ: Անիկա այդպէս դիւրաւ չկրցաւ յաղթել Արամէի, այլ կրեց շատ դժուարութիւններ: Ասորեստանի թագաւորները իրենք զիրենք շատ կը գովեն և գոռոզարար կը խօսին իրենց յաղթանակներու մասին: Եթէ Արամէի յաղթել դիւրին ըլլար, Սաղմանասար ինչո՞ւ երեք անգամ կոռելու պիտի երթար անոր դէմ :

Արամէ քաջ թագաւոր մը եղաւ: Անիկա կազմակերպեց բաժան-բաժան եղած Ուրարտուն եւ կրցաւ իր հայրենիքը պատսպանել հրգոր Ասորեստանի դէմ: Արամէ Ուրարտացի ժողովուրդին սուրբացուց սիրելի ազատութիւնը ու կռուիլ անոր համար:

Պէտք չէ մոռնալ Արամէի անունը:

**ԱՆՑԱՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՌԻՐ**

Իշխանիկ, միացեալ թագաւորութիւն, հիմնադիր, աշխարհա-  
կալ, բռնակալ, յաղթութեան կոթող, զարհուրեցաւ, քանակատեղի,  
մարտակառթ, կառափ :

**ԸՆԴՆԱԾՆՆԵՐԻ ԿԷՏՆԻ**

1- Ներկայացնել Ուրարտուն Արամէէ առաջ, իբրև կոտո-  
րակուած երկիր մը: — Արամէի գործը եղաւ հիմնել **ԿԵԿՐՈՑԱ-**  
**ՃԻԳ** իշխանութիւն մը :

2- Խօսիլ Ասորիստանցիներու աշխարհակալութեան, անոնց  
զրաւումներուն, անգթութիւններուն եւ զիւուորական ոյժին մա-  
սին :

3- Վեր առնել Արամէի նկարագիրն ու նպատակը եւ զայն  
բաղդատել Հայոց պատմութեան նման տիպարներուն հետ (Հայկ,  
Արամ, Արտաշէս եւ այլն : )

Շեշտել հայ ժողովուրդի ազատութեան տենչը :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Ո՞վ հիմնեց Ուրարտական թագաւորութիւնը: 2- Արամէէ  
առաջ Ուրարտուն ի՞նչ վիճակի մէջ կը գտնուէր: 3- Խօսէ՛  
Ասորիստանցիներու մասին եւ ըսէ՛ թէ անոնք ի՞նչ ծրագիր ունէին  
Ուրարտուի մասին: 4- Ինչո՞ւ պիտի ուզէիր Արամէն սիրել: 5-  
Պատմէ՛ Սաղմանասար Բ-ի կռիւը Արամէին հետ: 6- Սաղմանասար  
Բ. ի՞նչ բան կը պատմէ իր արձանագրութեան մէջ: 7- Անկա  
ռուրորովին ճիշդ կը խօսի՞: 8- Արամէի դերը :

**ՀՐԱՀԱՆԻ**

Թագաւոր մը ե՞րբ աօխարհակալ կը կոչուի: — Ինչո՞ւ  
համար թագաւորները աշխարհակալութիւն կ'ընէին :



19346  
A 34129

## Ե. Դ Ա Ս

**Սարգուր Ա.** (835—820 Ք. Ա.)

Արամէի յաջորդներուն մէջ նշանաւոր եղաւ Սարգուր Ա. (835—820 Ք. Ա.): Անիկա շինեց Վան քաղաքը, Բղնունեաց Լիճի արեւելեան եզերքին վրայ: Սարգուր Ա. Վանի մէջ շինեց շէնքեր ու մեհաններ: Կանգնեց նաև սեպագիր արձանագրութիւններ, որոնց մէջ պատմեց իր գործերը: Սարգուր Ա. եղաւ շինարար թագաւոր մը:

Ատորեստանի Սաղմանասար Բ. թագաւորը յարձակեցաւ Սարգուր Ա. ի վրայ, որ, սակայն, կրցաւ ինքզինք պաշտպանել անոր դէմ:

**Մենուաս Ա.** (800—780 Ք. Ա.)

Սարգուր Ա. ի յաջորդներէն նշանաւոր եղաւ Մենուաս Ա. (800—780 Ք. Ա.), որ նախապէս իշխեց որպէս գործակից իր հօր՝ ծեբունի Իսպուլնի: Հօրը մահէն ետք, 800 թուին (Ք. Ա.), թագաւոր եղաւ:

Մենուաս Ա. քաջ զօրավար մը եղաւ: Անիկա զօրացուց Ուրարտուի բանակը և գրաւեց Ուրարտուի շրջակայ երկիրները: Ուրարտու ընդարձակուեցաւ ու մեծցաւ անոր ժամանակ:

Մենուաս Ա. կուսեցաւ Ատորեստանի դէմ և անկէ հողեր գրաւեց: Մենուաս Ա. իր գրաւած երկիրներուն հարստութիւնները փոխադրեց Վան:

Մենուաս Ա. եղաւ շինարար թագաւոր մը: Ընդարձակեց Վան քաղաքը: Շինեց Վանի մեծ ջրմուղը, որ հսկայ գործ մըն է և մինչև հիմա կանգուն մնացած է: Անիկա կանգնեց անհամար արձանագրութիւններ, որոնց մէջ պատմեց իր յաղթանակները:

Մենուաս Ա. եղաւ աշխարհակալ և շինարար թագաւոր մը:



**ՌԱՅԱՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՈՍԻ**

Բզուռնեաց Լիճ, մեհան, գործակից, ջրմուղ :

**ԸՆԴՈՒՄՆԵՆԻ ԿԷՏՈՒ**

1- Ուրարտուի թագաւորները եղած են **օփուար** եւ ժողովուրդի օգտին ծառայող թագաւորներ: — Ըսել թէ ի՞նչ բաներ շինած են Ուրարտուի թագաւորները :

2- Բացատրել թէ թագաւորները ինչո՞ւ գործակիցներ կ'ունենան :

3- Նկարագրել Վանը (ղիրթը, հնութիւնը, ջրմուղը եւայլն):

**ՀԱՐՅԱՐԱՆ**

1- Պատմէ՛ Սարգուր Ա.ի կատարած գործերը :

2- Պատմէ՛ Մենուաս Ա.ի կատարած գործերը :



**Զ. Դ Ա Ս**

**Արգիսիս Ա. (780—755 Ք. Ա.)**

Մենուաս Ա.ի յաջորդեց իր որդին **Արգիսիս Ա. (780—755 Ք. Ա.)**: Արգիստիս Ա. եղաւ Ուրարտուի ամենէն զօրաւոր թագաւորը :

Արգիստիս Ա. երբ նոր թագաւոր եղած էր, Ուրարտուի բոլոր նահանգներուն մէջ տեղի ունեցան ապստամբութիւններ: Արգիստիս Ա. տասնըջորս տարի կռուեցաւ և յաղթեց բոլոր ապստամբներուն: Ուրարտուն ամբողջովին հնազանդեցաւ Արգիստիսի :

Արգիստիս Ա., այս յաղթանակներէն ետք, պատրաստուեցաւ կռուելու Ուրարտուի մեծ թշնամիին՝ Ասորեստանի դէմ: Անիկա 761 թուին (Ք. Ա.) հզօր բանակով մը յարձակեցաւ Ասորեստանի Սաղմանասար Գ. թագաւորին վրայ, յաղթեց անոր և գրաւեց Ասորեստանի հիւսիսային մասը: Յետոյ յարձակեցաւ Կապադովկիոյ վրայ և գրաւեց զայն: Արգիստիս Ա. իր այս գրաւած երկիրներէն 215.000 գերի, հարուստ աւար և 500.000 եղներ ու ոչխարներ բերաւ Վան մայրաքաղաքը, որ մեծ և վաճառականական քաղաք մը դարձաւ :

Արգիստիս Ա. աշխարհակալ թագաւոր մը եղաւ  
և ընդարձակեց իր երկիրը : Անիկա իր բոլոր գործերը  
պատմեց արձանագրութեան մը մէջ, զոր կանգնեց  
Վանի ժայռերուն մէջ :

### Սարգուր Բ. (755—730 Բ. Ա.)

Արգիստիս Ա.ի յաջորդեց իր որդին Սարգուր  
Բ. : Սարգուր Բ. երբ գահ բարձրացաւ, Ուրարտուի  
բոլոր արքայիկները ապստամբեցան : Սարգուր Բ.  
կռուեցաւ և յաղթեց բոլորին :

Սարգուր Բ. յետոյ յարձակեցաւ Ասորիքի վրայ  
և գրաւեց զայն :

Սարգուր Բ.ի ժամանակ Ասորեստանի թագաւորն  
էր Թագղաթ-Փաղասար Գ., որ զօրաւոր թագաւոր  
մըն էր և կ'ուզէր յաղթել Սարգուր Բ.ի : Թագղաթ-  
Փաղասար 743 թուին կռուեցաւ Սարգուր Բ.ի հետ և  
յաղթեց անոր :

Սարգուր Բ. պատրաստութիւններ տեսաւ երկ-  
րորդ անգամ կռուելու Ասորեստանի դէմ : Ասոր վրայ,  
Թագղաթ-Փաղասար, 735 թուին (Բ. Ա.) յարձակե-  
ցաւ Ուրարտուի վրայ, գրաւեց Վան քաղաքը և բազ-  
մաթիւ զերիններ ու աւարներ տարաւ : Սարգուրի երկ-  
րորդ պարտութենէն ետք՝ Ուրարտուի հարաւային  
մասը ինկաւ Ասորեստանի իշխանութեան տակ :



Պերի ինկած Ուրարտացիներ

**ԲԱՅԱՏՐԵԼԻ ԲԱՌԵՐ**

Նահանգ, ապստամբութիւն (ինչո՞ւ), վաճառականական ցաղաք, վանայ ժայռերը, Ասորիք :

**ԸՆԴՈՒԱՅՆՆԵԼԻ ԿԷՑ**

Դահակալութեանց ժամանակ սովորաբար ապստամբութիւններ տեղի կ'ունենան :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Ի՞նչ տեսակ թագաւոր մը եղաւ Արգիստիս Ա. : 2- Ի՞նչ պատահեցաւ Ուրարտուի մէջ, երբ ան նոր էր գահ բարձրացեր :

3- Պատմէ՛ Արգիստիս Ա.ի գրաւումները :

4- Ի՞նչ պատահեցաւ Ուրարտուի մէջ, երբ Սարգուր Բ. նոր էր գահ բարձրացեր : 5- Պատմէ՛ Թագղաթ-Փաղասար Գ.ի կռիւները Սարգուր Բ.ի հետ : 6- Սարգուր Բ.ի պարտութենէն ետք՝ Ուրարտու ի՞նչ վիճակի ենթարկուեցաւ :

**ՀՐԱՀԱՆԳ**

Յոյց տայ կապաղովկիան եւ Ասորիքը՝ քարտէսի վրայ :



**Է. Դ Ա Ս**

**Ռուսաս Ա. (730—714 Բ. Ա.)**

Սարգուր Բ.ի յաջորդեց Ռուսաս Ա., որուն ժամանակ Ուրարտուն շատ տկարացած էր՝ Սարգուր Բ.ի պարտութեան պատճառաւ : Ռուսաս Ա. աշխատեցաւ Ուրարտուն զօրացնել : Անիկա նախ կռուեցաւ Ուրարտուի ապստամբ արքայիկներու հետ եւ յաղթեց անոնց . յետոյ ամրացուց վան մայրաքաղաքը :

Ռուսաս Ա.ի ժամանակ Ասորեստանի թագաւորն էր Սարգոն, որ նշանաւոր զօրավար մըն էր եւ կ'ուզէր տիրել իր երկրի դրացի բոլոր ժողովուրդներուն վրայ : Ռուսաս Ա. հասկցաւ թէ Սարգոն պիտի յարձակի նաեւ Ուրարտուի վրայ : Անիկա խելացի եւ քաղաքագէտ թագաւոր մըն էր . զգաց թէ պիտի չըկրնայ առանձինն դիմադրել Սարգոնի . ուստի գաշնակից եղաւ Փոքր Ասիոյ ժողովուրդներու հետ , միաս-

նաքար կռուելու Ասորեստանի դէմ, որ բոլորին թշնամին էր: Այդ զաշնակից ժողովուրդներն էին Հիթիթները, Մոսքերը և Ուրարտացիները:

Սարգոն հասկցաւ թէ այս զաշնակից ազգերը մեծ վտանգ մը պիտի դառնան Ասորեստանի համար: Ուտի առանց ժամանակ կորսնցնելու առանձինն յարձակեցաւ անոնց վրայ: Նախ կռուեցաւ Հիթիթներու հետ. պատերազմը տեղի ունեցաւ 717 թուին (Ք. Ա.): Սարգոն յաղթեց Հիթիթներու և գրաւեց անոնց Կարկեմիտ մայրաքաղաքը (այժմ Ճարապոլու): Հիթիթները այս պարտութենէն ետք բոլորովին կործանեցան: Սարգոն կռուեցաւ նաև Մոսքերու հետ և յաղթեց անոնց ալ:

Սարգոն Հիթիթներու յաղթելէ ետք յարձակեցաւ Ուրարտուի Ռուսաս Ա. թագաւորին վրայ, որ իր մեծագոյն թշնամին էր: Պատերազմը տեղի ունեցաւ 714 թուին, Ուաւս լեռան վրայ: Ռուսաս Ա. չարաչար պարտուեցաւ և փախաւ: Սարգոն իր արձանագրութեան մէջ այսպէս կը նկարագրէ այդ կռիւը.

«Կռիւը տեղի ունեցաւ Ուաւս մեծ լեռան վրայ, որ ամպերով ծածկուած է և գլուխը բարձրացուցած երկինքի մէջ: Այդ լեռան վրայէն կենդանի էակ մը անգամ անցած չէր և ոչ ոք տեսած էր անոր ճամբան: Նոյնիսկ երկինքի թևաւոր թռչունը չէր անցներ անոր վրայէն: Զօրաւոր նիզակի մը պէս ինկայ Ռուսասի վրայ, յաղթեցի անոր և փախցուցի: Մեծ կոտորած ըրի անոր բանակին մէջ: Անոր ռազմիկներուն դիակները գարիի պէս սփռեցի և անոնցմով լեռներու անցքերը լիցուցի: Ռուսաս իր կեանքը ազատելու համար հեծաւ ձիու մը վրայ և փախաւ լեռներու մէջ:»

Սարգոն, Ռուսասի յաղթելէ և դայն լեռներու մէջ փախցնելէ ետք, մտաւ Մուսասիք քաղաքը, ուր կը գտնուէր Խալդի աստուածը, որ Ուրարտացիներու մեծ կուռքն էր: Սարգոն բազմաթիւ գերիներ և անհամար հարստութիւն վերցուց Մուսասիք քաղա-

քէն: Անիկա մտաւ Խալդի աստուծոյ մեհեանը և կողոպտեց զայն և նոյնիսկ Խալդի աստուծոյ կուռքը զերցուց և գերի տարաւ Ասորեստան, ինչ որ մեծ անպատուութիւն մըն էր :

Ասորեստանցիները կը կողոպտեն Խալդի աստուծոյ մեհեանը



Երբ այս դժբախտութիւնները տեղի կ'ունենային, Ռուսաս Ա. փախստական կը գտնուէր լեռներու մէջ: Մարդիկ եկան և անոր պատմեցին այդ պատահարները և Սալզի աստուծոյ գերի տարուելը: Ռուսաս Ա. ինկաւ խոր տխրութեան և յուսահատութեան մէջ: Անիկա բոլոր այդ աղէտներէ ետք, երբ իմացաւ Սալզի աստուծոյ գերի իջնալը, այլևս չկրցաւ սովալ վշտի: Ռուսաս նախ իր քովը գտնուող մեծամեծներուն յուզուած պատմեց պատահած աղէտներուն մեծութիւնը և յետոյ իր գօտիէն հանեց գաշոյնը և ըստ պաննեց ինքզինք :

Այսպէս մեռաւ Ուրարտուի հայրենասէր և պատուախնդիր թագաւորը, որուն մահէն ետք Ուրարտուն շատ սկարացաւ և դիմեց զէպի կործանում :



### ՌԱՅԱՏՐՈՒԹ ԲԱՌՈՒՄ

Ամրացնել, քաղաքագէտ, պատուախնդիր :

### ԸՆԴԼԱՅՆՈՒԹ ԿԷՏՈՒ

1- Ի՞նչ տեսակ թագաւորները կը կոչուին դիւանագէտ կամ քաղաքագէտ: — Ներկայացնել Ռուսաս Ա.ը իրբե քաղաքագէտ արքայ եւ անոր կազմած զաշնակցութիւնը իրբե քաղաքագիտական լուրջ գործ ընդդէմ Ասորեստանի :

2- Հիթիթներու թագաւորութիւնը երկու մասի կը բաժնուի. ա) Հիւսիսային Հիթիթներու երկիր, որ կը գտնուէր մօտաւորապէս Գապադովկիոյ եւ անոր շրջականներու մէջ եւ որ կործանեցաւ, ինչպէս տեսանք, Փռիւզ-Մոսքերու արշաւանքով՝ 1200 թուին (Ք. Ա.): բ) Հարաւային Հիթիթներու երկիր, որ կը գտնուէր Գիլիկիոյ եւ հիւսիսային Սիւրիոյ մէջ, մայրաքաղաք ունենալով Կարկեմիօր (Ճարապլուս): Հարաւային Հիթիթները վերջնական հարուածը կրեցին Ասորեստանի Սարգոն թագաւորէն՝ 717 թուին [Ք. Ա.] եւ այսպիսով անհետացան պատմութեան թատերաբեմէն: Ռուսաս Ա. բնականաբար զաշնակիցն էր հարաւային Հիթիթներու :

Իսկ Մասիերը, որոնք՝ ինչպէս տեսանք՝ Փռիւզ-Մոսքերու հետ մտան Փոքր Ասիա, կը բնակէին Սիւրիոյ հիւսիսը եւ Հայաստանի հարաւ-արեւմտեան կողմը :

3- Ընդգծել Ռուսասի խոր յուսահատութիւնը եւ անձնապանութիւնը՝ Խաղի մեծ աստուծոյ գերի տարուելով. — Անոր անձնապանութիւնը ճշմարիտ հայրենասիրութեան եւ պատուա-

խնդրութեան ապացոյց մըն է :

4- Մուսասիրը սրբազան քաղաք մըն էր: — Բացատրել թէ ի՞նչ է սրբազան քաղաքը, յիշելով օրինակներ :

**ՀԱՐՅԱՐԱՆ**

1- Ռուսաս Ա. ի՞նչ գործեր կատարեց երբ նոր գահ բարձրացաւ: 2- Ռուսասի ժամանակ ո՞վ էր Ասորեստանի թագաւորը: 3- Ի՞նչ ծրագիր ունէր Սարգոն: 4- Ռուսաս ի՞նչ ըրաւ իր հայրենիքը Ասորեստանի դէմ պաշտպանելու համար: 5- Սարգոն ինչո՞ւ կռուեցաւ Հիթիթներու եւ Մոսքերու հետ: 6- Պատմէ՛ Սարգոնի մղած կռիւը Ռուսասի դէմ: 7- Ո՞ւր եւ ե՞րբ տեղի ունեցաւ կռիւը: 8- Սարգոն ի՞նչ կը պատմէ իր արձանագրութեան մէջ: 9- Պատմէ՛ Մուսասիր քաղաքի գրաւումը: 10- Ի՞նչ ըրաւ Ռուսաս, երբ իմացաւ թէ գերի տարուած է Խալդի աստուածը: 11- Ինչո՞ւ: 12- Պիտի ուզէի՞ր Ռուսասը դնել քու սիրած թագաւորներուդ անուններուն քով :

**ՀՐԱ ՀԱՆԻ**

1- Յոյց-տալ քարտէսի վրայ հարաւային Հիթիթներու եւ Մոսքերու երկիրները, ինչպէս նաեւ Մուսասիրի եւ Ուաւս լեռան տեղերը :

2- Շարադրութիւն մը գրել հետեւեալ երկու նիւթերէն մէկուն մասին .

ա- Ռուսասի կազմած դաշնակցութիւնը, իբրեւ խելացի թագաւորի գործ: — Ռուսաս Ա. ինչո՞ւ դաշնակից եղաւ շրջակայ ազգերու հետ :

բ- Ռուսասի մահը ( խորհրդածութիւններ ) :



**Ը. Դ Ա Ս**

**ա- ՈՒՐԱՐՏՈՒԻ ՏԿԱՐԱՑՈՒՄԸ**

Ռուսաս Ա. ի դժբախտ մահէն ետք՝ Ուրարտուն սկսաւ տկարանալ և դիմել դէպի կործանում: Ռուսասի յաջորդեց Արգիսիս Բ., որ աշխատեցաւ հաշտ ապրիլ Ասորեստանցիներուն հետ: Անիկա Ասորեստանի թագաւորին նուէր դրկեց ընտիր ձիեր, որպէս բարեկամութեան նշան :

Արգիտախա Բ.ի յաջորդեց Ռուսաս Բ., որուն օրով Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին երկու որդիները սպաննեցին իրենց հայրը և փախան Ուրարտու :

Ռուսաս Ա.ի մահէն ետք ուրիմն Ուրարտուի թագաւորները տկարացան և այլևս չկրցին կոռել Ասորեստանի դէմ: Անոնք ամփոփուեցան Ուրարտուի սահմաններու մէջ և զբաղեցան շինարարութեամբ. — Շինեցին տաճարներ ու պալատներ, որոնց մնացորդները մինչեւ հիմա կ'երևին Հայաստանի մէջ: Ուրարտուի վերջին թագաւորները ատեն-ատեն թանկագին ընծաներ և ընտիր ձիեր կը զրկէին Ասորեստանի թագաւորներուն, անոնց բարեկամութիւնը շահելու համար :

## Բ- ՌԻՐԱՐՏՈՒԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ուրարտական թագաւորութիւնը կործանեցաւ է. դարուն (Ք.Ա.): Անոր կործանման պատճառներն էին.

1- Ասորեստանի հզօր թագաւորներուն դէմ Ուրարտուի թագաւորները մղեցին երկարատև ու ծանր պատերազմներ, որոնք շատ տկարացուցին երկիրը :

2- է. դարուն (Ք.Ա.), Կովկասեան Լեռներէն անցնելով, ատեն-ատեն Փոքր Ասիա արշաւեցին հնդեւրոպական բարբարոս ցեղեր, որոնք մեծ աւերներ ու կոտորածներ կատարեցին Ուրարտուի մէջ: Այդ յարձակող ցեղերն էին **Սկիւթացիները, Կիմերները և Սաղերը**, որոնք ուժասպառ ըրին Ուրարտուն :

3- Այս բարբարոս ցեղերու արշաւանքէն ետք, վերջապէս հնդեւրոպական Արմէնները յարձակեցան Ուրարտուի վրայ, որ արդէն շատ տկարացած էր :

Արմէնները է. դարուն (Ք.Ա.) մտան Ուրարտու և կործանեցին Ուրարտական թագաւորութիւնը :

Ահա այս պատճառներով կործանեցաւ և վերջացաւ Ուրարտական թագաւորութիւնը :

Ուրարտացիներու երկիրը զրացի էր Ասորեստանի, որ անգուժեալ և բռնակալ աէրուժիւն մըն էր և կ'ազէր բոլոր ազգերը իրեն լուծին տակ առնել: Ուրարտացիները ազատասէր էին և քաջամարտիկ: Անոնք չուզեցին մտնել Ասորեստանի լուծին տակ և տեսական կերպով պայքար մղեցին անոր դէմ: Ուրարտացիները սպառեցան՝ ազատութեան համար կռիւներ մղելով: Անոնք զոհուեցան իրենց ազատութեան համար: Ասոր համար պիտի սիրենք և պիտի ընդունինք զիրենք իբրև մեր արժանաւոր նախահայրերը :

### ՌԱՅԱՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՌՆԵՐ

Ռարարոս, քաջամարտիկ, նախահայր :


### ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԿԷՏՆԵՐ

1- Նշանաւոր էին Հայաստանի ծիրը, որոնք նուէր կը զըրկուէին օտար թագաւորներու :

2- Է. դարուն (Ք. Ա.) հնդեւրոպական բազմաթիւ ազգեր խուժեցին Փոքր Ասիա եւ մեծ տակնուվրայութիւններ յառաջացուցին :

### ՀԱՐՑԱՐԱՆ

1- Ռուսաս Ա. ի մահէն ետք Ուրարտուն ի՞նչ վիճակի ենթարկուեցաւ : 2- Ի՞նչ ըրաւ Արգիտիս Բ. : 3- Արգիտիս Բ. ի յաջորդին՝ Ռուսաս Բ. ի ժամանակ որո՞նք փախստական եկան Ուրարտու : 4- Ռուսաս Ա. ի յաջորդները ի՞նչ գործերով զխաւորարար զբաղեցան : 5- Ե՞րբ կործանեցաւ Ուրարտական թագաւորութիւնը : 6- Յիշէ՛ միառմի Ուրարտուի թագաւորութեան կործանման պատճառները : 7- Ի՞նչ նպատակով Ուրարտացիները տեւական կռիւ մղեցին Ասորեստանի դէմ : 8- Պ՛արժէ՞ սիրել զիրենք :



## Թ . Դ Ա Ս

### ա- ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐՈՒ ԿՐՕՆԸ

Ուրարտացիները կը պաշտէին բազմաթիւ աստուածներ . անոնք բազմաստուածեան էին : Իրենց բոլոր աստուածները արական էին : Ուրարտուի իւրաքանչիւր քաղաքը, գիւղը և նոյնիսկ տունը ունէր իր պաշտպան աստուածը : Աստուածները կը պաշտպանէին այն մարդիկը, որոնք զոհ կը մատուցանէին իրենց :

Ուրարտացիներու գլխաւոր երեք աստուածներն էին Խալդի, Տէխսպաս և Արդիիւս, որոնք երբորդութիւն մը կը կազմէին : Ուրարտացիներու ամենամեծ աստուածն էր Խալդին, որ Ուրարտուի պաշտպանն էր : Ուրարտուի բնակիչները Խալդի աստուծոյ անունով իրենք զիրենք կը կոչէին Խալդիներ : Խալդի աստուածը մասնաւորաբար կը պաշտպանէր հայրենիքին համար պատերազմողները :

Տէխսպասը երկինքի աստուածն էր, իսկ Արդինիս՝ արեւ - աստուած : Ուրարտացիներու իգական միակ աստուածն էր Շարիս, զոր Ասորեստանցիներէն փոխ առած էին :

Ուրարտացիները իրենց աստուածներուն կը զոհէին եզներ, ոչխարներ, ձիեր : Իսկ իբրեւ նուէր կը բերէին անուշահոտ իւզեր, խունկ, գինի, միս և այլն : Աստուածներու ծառայողները քուրմերն էին, որոնք մեծ թիւ մը կը ներկայացնէին և կազմած էին առանձին դասակարգ : Քրմապետը թագաւորն էր : Ուրարտացիները իրենց աստուածներուն համար կը շինէին մեհեաններ, ուր կը դնէին անոնց արձանները : Աստուածներու պատկերը կը ներկայացուէր մարդու մարմնով և կենդանիի գլուխով : Մուսասիրը սրբազան քաղաք էր, ուր կը գտնուէր Խալդի աստուծոյ գեղեցիկ մեհեանը, զոր աւերեց Ասորեստանի Սարգոն թագաւորը :

## Բ- ՈՒՐԱՐՏԱՑԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ուրարտացի ժողովուրդը բաժնուած էր երեք դասագարգի. ա- Քուրմեր, բ- Ազնուականներ եւ գ- Հասարակ ժողովուրդ: Քուրմերը կը կատարէին կրօնական պաշտամունք. անոնք զարգացած էին: Ազնուականները շատ հարուստ էին. անոնք տէրն էին երկրի հողերուն ու հարստութիւններուն: Զինուորը լլալու իրաւունքը կը պատկանէր ազնուականներուն: Իսկ հասարակ ժողովուրդը աղքատ էր եւ կ'աշխատէր ի հաշիւ ազնուական դասակարգի: Ամբողջ երկրին բացարձակ տէրը թագաւորն էր, որ կը բնակէր շքեղ պալատի մէջ:

Ուրարտացիները ունէին բազմաթիւ փոքրիկ քաղաքներ, որոնք պարիսպներով եւ աշտարակներով ամրացուած էին: Խիտ բնակչութիւն մը կ'ապրէր Ուրարտուի մէջ:

## Գ- ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Ուրարտացիները ունեցած են բարձր քաղաքակրթութիւն մը: Անոնք շատ յառաջդիմած էին արհեստներու եւ արուեստներու մէջ:

Ժողովուրդին գլխաւոր երկու զբաղումներն էին երկրագործութիւնն ու անասնաբուծութիւնը: Առատօրէն ցորեն կ'արտադրէին: Իսկ կենդանիներէն կը բուծանէին կովը, ոչխարը, ձին, ջորին եւ այլն:

Ուրարտացի ժողովուրդը մեծ ճարտարութիւն ցոյց տուած է հեռեկեալ արհեստներու եւ արուեստներու մէջ:

1- Մեծաղագործութիւն. — Ուրարտուի մէջ առատօրէն կը գտնուէր պղինձը, որով Ուրարտացի պղնձագործները կը շինէին ընտիր ամաններ ու կաթասներ: Ուրարտացի մետաղագործները երկաթով ճարտարօրէն կը շինէին զանազան գործիքներ ու զէնքեր: Իսկ Ուրարտացի ոսկերիչները արծաթի եւ ոսկիի

վրայ կը գծէին սքանչելի և նուրբ նկարներ: Ուրարտացիները նշանաւոր սակերիչներ էին: Վան քաղաքի հայ վարպետ սակերիչները իրենց արուեստը ժառանգած են Ուրարտացիներէն :


2- ՃԱՐՏԱՐԱՐԱԿԵՏՈՒԹԻՒՆ. — Ուրարտուի մէջ շատ զարգացած էր ճարտարապետութիւնը: Մեր երկիրը հարուստ էր ընտիր քարերով, որով Ուրարտացիները շինած են գեղեցիկ պալատներ ու շէնքեր: Ուրարտացի որմնադիրները գոյնզգոյն քարերով գիտէին զարդարել իրենց շինած տունները: Գիտունները մասնաւորաբար Վան քաղաքի մէջ պեղումներով երևան հանած են ուրարտական շէնքեր, որոնք իրենց գեղեցկութեամբ կը զարմացնեն այցելուները :

Ուրարտացիները իրենց հողերը սոռգելու համար շինած են խոշոր ու զարմանալի ջրանցքներ ու ջրմուկներ, որոնք մինչև հիմա կանգուն մնացած են: Նշանաւոր է Վանի մեծ ջրմուկը, զոր շինած է Մենուաս Ա. թագաւորը :

3- ԿԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. — Ուրարտացիները իբրև թուղթ կը գործածէին կաւը, որուն վրայ կը զըրէին իրենց սեպագիր տառերով: Ուրարտացիները շինած են կաւէ գեղեցիկ սափորներ, կուժեր ու կարասներ, որոնք նկարազարդուած են յաճախ :

Ուրարտացիները զարգացած էին նաև ուսայնանկութեան, գունաւոր կերպասներ հիւսելու արհեստին ու կահագործութեան մէջ :

Ուրարտացիները ճարպիկ վաճառականներ էին: Անոնք իրենց արտադրութիւնները կը վաճառէին հեռաւոր երկիրներու մէջ: Ապրանքներու փոխադրութիւնը կը կատարէին եփրատ և Տրգրիս գետերու միջոցաւ: Ուրարտացիները ուռիէ կը շինէին լաստեր կամ նաւեր, որոնք կաշիով պատուած էին: Այս լաստերով կը նաւարկէին մենչև Բաբելոն, ուր կը ծախէին իրենց ապրանքը և յետոյ գետն ի վեր գրաստներով կը վերադառնային իրենց հայրենիքը :



## Մեհենագիր (Հիթիտական)

1.	26.	51.
2.	27.	52.
3.	28.	53.
4.	29.	54.
5.	30.	55.
6.	31.	56.
7.	32.	57.
8.	33.	58.
9.	34.	59.
10.	35.	60.
11.	36.	61.
12.	37.	62.
13.	38.	63.
14.	39.	64.
15.	40.	

## Սեպագիր (Ասորական)

**Ուրարտացիներու Գիրք.** — Ուրարտացիները կը գործածէին սեպագիրը, զոր սորվեցան Ասորեստանցիներէն: Ամենէն աւելի Ուրարտացի քուրմերը հմուտ էին սեպագրութեան: Ուրարտուի թագաւորները իրենց քաջագործութիւններն ու շինարարութիւնները սեպագիր տառերով արձանագրած են ժայռերու վրայ :

Հին ժողովուրդներու գործածած դրին մէկ ուրիշ տեսակն էր պատկերագիրը . կամ մեհենագիրը , զոր Ուրարտացիները քիչ անգամ կիրարկած են :



**ԲԱՅԱՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՌՆԻՐ**

Բազմաստուածեան, պաշտպան աստուած, քուրմ, կրօնական պաշտամունք, ճարտարութիւն, մետաղագործութիւն, ճարտարպետութիւն, ջրանցք, կաւագործութիւն, սառայնանկութիւն, կահագործութիւն, ուռի, լաստ, գրաստ :

**ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԿԷՏ**

Վերստին խօսիլ հին ժողովուրդներու գործածած երկու տեսակ գիրերու՝ մեհենագրի եւ սեպագրի մասին, բաղդատելով զանոնք իրարու հետը. ըստ 31 ըդ. էջի նկարներուն :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Ուրարտացիները քանի՞ աստուածներ կը պաշտէին : 2- իրենց աստուածները ո՞ր սեռի կը պատկանէին: 3- Ամէն քաղաք, գիւղ ու տուն ունէ՞ր իր պաշտպան աստուածը: 4- Աստուածները ե՞րբ մարդիկը կը պաշտպանէին: 5- Որո՞նք են Ուրարտացիներու զխաւոր երեք աստուածները : 6- Խօսէ՞ իր քանչիւրին մասին : 7- Ուրարտացիները իգական աստուած ունէին: 8- Ուրարտացիները ի՞նչ կը զոհէին եւ ի՞նչ նուէր կը բերէին իրենց աստուածներուն: 9- Որո՞նք կը ծառայէին աստուածներուն : 10- Ո՞վ էր քրմապետը: 11- Ուրարտացիները ո՞ր կը զնէին իրենց աստուածներուն կուռքերը: 12- Ի՞նչ ձեւով կը ներկայացնէին իրենց աստուածներուն կերպարանքը: 13- Ո՞րն էր Ուրարտացիներուն սրբազան քաղաքը :

14- Ուրարտացի ժողովուրդը քանի՞ դասակարգի բաժնուած էր: 15- Խօսէ՞ իւր քանչիւր դասակարգի մասին : 16- Ի՞նչ իրաւունք ունէր թագաւորը: 17- Խօսէ՞ Ուրարտուի քաղաքներուն եւ անոնց բնակիչներուն խտութեան մասին :

18- Ուրարտացիները ի՞նչ տեսակ քաղաքակրթութիւն մը ունեցած են: 19- Որո՞նք են Ուրարտացիներուն զխաւոր երկու զրադումները: 20- Ուրարտացիները ո՞ր արհեստներու եւ արուեստներու մէջ ճարտարութիւն ցոյց տուած են: 21- Խօսէ՛ իւրաքանչիւրին մասին: 22- Խօսէ՛ Ուրարտացիներու վաճառականութեան մասին: 23- Ի՞նչով Բաբելոն կ'երթային՝ վաճառականութիւն ընելու: 24- Հին ժողովուրդները քանի՞ տեսակ գիր կը գործածէին: 25- Ուրարտացիները ո՞ր տեսակը կը գործածէին:

### Ա.ՂԱԻԻՐՆԵՐ

**Ուրարտացիներու Բաղաճական Պատմութեան համար.** — Լէօ, Հայոց Պատմութիւն, Հտր. Առաջին, 1917, Թիֆլիս, էջ 234—249, 250—313, Հ. Յակ. Վ. Տաշեան, Ուսումն Դասական Հայերէն Լեզուի, 1920, Վիեննա, էջ 383—412, Հ. Ս. Տ. Մովսէսեան, Պատմութիւն հայոց, Ա. Հտր., 1922, Վենետիկ, էջ 74—116, Հ. Յովսէփ Վ. Սանտալճեան, Ասորիստանեան եւ Պարսիկ սեպագիր արձանագրութիւնք, 1901, Վիեննա, Ազգ. Մատեն. Թիւ Խ., Մ. Շորէք, Հայաստան, Գրդաստան եւ արեւմտեան Պարսկաստան, 1904, Վիեննա, Ազգ. Մատեն. Թիւ Ծ., Հ. Յ. Վ. Տաշեան, Հաթեր եւ Ուրարտեանք, 1934, Վիեննա: Տեսնել նաև Դօլէնսի եւ Ա. Խաչի, Գէորգ-Սեարոպի, Կարապետ Բասմաշեանի, Ստ. Պալասանեանի, Մատ. Գարագաշեանի, Kévorik Aslan-ի Հայոց պատմութեան ձեռնարկները:

**Ուրարտացիներու կրօնի եւ բաղաճակրութեան համար.** — Լէօ, Հայոց Պատմութիւն, էջ 226—230, 230—234, 299—308, Հ. Յ. Տաշեան, Ուսումն Դասական Հայերէն Լեզուի, էջ 412—417, Հ. Ս. Տ. Մովսէսեան, Պատմութիւն Հայոց, էջ 44—76:



## ԵՌԱՄՍԵԱՅ ԾՐԱԳԻՐ

### Ա- ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

\* \* \* Հայոց հնդեւրոպական նկատուելուն պատճառները:

### Բ- ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

ա— ԱՆՈՆՑ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

բ— ԳԱՂԹԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

գ— ԳԱՂԹԻՆ ՈՒՂԵԳԻՄԸ

### Գ- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԲՆԻԿՆԵՐԸ

ա— ՍՈՒԲԱՐԻՆԵՐԸ (?—2000 ք. ա.)

բ— ԽԱՐՐԻ-ՄԻՏԱՆԻՆԵՐԸ (2000—1200 ք. ա.)

գ— ՓՈՒԻԳ-ՄՈՍՔԵՐՈՒ ԵՒ ՀԻԹԻՅՆԵՐՈՒ ԳԱՂԹՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ (1200—թ. ԴԱՐ ք. ա.)

### Դ- ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐԸ (Յ. ԴԱՐ ք. ա.)

1— ԾԱԳՈՒՄԸ

2— ԵՐԿԻՐԸ

3— ԹԱԳԱՒՈՐՆԵՐ. - (միայն կարեւորները նկատի առնուած են):

I - ԱՐԱՄԷ

II - ՍԱՐԴՈՒՐ Ա.

III - ՄԵՆՈՒԱՍ Ա.

IV - ԱՐԳԻՍՏԻՍ Ա.

V - ՍԱՐԴՈՒՐ Բ.

VI - ՌՈՒՍԱՍ Ա.

Այս թագաւորներուն մղած պատերազմներն ու անոնց շինարարութիւնները :

4— ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ Է. ԴԱՐՈՒՆ [ք. ա.] ԵՒ ԱՆՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ :

5— ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐՈՒ ԿՐՕՆԸ ԵՒ ԲԱՂԱԲԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ :



## Ժ. Դ Ա Ս

### ա- ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՐՄԷՆՆԵՐՈՒ

#### ՄՈՒՏՔԸ ՈՒՐԱՐՏՈՒ

Արմէնները հնդեւրոպական ցեղ մըն էին : Անոնք, միւս հնդեւրոպական ժողովուրդներու հետ, եկան Կեդրոնական Ասիայէն : Արմէնները երկար ժամանակ բնակեցան Եւրոպայի մէջ (Աւ Մովու հիւսիսային կողմը, Դանուբ գետի հովիտին մէջ և Թրակիա) : Յետոյ ԺԲ. դարուն (Ք. Ա.) Փոքր Ասիա մտան Փոլսք-Մոսքերու հետ, որոնք նոյնպէս հնդեւրոպական ժողովուրդ մըն էին : Արմէնները բաւական ժամանակ բնակեցան Փոլսքիոյ մէջ :

Է. դարուն (Ք. Ա.) Արմէնները արեւմտեան կողմէն մտան Ուրարտու, անցնելով Եփրատ գետէն : Ուրարտացիները ուժեղ դիմադրութիւն մը ցոյց տուին նորեկ Արմէններու դէմ, բայց պարտուեցան և մտան Արմէններու իշխանութեան տակ : Արմէնները չհեռացան Ուրարտուէն, այլ հոն բնակեցան : Իրենք եղան իշխողները, մինչդեռ Ուրարտացիները դարձան հպատակ և կազմեցին հասարակ ժողովուրդը :

Հնդեւրոպական Արմէնները աստիճանաբար թափանցեցին ամբողջ Ուրարտուի մէջ : Այս թափանցումը տևեց Է. դարէն մինչև Յ. դար (Ք. Ա.) : Արմէնները Ուրարտուի նահանգներու մէջ կը մտնէին երբեմն կռիւով և երբեմն խաղաղութեամբ : Վերջապէս հնդեւրոպական Արմէնները տարածուեցան ամբողջ Ուրարտուի մէջ :

Արմէն և Ուրարտացի ժողովուրդները ընդմիշտ բնակակից եղան : Միասին ապրելով, անոնք ձուլուեցան իրարու հետ և կազմեցին մէկ ցեղ :

Հայ ազգը այս երկու ցեղերու ձուլումէն առաջ եկաւ :

Մեր լեզուն, արիւնը, գանկը, մաւմինը և սովորութիւնները թէ՛ ուրարտական են և թէ՛ ար-

մենական :

Ուրեմն մենք հաւասարապէս թէ՛ Ուրարտացի  
ենք և թէ՛ հնդկերոպական Արմէն :

### ԲԱՑԱՏՐՅԼԻ ՈՒՍՈՒՅՉԻՆ ԿՈՂՄԵ

#### Բ- ԽԱՌՆՈՒՐԴ ՑԵՂԵՐ

Տիեզերքի մէջ իսկապէս չկայ գտարիւն կամ  
անխառն ցեղ: Բոլոր ազգերը քիչ կամ շատ չափով  
խառնուած են ուրիշ ցեղի մը կամ ցեղերու հետ:

Յեղերու այս ձուլումը սակայն պէտք է ընդու-  
նիլ իբր բացասական երեւոյթ : Քաղաքակրթու-  
թիւնը զարգացած է այն ազգերու մէջ, որոնք ձու-  
լուած ցեղեր են: Օրինակ Եգիպտացիները, Հիթիթնե-  
րը, Խարրի-Միտանիները, Յոյները, Գերմանացինե-  
րը, Ֆրանսացիները խառնուած և նոյն ստեղծամենէն  
շատ զարգացած ցեղեր եղած են: Ձուլուած ցեղ ըլլա-  
լու պարագան երբեք արգելք է քաղաքակրթուելու .  
ընդհակառակը երկու ցեղերը երբ ձուլուին, յաճախ  
կ'երիտասարդանան և աւելի արագ կը սկսին քաղա-  
քակրթուիլ :

Հայերը, ինչպէս աշխարհի վրայ ունէ ցեղ,  
խառնուող ցեղ մըն են :

Մենք տեսանք որ է. դարուն Ուրարտու մանող  
հնդկերոպական Արմէնները ձուլուեցան տեղացի Ուրար-  
տացիներու հետ, որոնք իրենց կարգին ձուլուին էին  
չՈՐԱ ցեղերու՝ Սուբարիներու, Խարրի-Միտանիներու,  
Մոսքերու և Հիթիթներու :

Է. դարէն մինչև Ե. դարը (Ք. Ա.)՝ հնդկերո-  
պական Արմէնները և Ուրարտացիները միասին ապ-  
րելով ձուլուեցան իրարու հետ և առաջ բերին Հայ  
ցեղը :

Հայութեան համար օգտակար եղած է այս ձու-  
լումը, վասնզի Հայերը ժառանգած են հնդկերոպական  
Արմէններու կոռուլը և Ուրարտացիներու ուժիմու-  
թիւնը :

**ՐԱՅԱՏՐՆԼԻ ԲԱՌՆԻ**

Թափանցել, բնակակից, սովորութիւն, զտարիւն, անխառն, բացասական երեւոյթ, կորով :

**ԸՆԴԼԱՅՆՆԵՐԻ ԿԷՑ**

Բացատրել թէ ի՞նչպէս տեղի կ'ունենայ երկու ժողովուրդներու ձուլումը :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Արմէնները ո՞ր ցեղին կը պատկանին: 2- Նախապէս ո՞ր երկիրներու մէջ բնակած են: 3- Պատմէ՞ Արմէններու Ուրարտու մուտքը: 4- Արմէնները ի՞նչպէս ծուլուեցան տեղացի Ուրարտացիներու հետ: 5- Մենք ո՞ր ցեղերու ձուլումէն առաջ եկած ենք:

6- Տիեզերքի մէջ կա՞յ զտարիւն ցեղ մը: 7- Ցեղերու ձուլումը օգտակա՞ր թէ վնասակար եղած է: 8- Տո՞ւր օրինակներ: 9- Ո՞ր ցեղերու արիւնէն մաս կայ Հայոց մէջ: 10- Այս ձուլումը օգտակար եղա՞ծ է Հայերու համար :

**ՀԲԱՀԱՆԳ**

Քարտէսի վրայ ցոյց տալ Եւրոպայի այն երկիրները, ուր բնակեցան Արմէնները :

**ԱՂԲՈՒԻՐ**

Բոլոր ժողովուրդներու, ինչպէս նաեւ Հայոց խառնուրդ ցեղ ըլլալու տեսութեան մասին խօսած է Պրոֆ. Ա. Խաչատրեան «Հայաստանի Սեպագր. Շրջանի Պատմութեան մէջ», էջ 60—73, 274—284 :



**ԺԱ. Դ Ա Ս**

**ՀԱՅ ԵՒ ԱՐՄԷՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ**

Մենք երկու անուն ունինք. Հայ և Արմէն: Սկիզբէն ի վեր մենք զմեզ կոչած ենք Հայ: Օտարները ընգհանրապէս մեզ կը ճանչնան Արմէն կամ Էրմէնի անունով :

Ուրեմն երկու անուն ունի հայ ազգը, կարգ մը ուրիշ ազգերու պէս. օրինակ՝ Գերմանացիները, որոնք կը կոչուին նաև Ալլըմաններ, Քրեանացիները՝ որոնք ծանօթ են նաև Գաղղիացի անունով :

Մեր երկու անուն ունենալը ապացոյց է թէ մենք երկու ժողովուրդներէ բաղկացած ենք :

### Ա- ԱՐՄԷՆ ԱՆՈՒՆԸ

Եկուոր հնգերոպական ժողովուրդը շատ կանուխէն կը կոչուէր ԱՐՄԷՆ, երբ տակաւին Դանուբ գետէն կ'անցնէր :

Արմէն անունը հնգերոպական բառ մըն է . կազմուած է երկու արմատներէ՝ առ և մէն : Առ-ը արի բառին արմատն է և կը նշանակէ քաջ կամ արի : Մէնը կը նշանակէ մարդ . օրինակ մանուկ բառին մէջ, որ կը նշանակէ պզտիկ մարդ :

Ուրեմն Արմէն բառը կը նշանակէ արի մարդ : Մեր հնգերոպական նախնիքը քաջ և ուղմասէր էին . անոնք կը սիրէին արիութիւնը կամ քաջութիւնը : Ատոր համար իրենք զիրենք կոչած են քաջ մարդ :

### Բ- ՀԱՅ ԱՆՈՒՆԸ

Հնգերոպական Արմէններու Ուրարտու մտնելէն շատ առաջ մեր երկրին հիւսիսային մասը կը կոչուէր Հայասա : Հայասայի բնակիչները հաւանաբար կը կոչուէին «Հայ»եր : Ուրեմն Հայ անունը մենք ժառանգած ենք Հայաստանի նախաբնիկներէն :

### ԲԱՅՅՍԵՐԸ ԲԱՌՆԻ

Ընդհանրապէս, ապացոյց, եկուոր, նախնիք :

#### ՀԱՐՅԱՐԱՆ

1- Մենք քանի՞ անուն ունինք : 2- Մենք զմեզ ի՞նչ կը կոչինք : 3- Օտարները ի՞նչ անունով կը ճանչնան մեզ : 4- Օտար ազգեր ալ կա՞ն, որոնք մէկէ աւելի անուն ունենան : 5- Մեր երկու անուն ունենալը ի՞նչ բանի ապացոյց է : 6- Որո՞նք արմէն կը կոչուէին : 7- Ի՞նչ կը նշանակէ արմէն բառը : 8- Ուրկէ՞ ծագած է հայ անունը :

#### ԱՂԲԻՐՆԵՐ

Հայ անունին ծագման համար առաջ բերուած վերոյիշեալ մեկնութեան աղբիւրն է Պրոֆ. Ա. Խաչատրեանի Հայաստանի Սեպագրական Շրջանի Պատմութիւնը (էջ 41—48, 548—9) : Տեսնել նաեւ «Հանդէս Ամսօրեայ», 1933, էջ 429—32 :

## ԺԲ. Դ Ա Ս

### ՀԱՅԵՐԸ ՄԱՐԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

#### ա- ՆԻՆՈՒԷԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Եօթներորդ դարուն (Ք. Ա.) Արմէնները մտան Ուրարտու և սկսան պայքարիլ տեղացի բնիկ ժողովուրդին դէմ, զայն ընկճելու և իրենց իշխանութեան տակ առնելու համար :

Այս ժամանակ Ասորեստան սկսած էր տկարանալ. անիկա այլևս չունէր իր նախկին զօրութիւնը : Ասորեստանի դրացի ժողովուրդները՝ Մարերը, Բարելացիները և Պարսիկները դաշնակից եղան կործանելու համար Ասորեստանը, որ զիրենք երկար դարերէ ի վեր կը չարչարէր : Իաշնակից այս ազգերուն առաջնորդն էր Կիախար Ա., Մարերու քաջ թագաւորը :

Հնգերոպական Արմէնները, որոնք այս ժամանակ նոր մտած էին Ուրարտու, օգնեցին Մարերու և անոնց դաշնակիցներուն, որպէս զի կործանեն Նինուէն, Ասորեստանի մայրաքաղաքը : Վերջապէս 606 թուին (Ք. Ա.), Մարերը և անոնց դաշնակիցները գրաւեցին Նինուէն և հիմնադրեցին կործանեցին զայն : Ասորեստանի վերջին թագաւորը, թշնամիին ձեռքը չիյնալու համար, ինքզինքը նետեց իր պալատի բոցերու մէջ և այրեցաւ :

Ասորեստանի տեղ զօրացան և աշխարհակալ տէրութիւն դարձան Մարերը : Ասորեստանի ենթակայ նախկին երկիրները մտան Մարերու գերիշխանութեան տակ : Հայաստան ևս ինկաւ Մարերու գերիշխանութեան տակ :

#### բ- ՄԱՐԵՐԸ ԿՕԳՆԵՆ ԱՐՄԷՆՆԵՐՈՒ

Մարերու իշխանութեան տակ նորեկ Արմէնները օգտուեցան, մինչդեռ Ուրարտացիները անտեսուեցան : Մարերը կ'օգնէին Արմէններու, որովհետեւ քաջ և կռուող Արմէնները օգնած էին իրենց, Ասորեստանը

կործանելու համար: Արմէններու թագաւորը Մարերու թագաւորին կու տար տարեկան տուրք և զինուոր: Արմէնները այս ժամանակ շարունակեցին կազմակերպուիլ և զօրանալ:

## Գ- ԱՐՄԷՆՆԵՐՈՒ ԵՐՈՒԱՆԴ ԹԱԳԱՒՈՐԸ

Զ. դարուն (Ք. Ա.) Հայաստանի թագաւորն էր ԵՐՈՒԱՆՈՎ, որ Արմէն ցեղէն էր: Երուանդի ժամանակ Արմէնները բաւական զօրացած էին. իսկ Մարերը, ընդհակառակը, տկարացած էին: Երուանդ ազատասէր թագաւոր մըն էր: Անիկա չէր ուզեր Մարերու իշխանութեան տակ մնալ: Ուստի Երուանդ ապստամբեցաւ Մարերու թագաւորին դէմ: Մարերու թագաւորն էր Կիւքսար Բ., որ Երուանդի ապստամբութիւնը զսպելու համար Հայաստան զրկեց Կիւրոս զօրավարը, որ պարսիկ էր ցեղով: Կիւրոս բանակով մը եկաւ Հայաստան: Պաշարեց ապստամբ Երուանդը և յաղթեց անոր: Երուանդ գերի ինկաւ Կիւրոսի ձեռքը: Կիւրոս սակայն ազատ արձակեց Երուանդը և անոր հետ բարեկամացաւ Տիգրանի շնորհիւ, որ Երուանդ թագաւորի որդին էր և մտերիմ ընկերը՝ Կիւրոսի:

Կիւրոս ասկէ ետք աշխատեցաւ հաշտեցնել Արմէններն ու տեղացիները, որոնք ատեն-ատեն իրարու հետ կռիւ կ'ունենային:

Կիւրոս և Տիգրան դաշնակից եղան: Տիգրան խոստացաւ Մարերու օգնել զրամով և մանաւանդ իր քաջ զինուորներով:

---

## ԱՌՏԱՏՐՅՈՒ ԲԱՌԵՐ

Ընկճել, առաջնորդ, հիմնայտակ կործանել, գերիշխանութիւն, անտեսողեցան, տարիկան տուրք, կազմակերպուիլ:

## ԸՆԴՂԱՅԵՆՆԵՐԻ ԿԷՏՅՈՒ

1- նինուէի կործանման եւ Մարերու յաղթանակին մէջ տեսնել հնդեւրոպական ժողովուրդներու յաղթանակը: — Առաջաւոր Ասիան այլեւս կ'ազատի Սեմական ժողովուրդներու լուծէն եւ կը

մտնէ հնդեւրոպական ժողովուրդներու գերիշխանութեան տակ :

2- Պատմել Նինուէի զրաւման մանրամասնութիւնները :

3- Ըսել թէ Կիւրոս ի՞նչ նպատակ ունէր Արմէնները սիրաշահելու մէջ :

#### ՀԱՐՑԱՐԱՆ

1- Արմէնները ի՞նչպէս վարուեցան տեղացիներուն հետ, երբ Ռւբարտու մտան: 2- Է. դարուն (Ք. Ա.) Ասորեստանի ոյժը ի՞նչ վիճակի մէջ կը գտնուէր: 3- Որո՞նք դաշնակից եղան կործանելու համար Ասորեստանը: 4- Ինչո՞ւ ուզեցին կործանել Ասորեստանը: 5- Ո՞վ էր առաջնորդը դաշնակից այս ազգերուն: 6- Արմէններն ալ օգնեցի՞ն: 7- Ծ՞րբ տեղի ունեցաւ Նինուէի կործանումը: 8- Ի՞նչ ըրաւ Ասորեստանի վերջին թագաւորը: 9- Ասորեստանի տեղ որո՞նք զօրացան :

10- Մարերու գերիշխանութեան ժամանակ (Է. դարուն Ք. Ա.) Հայաստանի մէջ ո՞ր երկու ժողովուրդները կողք կողքի կ'ապրէին: 11- Մարերը որո՞նք աւելի օգնեցին: 12- Ինչո՞ւ: 13- Արմէններու թագաւորը ի՞նչ կու տար Մարերու թագաւորին :

14- Ո՞վ էր Երուանդ: 15- Ի՞նչ ըրաւ անիկա: 16- Ինչո՞ւ համար ապստամբեցաւ: 17- Յարմար ատե՞նն էր ապստամբելու: 18- Ապստամբութիւնը զսպելու համար ո՞վ եկաւ Հայաստան: 19- Ի՞նչ ըրաւ Կիւրոս: 20- Կիւրոս ինչո՞ւ ազատ արձակեց Երուանդը: 21- Ուրիշ ի՞նչ ըրաւ Կիւրոս: 22- Տիգրան ի՞նչ յանձն առաւ :



### ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐ ԹԱԳԱՌՈՐՆԵՐՈՒ

Կիւսասար Ա. ( 638—595 Ք. Ա. ), հիմնադիր  
Մարական կայսրութեան և կործանողը  
Նինուէն՝ Ասորեստանի մայրաքաղաքը :

Աժդահակ ( 595—560 Ք. Ա. )

Կիւսասար Բ. ( 560—536 Ք. Ա. )

## ԺԳ. Դ Ա Ս

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԴԱՍԱՐԱՆԻ ՄԷՋ ԿԻՒՐՈՍ շԱՅԱՍՏԱՆ ԿՈՒ ԳԱՅ ՏԻԳՐԱՆ ԵՒ ԿԻՒՐՈՍ

#### ՄՈՒՏՔ

Կիաֆաւ Բ. Ի [560—536 Ք. Ա.] ժամանակ Մա-  
րական եւրոսփինը բաւական սկարացած էր : Մարեռու  
այս սկարացումէն օգտուելով, հպատակ ազգերէն ոմանք  
ապոստամբութիւն փորձեցին : Հայոց Յրուանդ բազաւորը  
ես, որ դասուակից էր Մարեռու, պատրաստուեցաւ ապս-  
տամբութեան, իր երկիրը ազատագրելու համար : Ապս-  
տամբները զուգելու համար՝ Կիաֆաւ Բ. պէտք ունէր զի-  
նուորի եւ դրամի : Հայոց բազաւորը մեծոց օգնել դրամով  
ու զինուորով, զոր խոստացած էր Մարեռու : Ասոր վրայ,  
Կիաֆաւ Բ. կանչեց Կիւրոսը, որ իր քննորդին էր եւ Մա-  
րական բանակին սպարապետը, եւ խորհրդակցեցաւ անոր  
հետ : Ընթերցման համար դրուած այս հետաքրքրական  
հասուածք կը սկսի Կիաֆաւ Բ. Ի եւ Կիւրոսի խօսակ-  
ցութեամբ :

— Դուն վերջերս կ'ըսէիր թէ, ըսաւ Կիւրոս, Հա-  
յոց երուանդ թագաւորը այժմ քեզ կ'արհամարհէ՝ իմա-  
նալով թշնամիներու արշաւանքը քեզի դէմ, և այլևս  
քեզի չի զրկեր ո՛չ զինուոր և ո՛չ տուրք, զոր պար-  
տաւոր էր արամադրել :

— Արդարեւ այդպէս կ'ընէ, ըսաւ Կիաֆաւ Բ. :  
Այժմ շուարած եմ : Արդեօք անոր դէմ պատերազմի  
երթամ թէ առ այժմ ազատ ձգեմ զայն, որպէս զի  
թշնամիներու վրայ չաւելցնեմ նաև Հայոց թագաւորը :

— Հայոց քաղաքները ամուր տեղեր են թէ զիւ-  
րին, հարցուց Կիւրոս :

— Ամուր տեղեր չեն, պատասխանեց Կիւրոս :  
Սակայն կան լեռներ, ուր կրնան ամրանալ և մի մի-  
այն երկար պաշարմամբ կարելի է զանոնք զրաւել,  
ինչպէս ըրաւ իմ հայրս Աժդահակ :

— Եթէ զիս զրկես Հայաստան, Հայոց թագաւորը

պիտի պարտադրեմ որ քեզի տայ զինուոր և դրամ, ինչպէս որ խոստացած էր: Եւ նոյնիսկ կը յուսամ զայն առաջուընէ աւելի բարեկամ դարձնել քեզի:

— Կը յուսամ թէ Հայերը ինձմէ աւելի քեզի պիտի հնազանդին յօժարակամ: Ինձի ըսին թէ Հայոց թագաւորին որդիներէն մէկ քանիին հետ գուն որս ըրած ես: Եթէ Հայերը մեզի ենթարկենք, ամէն ինչ պիտի ընթանայ մեր փափաքին համաձայն:

Կիւրոս պատրաստութիւններ տեսաւ և գործին յաջողութեան համար աստուածներուն զոհ մատուցանելէ ետք՝ ճամբայ ինկաւ դէպի Հայաստան: Կիւրոս որս ընելով կը յառաջանար, կարծել տալով թէ ինք որսի կ'երթայ և ոչ թէ պատերազմի: Հազիւ թէ ճամբայ ինկած էին, նապաստակ՝ մը երեցաւ, որուն վրայ արծիւ մը խոյացաւ, յափշտակեց և զայն տարաւ մօտակայ բլրակի մը վրայ: Կիւրոս հրճուեցաւ այս դէպքին համար, շնորհակալութիւն յայտնեց Արամազդ աստուծոյ և ըսաւ իր շուրջը եղողներուն.

— Մեր «որսորդութիւնն» ալ այսպէս բարեյաջող պիտի ըլլայ:

Կիւրոս երբ հասաւ Հայաստանի սահմանները, սկսաւ որս ընել: Ինք և իրեն հետ եղողները կ'որսային կինճ, եղջերու, այծեամ և ցիւռ, որոնցմէ շատ կային այդ կողմերը: Հայոց երուանդ թագաւորին յայտնեցին թէ պարսիկ Կիւրոսը որսի ելեր է: Երուանդ լսելով Կիւրոսի գալուստը՝ չփոթեցաւ, որովհետեւ հակառակ իր խոստումին, տուրք և զինուոր չէր տուած Մարերուն և իր երկրի սահմաններուն մէջ ամբողջութիւններ չինած էր, ինչ որ ապստամբութիւն կը նշանակէր:

Կիւրոսի կողմէ պատգամաւորներ հկան և Հայոց թագաւորին յայտնեցին թէ Կիւրոս զօրքով կուգայ և քեզմէ ուրիշ բան չի խնդրեր եթէ ոչ զինուոր և դրամ, ըստ խոստմանդ:

Թագաւորը հասկցաւ Կիւրոսի գալստեան նպատակը և իր կրտսեր որդիին՝ Շաւարշի ձեռքով թէ' կ'իները, թէ' մանուկները և թէ' դանձերը փոխադրեց

դէպի լեռները . իսկ ինքը շտապեց զօրք ժողովել : Այդ միջոցին գուժկան հասաւ թէ կիներն ու գանձերը ինկեր են թշնամիին ձեռքը , որովհետև Պարսից Քրիւսանտաս զօրապետը լեռներուն մէջ կտրեի էր գաղտնի ճանապարհները :

Թագաւորը շփոթեցաւ և հազիւ խոյս տալով կրցաւ բլուրի մը վրայ ամրանալ , ուր կիւրոս հասաւ և պաշարեց :

Կիւրոս պատգամաւոր զրկեց Երուանդ թագաւորին ըսելու .

— Ի՞նչ է միտքդ , կ'ուզե՞ս այդտեղ մնալ և սոված մահ ըլլալ , թէ իջնել և մեր դէմ կռուիլ :

— Իմ միտքս կռուիլ չէ , պատասխանեց Հայոց թագաւորը :

Նորէն պատգամաւորը գնաց և ըսաւ .

— Հապա ինչո՞ւ չես իջներ :

— Կ'իջնեմ , պատասխանեց Հայոց թագաւորը , բայց ո՞վ պիտի ըլլայ մեր մէջ դատաւորը :

— Ով որ աստուածները կը զրկեն , պատասխանեց Կիւրոս :

Հայոց Երուանդ թագաւորը ստիպուեցաւ իջնել իր բարձունքէն :

Ծիշող այս ժամանակ օտար երկրի մէջ ճամբորդութենէ վերադարձաւ Հայոց թագաւորին անդրանիկ որդին՝ Տիգրանը , որ ասենօք Կիւրոսին որսակից ընկերը եղած էր :

Երբ Տիգրան տեսաւ թէ իր հայրը , մայրը , եղբայրները և իր կինը գերի բռնուած են , լացաւ :

— Յարմար ժամանակին հասար , Տիգրան , ըսաւ Կիւրոս , լսէ՛ ուրիմն հօրդ դատը :

Կիւրոս կանչեց Մարերու և Պարսիկներու զօրավարները , որոնք իր հետ էին . կանչեց նաև Հայոց մեծամեծներէն անոնք , որոնք մօտն էին . նոյնպէս լսել թոյլ տուաւ Հայոց կիներուն , որոնք սայլերուն մէջն էին :

Կիւրոս նախ հարցուց Հայոց թագաւորին .

— Ինչո՞ւ Մարերու հետ կնքուած ուխտը զրժե-

ցիր ու պատերազմի պատրաստութիւն տեսար. — Դուն խոստացար, ըսաւ Կիւրոս, որ Մարբուօ օգնես թէ՛ գանձով և թէ՛ զօրքով, և ամրոցներ չկառուցանես. բայց դուն հակառակը գործեցիր :

— Այո՛, ըսաւ Երուանդ թագաւորը, որովհետեւ ազատութիւն ցանկացայ եւ լաւ կը համարիմ որդիներուս ազատութիւն ձգել :

— Լաւ բան է, ըսաւ Կիւրոս, ազատութեան համար կառելի, բայց այժմ ըսէ՛, եթէ քու դաշնակիցներէդ մէկը դրժէր իր խոստումը և ձեռքդ իյնար, ի՞նչ կ'ընէիր անոր :

— Ճիշդն ըսելով՝ իշխանութենէ կը զրկէի, ունեցածը կ'առնէի, և եթէ ընդդիմանար, կը սպաննէի :

Երբ Տիգրան այս բանը լսեց՝ գլխին խոյրը հանեց և ծածանող ծոպերէն բռնելով՝ դեռին նետեց : Կիւնբը կու լային և կ'ազազակէին, կարծելով թէ թագաւորը կորսուեցաւ. անոր հետ՝ նաև իրենք :

Կիւրոս հրամայեց լռել և դառնալով թագաւորին ըսաւ .

— Որովհետեւ այդ է քու վճիռդ, կը հարցնեմ. ի՞նչպէս արժանի է որ ես քու հետդ վարուիմ :

Թագաւորը լռեց և Տիգրան շտապելով երկար խօսեցաւ .

— Որովհետեւ արժանին կը հարցնես, ո՛վ Կիւրիս, ես խորհուրդ կու տամ ներել հօրս, որովհետեւ անիկա այդպէս վարուեցաւ ազատութեան համար : Բայց փոխանակ ազատութեան, անիկա գտաւ այն, ինչ որ չէր սպասեր : Ահաւասիկ քու ձեռքդ է. եթէ կրկին ազատութիւն տաս, զինք կրկնակի՛ բարեկամ ըրած չե՞ս ըլլար արդեօք :

Կիւրոս մտքովը կ'ուրախանար, որովհետեւ կատարուեցաւ այն, ինչ որ խոստացիր էր Կիաքսարին (այսինքն առաջուրնէ աւելի բարեկամ ընել չայցիրը) :

Անիկա ըսաւ .

— Շատ բարի, երկրորդ անգամ հաստատենք մեր բարեկամութիւնը. բայց ի՞նչ օգնութիւն պէտք է տաք մեզի՝ թէ՛ զօրքով և թէ՛ դրամով :

— Քեզի ցոյց կու տամ ամբողջ գանձերս և զօրքս. ա՛ն որքան որ կը ցանկաս, ըսաւ Տիգրանի հայրը :

Կիւրոս հարցուց .

— Ո՞րքան զօրք և գանձ ունիք :

— Ութ հազար հեծեալ և քառասուն հազար հետեւակ, պատասխանեց Երուանդ թագաւորը. իսկ դրամը հօրս թողածէն երեք հազար տաղանդ աւելի է :

Յառաջիկայ պատերազմին համար Կիւրոս բաւականացաւ զօրքին կէսը վերցնելով :

— Որովհետեւ միւս կէսը, ըսաւ Կիւրոս, քեզի պէտք է խալդիներու (— Ուրարտացիներու) դէմ կռուելու համար, որոնց հետ միշտ կռուի մէջ էք :

Իսկ դրամէն հարիւր տաղանդ միայն խնդրեց. հարիւր տաղանդ ալ իրեն համար պարտք վերցուց՝ վերադարձնելու պայմանով :

— Այսպէս մի՛ խօսիր, ո՛վ Կիւրոս, ըսաւ Հայոց թագաւորը, թէ չէ՛ ինձի համարձակութիւն չես տար. իմացած եղի՛ր, որ ամէնը քուկդ է :

— Իսկ որպէս զի կի՛նդ ազատես ի՞նչ կու տաս, հարցուց Կիւրոս :

— Որչափ որ կարող եմ, պատասխանեց Երուանդ :

— Իսկ տղո՞ւդ համար, շարունակեց Կիւրոս :

— Դարձեալ որչափ որ կարող եմ :

— Ուրեմն ամբողջ ունեցածիդ կրկնապատիկը պէտք է որ տաս, ըսաւ Կիւրոս :

Յետոյ դառնալով Տիգրանին՝ ըսաւ .

— Եւ դուն, ո՛վ Տիգրան, ի՞նչ փրկանք պէտք է տաս կնոջդ համար :

Տիգրանը, որ նոր է ամուսնացեր և շատ կը սիրէր իր կի՛նը, ըսաւ .

— Իմ անձս ամբողջութեամբ կու տամ, եթէ հարկ ըլլայ, որպէս զի կի՛նս ստուկ չըլլայ :

— Դուն, Տիգրան, դարձաւ Կիւրոս, ա՛ն կինդ, որովհետեւ ես զայն գերի չեմ համարեր. դուն մեզմէ ես: Դո՛ւն, թագաւոր, նոյնպէս ա՛ն կինդ և զաւակներդ. անոնց համար փրկանք չեմ պահանջեր:

Կիւրոս յետոյ ամէնքը ընթրիքի հրաւիրեց և ընթրիքէն ետք ըսաւ.

— Ամէնքդ գացէ՛ք ձեր տեղերը:

Եւ թագաւորն ու իր ընտանիքը ճանապարհին կան պատգարակներով: Մինչ կ'երթային, մէկը Կիւրոսի խելքը կը գովէր, միւսը՝ ժուժկալութիւնը, ոմանք ալ գեղեցկութիւնն ու վայելուչ հասակը:

Տիգրան հարցուց կնոջը.

— Քեզի ալ՝ գեղեցիկ թուեցա՞ւ Կիւրոս:

— Ես անոր չնայեցայ, պատասխանեց կինը:

— Հապա որո՞ւն կը նայէիր, հարցուց Տիգրան:



— Ես կը նայէի անոր, պատասխանեց կինը, որ ըսաւ թէ իր անձը ամբողջութեամբ կուտայ որպէս զի իր կինը ստուկ չըլլայ:

\*  
\* \*

Այնուհետև Տիգրան, որ չէր ուզեր Կիւրոսէն բաժնուիլ, նշանակուեցաւ Հայոց հեծելազօրքի հրամանատար: Անոնք ուղեւորեցան երկրի ուրիշ կողմը, որպէս զի յարմար տեղ մը գտնեն՝ բերդ շինելու, ուր պարսիկ պահակ պէտք էր որ մնար:

Ճանապարհին Տիգրան խաղիներու (=Ուրարտացիներու) լեռները ցոյց տալով ըսաւ.

— Կը տեսնե՞ս այս լեռները, ուր խաղիները կ'ապրին. երբեմն - երբեմն կ'իջնեն լեռներէն ու կը կողոպտեն մեր թուառ գիւղացիները. ասոք համար ալ այդ կողմերը ամայի են մնացեր:

Կիւրոս մտածեց բերդը այդ կողմերը շինել՝ Հայոց և խաղիներու (=Ուրարտացիներու) մէջտեղը, թէ՛ Հայերը պաշտպանելու և թէ՛ խաղիներու (=Ուրարտացիներու) աւազակութիւններուն առաջքը առնելու համար:

Հետեւեալ օրը երբ Տիգրան եկաւ 4000 հեծեալներով և 10.000 ազիզնաւորներով, նոյնչափ ալ վահանակիրներով, Կիւրոս յայտնեց Տիգրանի իր մտադրութիւնը, որուն Հայերը հաւանութիւն տուին:

Կիւրոսի և Տիգրանի առաջին գործը եղաւ խաղիներու (=Ուրարտացիներու) վրայ սաստիկ յարձակում մը կատարել, որուն խաղիները չկրցին երկար դիմանալ: Կիւրոս անոնց գլխաւորները բռնելով համոզեց որ իրենց համար օգտակար կ'ըլլայ, եթէ այդ կողմերը Մարերու և Պարսիկներու պահակ ըլլայ:

— Դուք (=խաղիներդ կամ Ուրարտացիներդ), ըսաւ Կիւրոս, աղփաս էք եւ աւազակութեամբ կ'ապրիք, որովհետեւ ո՛չ մեակելի հող ունիք եւ ո՛չ երկրագործութիւն: Ահա Արմէններու դաշտերը ըսց հն ձեր առջև. գացէ՛ք, մշակութեամբ զբաղեցէ՛ք. և դուք, Արմէններ, ասոր փոխարէն ձեր հօ-

տերն արածեցէ՛ք Սալգիներու (=Ուրարտացիներու) արօտներուն մէջ :

Այս լսելով՝ հրկու կողմերն ալ հաւանութիւն տուին :

— Ա՛յսպէս միայն խաղաղութիւնը կարելի է յարատե դարձնել, ըսին անոնք :

Իրարու պատանդ տուին և ազատութիւն՝ ամուսնութեան, մշակութեան և արածեցնելու . վտանգ եղած ատեն փոխադարձ օգնութեան դաշինք կնքեցին : Մինչև այժմ ալ այդ դաշինքը կը մնայ (այսինքն մինչև և—Դ դար, երբ կ'ապրէր Քսենոփոն, որ այս դրուագը պատմած է )



**ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.**— Ընթրցման համար դրուած այս դրուագը վերցուած է Քսենոփոնի «Կիրամարզ» անուն գործէն : Քսենոփոն յոյն զօրավար մըն էր և պատմագիր մը : Մնած է 430-ին և մեռած՝ 352-ին (Ք.Ա.) :

**ԹՅԼԱԳՐՈՒԹԻՒՆ.**— Ընթրցման համար դրուած այս հատուածը նախ պէտք է դասարանի մէջ կարդացուի՝ ուսուցչին կողմէ, առակերտներուն թալով անհրաժեշտ լուսարանութիւններն ու ծանօթութիւնները : Յետոյ առակերտները պէտք է որ նոյնը պատմեն կենդանի և ամբողջական ձևով մը :

**ԲԱՅԱՏՐՅԼԻ ԲԱՌՍԻ**

Ամրանալ, յօժարակամ, խոյանալ, բարեյաջող, կինճ (=վայրի խոզ՝ վարազ, sanglier), ցիռ (=վայրի էջ, onagre), գուժկան, ամրոց, ընդդիմանալ, հեծեալ, հետեւակ, տաղանդ (=հին կշիռ և դրամ. —տաղանդը կրնար երկու տեսակ ըլլալ՝ արծաթ և սսկի : Արծաթ տաղանդը կ'արժէր 5600 Յր. ֆրանք. իսկ սսկի տաղանդը՝ 56.000 Յր. ֆրանք), փրկանք, ժուժկալութիւն, հեծելազօրք, հրամանատար, աղեղնաւոր, վահանաւոր, պահակ, պատանդ :

**ԸՆԴԼԱՅՆՅԼԻ ԿԷՏՅԻ**

1- Հայոց Երուանդ Թագաւորը ազատատէր է, ինչպէս նաև մշմարտախօս և անվախ : Մասնաւորաբար վեր առնել Հայոց ազատասիրութիւնը : Հայաստանի հողին վրայ ապրող ժողովուրդները ամենէն աւելի սիրած են ազատութիւնը և անոր համար կռուած են ու զոհուած (Ուրարտացիները ընդդէմ Ասորեստանի) : —Հայոց

կեանքը եղած է մշտալար պայքար մը «ազատութեան համար» :  
—Մեր հին աւանդութիւններուն ու ժողովրդական հեքիաթներուն  
հերոսները [Հայկ, Արամ, Սասունցի Դաւիթ եւայլն] կը պայքարին  
ազատութեան համար :

2- Տիգրանի կնոջ պարկեշտութիւնը եւ ընտանեւորութիւնը,  
որ հայկական առաքինութիւն մըն է :

3- Տիգրանի եւ Գիւրոսի անկեղծ բարեկամութիւնը : —Գիւ-  
րոս եղած է իմաստուն եւ առաքինի անձ մը :

4- Խօսիլ Խալդիններու մասին, որոնք Ուրարտացիներն են :  
Երբ Գիւրոս Հայաստան եկաւ 2. դարուն (Ք. Ա.), տակաւին պայ-  
քար կար Արմէններու եւ Խալդիններու միջեւ : Խալդինները պար-  
տուած ըլլալով եկուոր Արմէններէն, ապաստանած էին լեռները,  
ուր կը բնակէին եւ ուրկէ ատեն - ատեն կը յարձակէին Արմէննե-  
րու վրայ, որոնք՝ կ'երեւի՝ կը բնակէին դաշտային վայրերու մէջ :  
Գիւրոս, իր Հայաստան գտնուած ժամանակ, կը ջանայ հաշտեցնել  
միեւնոյն երկրի մէջ բնակող այս երկու ցեղերը : Ան նոյնիսկ կը  
յաջողի երկուքին միջեւ հաստատել խաղաղութեան դաշինք մը : 2-  
դարէն (Ք. Ա.) ետքն է որ հետզհետէ կը բարեկամանան եւ ի վեր-  
ջոյ իրարու հետ կը ձուլուին Արմէններն ու Խալդինները (Ուրար-  
տացիները), որոնցմէ առաջ կու գայ, ինչպէս ըսինք, Հայ ցեղը :

#### ԱՂՐՈՒՐՆԵՐ

Xénophon, CYROPÉDIE, traduction nouvelle par Pierre Cham-  
bry, Librairie Garnier, էջ 89—114 : Քսենոփոնի «Գիւրամարզ»ը  
թարգմանուած է հայերէնի (գրաբար), Լ. Յ. Գաթրընեանէ, Վինն-  
նա, 1843: Մեր առաջ բերած հատուածին համար օգտուած ենք  
ֆրանսերէն թարգմանութենէն եւ Մ. Գարագաշեանի ամփոփոյթէն  
[Քննական Պատմութիւն Հայոց, Ա., էջ 55—59], ուրկէ բառացի  
արտագրած է Դէորգ - Մեսրոպ (Հայոց Պատմութիւն - Քննական,  
Կ. Պոլիս, 1915, էջ 192—195) :



**ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻԿ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒ**  
( ԱՔԵՄԵՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ )

Կիւրոս 559—536 ( Ք. Ա. ) *կը գործէ իբրև զօրապետ և փոխանորդ Մարերու Կիաքսար Բ. թագաւորի Իսկ 536—529 (Ք.Ա.)՝ իբրև միահեծան տէրը Մարերու և Պարսիկներու . ինչպէս նաև ամբողջ Առաջաւոր Ասիոյ :*

Կամբիւս ( 529—522 Ք. Ա. )

Կաւմարս կամ Շմերդ *անուն մողը՝ 521 (Ք. Ա.), վեց ամիս միայն :*

Դարեհ Ա. Վեսասպեան 521—485 (Ք. Ա.)

Քսերքսէս Ա. 485—465 (Ք. Ա.)

Արսաւէս Ա. 465—424 (Ք. Ա.)

Դարեհ Բ. Ոճոս կամ Նորոս 424—405 (Ք.Ա.)

Արսաւէս Բ. Մենմոն 405—359 (Ք. Ա.)

Արսաւէս Գ. Ոճոս 359—336 (Ք. Ա.)

Դարեհ Գ. Կոսման 335—330 (Ք. Ա.)

**ԺԴ. Դ Ա Ս**

**ՀԱՅԵՐԸ ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ**

Մարերու վերջին թագաւորը հղաւ Կիաքսար Բ. , որ անգաւակ մեռաւ : Անոր յաջորդեց իր քեւորդին Կիւրոս , որ հօրը կողմէ պարսիկ էր և երկար ժամանակ իբրև զօրապետ գործած էր Կիաքսար Բ. ի բանակին մէջ : Կիւրոս ինքզինք հռչակեց թագաւոր Մարերու և Պարսիկներու : Անիկա հղաւ աշխարհակալ եւ իմաստուն թագաւոր մը : Այսպիսով Մարերու տեղ Պարսիկները զօրացան և դարձան Առաջաւոր Ասիոյ տէրը , 2. դարուն (Ք. Ա.) :

Հայերը այս անգամ մտան Պարսիկներու գերիշ-

խանութեան տակ : Անոնք դարձեալ մնացին հպատակ : Սակայն Հայերը խողաղ ու հանգիստ ապրեցան Պարսիկներու գերիշխանութեան տակ :

Կիւրոս լաւ վերաբերում մը ցոյց տուաւ Հայոց հանդէպ, որովհետեւ անիկա պէտք ունէր Հայ քաջ զինուորներու օգնութեան՝ արեւելու համար նորանոր երկիրներու :

Հայոց Երուանդ թագաւորի որդին՝ Տիգրանը միշտ կը գտնուէր Կիւրոսի բանակին մէջ և անոր կ'օժանդակէր : Երբ Կիւրոս կռուեցաւ Լիւզիոյ Արեսոս թագաւորին և Բաբելոնի Նաբունահիս արքային դէմ, Հայոց ընտիր բանակը՝ Տիգրան արքայորդիին և Եմբաս հայ սպարապետին առաջնորդութեամբ՝ օգնեց Պարսիկներու : Հայոց այդ օգնական բանակը բազկացած էր 4.000 ձիաւորներէ և 20.000 հետևակներէ :

Այս երկար ու ծանր պատերազմներու ժամանակ՝ Տիգրանի հեռեկեցաւ իր կիներ՝ Տիգրանուհին, որ սկանառես եղաւ հայ և պարսիկ բանակներու յաղթանակներուն : Կիւրոս, այս կռիւներէ հտք, Տիգրանի տուաւ բազմաթիւ գոհարիզէններ, որպէս զի զանոնք նուիրէ իր կնոջ :

Յետոյ Տիգրան վերադարձաւ Հայաստան և իր հօրը մահէն հտք, եղաւ Հայաստանի թագաւոր :

Տիգրան իմաստութեամբ կառավարեց իր երկիրը և մնաց բարեկամը և դաշնակիցը Կիւրոս թագաւորին :



### ՌԱԵԱՏՐՆԼԻ ՐԱՌՆԻ

Քեռորդի, արքայորդի, ականատես, գոհարիզէն :

### ԸՆԴԼԱՅԵՆԼԻ ԿԷՏՈՐ

1- Քէ՛ Մարիը [ինչպէս տեսանք նախորդ դասերուն] եւ Քէ՛ Պարսիկները կը սիրաշահէին Հայերը՝ օգտուելու համար հայկական գունդերէն : — Ուրիմն շեշտել հայ զինուորի քաջութիւնն ու կորովը : — Հայ զինուորը անուանի եղած է միշտ :

2- Տիգրանի կնոջ ընկերակցութիւնը իր ամուսին՝ պատե-

րագմի դաշտին վրայ: Ասով վեր առնել հայ կնոջ ոչ միայն ընտանեհարութիւնը, այլ նաեւ հերոսական նկարագիրը :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Ո՞վ յաջորդեց Մարերու վերջին թագաւորին՝ Կիաքսար Բ-ի: 2- Ո՞վ էր Կիւրոս եւ ի՞նչ ըրած էր՝ թագաւոր ըլլալէ առաջ: 3- Ի՞նչ տեսակ թագաւոր մը եղաւ Կիւրոս: 4- Մարերու տեղ որո՞նք կրան Առաջաւոր Ասիոյ տէրը: 5- Հայերը մտա՞ն Պարսիկներու գերիշխանութեան տակ: 6- Հայերը ի՞նչպէս ապրեցան Պարսիկներու գերիշխանութեան տակ: 7- Ինչո՞ւ համար Կիւրոս լաւ վերաբերում մը ցոյց տուաւ Հայոց հանդէպ: 8- Տիգրան ո՞ր պատերազմներու մասնակցեցաւ Կիւրոսի հետ: 9- Ո՞վ ընկերացաւ Տիգրանի այս պատերազմներու ժամանակ: 10- Կիւրոս ի՞նչ նուիրեց Տիգրանի կնոջ: 11- Ի՞նչ ըրաւ Տիգրան Հայաստան դառնալէ ետք:

**ՀՐԹ ՀԱՆԳ**

Յոյց տալ քարտէսի վրայ Լիւդիան եւ Բաբելոնը :

**ԺԵ. Դ Ա Ս**

**ՀԱՅՈՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ ԴԷՍ**

Կիւրոսի յաջորդն էր Կամբիւս, որուն մահէն ետք՝ 522 թուին (Ք. Ա.) Պարսկաստանի մէջ յեղափոխութիւն մը ծագեցաւ եւ անկարգութիւններ առաջ եկան :

Հայերը առիթէն օգտուելով ապստամբեցան Պարսիկներու դէմ, իրենց հայրենիքը անկախ դարձնելու համար :

Կամբիւսի յաջորդեց Դարեհ Ա. Վեսասպեան, որ ուզեց զսպել Հայոց ապստամբութիւնը : Անիկա Հայաստան զրկեց Դադարսիս անունով հայ զօրապետը, պարսիկ զինուորներով : Բռուն կռիւ մը տեղի ունեցաւ : Հայերը քաջաբար պաշտպանեցին իրենց հայրենիքը: Իագարսիս երեք ճակատամարտներ մղեց՝ 520 թուին (Ք. Ա.), բայց չկրցաւ յաղթել Հայոց: Ասոր վրայ Պարսիկներու Դարեհ թագաւորը Իագարսիսի տեղ զրկեց պարսիկ զօրավար մը, Վաւմիւս անունով: Վաւմիւսս ես երկու ճակատամարտներ

մղեց 519 թուին (Ք. Ա.) և վերջապէս կրցաւ Հայոց  
յաղթել :

Պարսիկները դժուարութեամբ կրցին Հայոց  
յաղթել: Ասիկա ցոյց կու տայ թէ Հայերը այս ժա-  
մանակ լաւ կազմակերպուած էին և զօրացած :

Դարեհ թագաւորի դէմ հպատակ ուրիշ ազգեր  
ևս ապստամբած էին: Բայց Դարեհ յաղթեց բոլորին  
ալ և զանոնք իրեն հպատակ դարձուց :

Դարեհ իր այս յաղթութիւնները արձանագրեց  
Բենիսուսնի քարածայռին վրայ, խրոխա լեզուով մը,  
ինչպէս սովորաբար կ'ընէին հին թագաւորները :

Հայոց ապստամբութեան մասին Դարեհ այսպէս  
գրած է իր այդ նշանաւոր արձանագրութեան մէջ :

## ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԴԱՐԵՀ ԹԱԳԱՒՈՐԸ Կ'ԸՍԷ.

Պաղարսիս անունով արմենացիք, իմ ծառաս, դրկե-  
ցր Արմենիա եւ ըսի անոր. — Գնա՛, գա՛րկ այդ ապս-  
տամբ ժողովուրդը, որ չի հպատակիր ինձի: Պաղարսիս գնաց  
նուանելու համար Արմենիան: Ապստամբները հաւաքուե-  
ցան ու յարձակեցան Պաղարսիսի վրայ: ԶՈՒԶԱ անունով  
ժողով մը կայ Արմենիայի մէջ: Հոն տեղի ունեցաւ հա-  
կասամարտ: Արամազը օգնեց ինձի: Արամազի օնոր-  
հիւ՛ իմ բանակս օտա մարդ ջարդեց բոնամի բանակէն :  
Այս հակասամարտ տեղի ունեցաւ Թուրավահարա ամ-  
սուն (Ապրիլ) վեցերորդ օրը :

ԴԱՐԵՀ ԹԱԳԱՒՈՐԸ Կ'ԸՍԷ.

Ապստամբները երկրորդ անգամ հաւաքուեցան ու  
յարձակեցան Պաղարսիսի վրայ: ՏԻԳՐԱ անունով բերդ մը  
կայ Արմենիայի մէջ: Հոն տեղի ունեցաւ հակասամարտ:  
Արամազը օգնեց ինձի: Արամազի օնորհիւ՛ իմ բանակս  
ջարաջար գարկաւ բոնամիին բանակը : Այս պատերազ-  
մը տեղի ունեցաւ Թուրավահարա ամսուն տասներորդ  
օրը :


ԴԱՐԵՀ ԹԱԳԱՒՈՐԸ Կ'ԸՍԷ.

Ապստամբները երրորդ անգամ հաւաքուեցան ու յար-  
ձակեցան Պաղարսիսի վրայ: ՈՒՂԻԱՍԱ անունով բերդ մը

կայ Արմենիայի մէջ: Հոն տեղի ունեցաւ պատերազմը: Արամազդը օգնեց ինձի: Արամազդի տնօրինը՝ իմ բանակս շատ մարդ ջարդեց բռնամիտն բանակէն: Այս պատերազմը տեղի ունեցաւ Թայիգարնայիս ամսուն (Մայիս) իններորդ օրը:

ԴԱՐԵՀ ԹԱԳԱՒՈՐԸ Կ'ԸՍԵ.

Յետոյ ՎԱԻՄԻՍԱ անունով Պարսիկը, իմ ծառաս, զըրկեցի Արմենիա եւ այսպէս պատուիրեցի անոր. — Գնա՛, գա՛րկ այն ապստամբ բանակը, որ չի հնազանդիր ինձի: Այն ժամանակ Վաւմիսս գնաց Արմենիա, նուաճելու համար գայն: Ապստամբները հաւաքուեցան եւ յարձակեցան Վաւմիսայի վրայ: ԻջիՏՈՒ անունով բազմ մը կայ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ մէջ: Հոն տեղի ունեցաւ նախասամարսը: Արամազդը օգնեց ինձի: Արամազդի տնօրինը՝ իմ բանակս շատ մարդ ջարդեց բռնամիտն բանակէն: Այս պատերազմը տեղի ունեցաւ Անամակիս ամսուն (Պեկտեմբեր) տասներկուերորդ օրը:



ԲԵՀԻՏԱՏՈՒԿԻ ԶԱՐԱԺԱՅՈՐԸ, ՈՒՐ ԿԸ ՏԵՆՆՈՒԿԻՆ ԱՐԱՄԱԶԳ ԱՍՏՈՒԿԱԾԸ [ՎԵՐԸ], ԴԱՐԵՀ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԵՂԹԱՅԱԿԱՄ ԱՄՍԱՄԲԵՆԵՐԸ:

ԴԱՐԵՀ ԹԱԳԱՒՈՐԸ Կ'ԸՍԵ.

Ապստամբները եկերորդ անգամ հաւաքուեցան եւ յարձակեցան Վաւմիսայի վրայ: ԱՒՏԻԱՐԱ անունով նահանգ մը կայ Արմենիայի մէջ: Հոն տեղի ունեցաւ պատերազմը: Արամազդը օգնեց ինձի: Արամազդի տնօրինը՝ իմ բանակս շատ մարդ ջարդեց բռնամիտն բանակէն: Այս պատերազմը տեղի ունեցաւ Թուրավահարա ամսուն վերջաւորութեան:

### ՌԱՅԱՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՌՆԵՐ

Յեղափոխութիւն, անկարգութիւն, բուռն կռիւ, ճակատամարտ, Բեհիստուն (556 մետր բարձրութեամբ քարաժայռ մը՝ Քիրմանշահի հիւսիսը, Պաղատտի եւ Համատանի մէջտեղը), քարաժայռ, խրոխտ, արմենացի, Արմենիա, նուաճել, Արամազդ :

### ԸՆԴԼԱՅԵՆՆԵՐԻ ԿԷՏՅՐ

1- Ապստամբութիւնները ընդհանրապէս տեղի կ'ունենան զահակալութեանց ժամանակ :

2- Հայոց ապստամբութիւնը զսպելու համար դրկուած առաջին զօրագետը՝ Դադարսիսը հայ մըն էր. — Հայերը ուրիմն զինուորական բարձր աստիճաններու հասած էին պարսկական բանակին մէջ :

3- Հակառակ Դարեհի հպարտ խօսքերուն, Հայերը լաւ դիմադրեցին Պարսիկներու: Անոնք հիմնգ ճակատամարտներէ ետք միայն վերջնականօրէն պարտուեցան Պարսիկներէն Դարեհ մեծ ղժուարութիւններ կրած ըլլալ կը թուի յաղթելու համար Հայերուն: Առաջին ճակատամարտին եթէ յաղթած ըլլար, պէտք պիտի չունենար չորս ճակատամարտներ եւս մղելու: Նկատի պէտք է ունենալ որ չորրորդ ճակատամարտը տեղի ունեցած է Ասորեստանի մէջ, ինչ որ ցոյց կու տայ թէ Հայերը ոչ միայն կրցիր էին իրենք զիրենք պաշտպանել, այլ նաեւ նախայարձակ ըլլալ թշնամիի վրայ:

### ՀԱՐՑԱՐԱՆ

1- Գիւրոսի յաջորդ Կամբիւսի մահէն ետք [522-ին] ի՞նչ տեղի ունեցաւ Պարսկաստանի մէջ: 2- Այս յեղափոխութեան ժամանակ ի՞նչ ըրին Հայերը: 3- Ո՞վ յաջորդեց Կամբիւսի: 4- Դարեհ Ա. զո՞վ զրկեց Հայաստան, Հայոց ապստամբութիւնը զսպելու համար: 5- Դադարսիս քանի՞ ճակատամարտներ մղեց: 6- Դադարսիս կրցա՞ւ Հայոց յաղթել: 7- Ո՞վ եկաւ Դադարսիսի տեղ: 8- Վաւաճեալ քանի՞ ճակատամարտներէ ետք կրցաւ Հայոց յաղթել: 9- Այս հինգ ճակատամարտները ո՞ր թուականներուն տեղի ունեցան: 10- Դարեհի դէմ հպատակ ուրիշ ազգեր եւս ապստամբեցա՞ն: 11- Դարեհ իր այս յաղթութիւնները ո՞ւր արժանագրեց: 12- Ո՞ւր կը գտնուի Բեհիստուն: 13- Պատմէ՛ Հայոց ապստամբութիւնը, Բեհիստունի քարաժայռին արժանագրութեան պէս, այսինքն Դարեհի բերնով :



## ԺԶ. Դ Ա Ս

### ՊԱՐՍԻԿՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԿԱՌԱՎԱՐԷԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Դարին իրեն հպատակ երկիրները բաժնած էր քսան (20) սասրապուքիւններու կամ նահանգներու : Իւրաքանչիւր երկիր կը կառավարուէր սատրապով մը : Սատրապը կուսակալն էր : Դարին իր իմաստուն օրէնքներով կրցաւ խաղաղօրէն կառավարել բոլոր երկիրները :

Հայաստան բաժնուած էր երկու մասերու . Արեւելեան Հայաստան և Արեւմտեան Հայաստան, որոնք կը կառավարուէին մէյմէկ սատրապներով : Հայաստանի այս երկու մասերը կը ներկայացնէին տասներեքերորդ և տասնութերորդ սատրապութիւնները : Հայաստանի սատրապները մեծ մասով հայ կ'ըլլային :

Պարսիկները Հայոց տուն ներքին մեծ աղատութիւն : Հայերը վայելեցին խաղաղութիւն և հանգիստ կեանք՝ Պարսիկներու իշխանութեան տակ :

Հայերը իբրև տուրք Պարսիկներու ամէն տարի կու տային 20,000 ձի և 500 տաղանդ : Հայաստանի ձիերը շատ նշանաւոր էին : Հայերը Պարսիկներու կ'օգնէին նաև պատերազմի ժամանակ, իրենց քաջ զինուորներով : Օրինակի համար Հայ զինուորները օգնեցին Պարսիկներու Մարական երկար պատերազմներու ժամանակ, որոնք մղուեցան Յունաստանի դէմ :

Հայերը կրեցին Պարսիկներու ազդեցութիւնը : Անոնք իւրացուցին պարսկերէն բազմաթիւ բառեր ու ոճեր :



**ԲԱՅՍՏՐԵԼԻ ԲԱՌԵՐ**

Սատրապ (==կուսակալ), բառ ու ոճ իւրացնելի :

**ԸՆԴԼԱՅՆՆԵԼԻ ԿԷՏՈՐ**

1- Խօսիլ Դարեհ թագաւորի գործերուն մասին [ճամբաներու շինութիւն, ճեպընթաց թղթատարութեան դրութեան հաստատում, իմաստուն օրէնսդրութիւն, սատրապութեանց կազմակերպութիւն եւ այլն] :

2- Խօսիլ Մարական Պատերազմներու մասին :

3- Ներկայացնել պարսկական ազդեցութիւնը մեր լեզուին [օրինակներով], սովորութեանց եւ կենցաղին վրայ :

**ՀԱՐՑԱԲԱՆ**

1- Դարեհի ի՞նչպէս կը կառավարէր իրեն հպատակ երկիրները: 2- Հայաստան քանի՞ մասերու բաժնուած էր պարսկական տիրապետութեան ժամանակ: 3- Հայաստան ո՞ր սատրապետութիւնները կը ներկայացնէր: 4- Հայերը ի՞նչպէս ապրեցան Պարսիկներու իշխանութեան տակ: 5- Ի՞նչ կը վճարէին իբրեւ տուրք: 6- Հայերը կ'օգնէի՞ն Պարսիկներու՝ պատերազմի ժամանակ: 7- Հայերը ի՞նչ ազդեցութիւն կրեցին Պարսիկներէն :



**ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ ԿՈՂՄԷ**

Հայաստան Պարսիկներու իշխանութեան տակ մտաւ Զ. դարուն և անոնց հպատակ մնաց մինչև 331 թուականը (Ք. Ա.), երբ Մեծն Աղեքսանդր տիրեց Պարսկաստանի ենթակայ բոլոր երկիրներու վրայ: Այս աւելի քան երկու դարու ընթացքին Հայաստանի մէջ պատահած դէպքերու մասին ուէ բան չենք գիտեր, որովհետև այս դարերէն մեզի չեն հասած արձանագրութիւններ ու գիրքեր: Միայն ծանօթ ենք Հայոց ապստամբութեան (520—519-ին), զոր տեսանք, և նշանաւոր դէպքի մը, որ ծանօթ է Նահանգ Բիւրուն անունով և որ անդի ունեցած է 401 թուին (Ք. Ա.):

## ԺԷ. Դ Ա Ս

### ՆԱՀԱՆՁ ԲԻՒՐՈՒՆ (401 ք. Ա.)

Պարսիկներու թագաւորն էր Արտաշէս Մենանն (405—359), որ եղբայր մը ունէր Կրսուեք Կիւրոս անունով: Կրտսեր Կիւրոս կ'ուզէր իր եղբայրը գահէն վար ածնել և անոր տեղ թագաւոր ըլլալ: Սակայն անիկա իր թագաւոր եղբօր յաղթելու չափ զօրք չունէր: Ուստի Յոյներէն ուզեց վարձկան զինուորներ:

Տասնչորս հազար յոյն զինուորներ մեկնեցան Պարսկաստան, օգնելու Կրտսեր Կիւրոսի: Արտաշէս և Կիւրոս պատերազմեցան: Կռուի մէջ սպաննուեցաւ Կիւրոս: Այն ժամանակ՝ մնացած տասնհազար կամ բիւք զինուորները ուզեցին վերադառնալ իրենց հայրենիքը: Տասնհազար այս զինուորներու նահանջը կը կոչուի Նահանջ Բիւրուն:

Նշանաւոր է անոնց նահանջը: Այս նահանջող տասնհազար զինուորներու առաջնորդը կը կոչուէր Քսենոփոն, որ նշանաւոր զօրապետ մըն էր և պատմագիր մը: Յոյները Պարսկաստանէն նախ մտան Ասորիստան: Յետոյ անցան Հայաստան: Երկար ժամանակ ոլոր-մոլոր ճամբաներով ճամբորդեցին Հայաստանի մէջ: Վերջապէս հասան Սև Մով, բացականչելով քալասա՛, քալասա՛ ... (այսինքն՝ ծո՛վը, ծո՛վը): Սև Մովու եզերքէն ճամբորդելով՝ հասան Վոսփոր, ուրկէ մտան Յունաստան, իրենց հայրենիքը: Բանակին առաջնորդը, Քսենոփոն, գրազէտ անձ մըն էր. անիկա գրեց գիրք մը, որուն մէջ պատմեց ու նկարագրեց ինչ որ իրենք տեսած էին երկար ճամբու ընթացքին: Քսենոփոն գեղեցիկ լեզուով մը պատմեց ինչ որ տեսաւ Հայաստանի մէջ: Անիկա շատ հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ մեր ժողովուրդին մասին, որուն կենցաղն ու սովորութիւնները գեղեցիկ կերպով նկարագրած է:

Քսենոփոն և յոյն զինուորները հիացան մեր լեռներուն, գետերուն և աղբիւրներուն գեղեցկութեան վրայ: Չմեռ էր երբ կ'անցնէին Հայաստանի մէջէն: Ամբողջ երկիրը, մինչև հինգ ոտք բարձրութեամբ, ծածկուած էր ձիւնով: Ամէն տեղ կը տեսնէին միայն սպիտակ ձիւն: Յոյն զինուորներէն շատեր չզիմացան ցուրտին ու մեռան: Անտանելի էր ցուրտը մանաւանդ լեռներուն վրայ:

Հայերը և յոյն զինուորները տեղ-տեղ կռիւներ ունեցան: Բայց Յոյները առհասարակ շատ ազնիւ ու լաւ հիւրասիրութիւն գտան Հայերէն: Քսենոփոն կ'ըսէ թէ սովահար յոյն զինուորները Հայաստանի մէջ առատօրէն գտան ցորեն, կենդանիներ, չամիչ, բանջարեղէններ և հին ու զմայլելի գինի: Հայերը լաւ կերակրեցին յոյն զինուորները: Քսենոփոն այսպէս կը նկարագրէ Հայոց տուները.

«Հայոց տուները շինուած են գետնի տակ: Անոնք վերէն ունին ջրհորի պէս բացուածք մը, ուրկէ սանդուխով վար կ'իջնեն: Կենդանիներու համար ուրիշ անցք մը կայ: Այդ տուներու մէջ գտանք մաքրիներ, կովեր, այծեր և հաւեր, ցորենի, գարիի և բանջարեղէններու հետ, և իբր ըմպելիք գարեջուրը, որ շատ բարկ էր երբ անոր մէջ չէինք խառներ ջուր, բայց շատ քաղցր կը թուէր Հայերուն, որոնք վարժուած էին անոր: Անոնք գարեջուրը կը խմէին եղէգով, որուն ամէն տեսակէն կար հոն: Այդ եղէգները առանց հանգոյցի էին և կը գտնուէին այն ամաններու մէջ, ուր կար գարեջուր, որուն վրայ տեսանք գարիներու լողալը...: Երբ սեւէ մէկուն կենացը խմելու ըլլայինք, պէտք է որ երթայինք և խմելու համար ծըռէինք, կենդանիի մը պէս, որ ջուր պիտի խմէ» (որովհետև գարեջուրի կարասները թաղուած էին հողի տակ):

#### ԲԱՅԱՏԵՐՆԻ ԲԱՌՈՒՄ

Կրտսեր, վարժկան, բիւր, նահանջ, պատմագիր, թալսաս (յունարէն թառ, կը նշանակէ «ծով»), րանակին առաջնորդը, գրագէտ, կենցաղ, ոտք, սովահար, բացուածք, բարկ:

### ԸՆԴԼԱՅՆՍԼԻ ԿԷՏՈՐ

- 1- Խօսիլ վարձկան զինուորներու մասին :
- 2- Շեշտիլ Հայաստանի բնութեան զեղեցկութիւնը :
- 3- Հայ ժողովուրդի հիւրասիրութիւնը :
- 4- Բիւր զինուորները Ասիան, աւելի ճիշդ՝ Պարսկական Տէրութիւնը ճանչցուցին Յունաստանի :

### ՀԱՐՅԱՐԱՆ

1- Ո՞վ էր Գրոսեր Գիւրոս: 2- Ի՞նչ կ'ուզէր ընել: 3- Որոնց մէ՞ջ օգնութիւն խնդրեց իր նպատակին հասնելու համար: 4- Ի՞նչ կը նշանակէ վարձկան զինուոր: 5- Ի՞նչպէս վերջացաւ Արտաշէսի եւ Գրոսեր Գիւրոսի կռիւը: 6- Գիւրոսի մահէն ետք յոյն զինուորները ի՞նչ ըրին: 7- Ի՞նչ կը կոչուի անոնց վերադարձը: 8- Ինչո՞ւ: 9- Ո՞վ էր նահանջող այս զինուորներու առաջնորդը: 10- Յոյն զինուորները ո՞ր երկիրներէն անցան՝ հասնելու համար իրենց հայրենիքը՝ Յունաստան: 11- Քսենոփոն ի՞նչ գրեց այս ճամբորդութեան մասին: 12- Հայաստանի մասին եւս գրե՞ց: 13- Յոյն զինուորները ո՞ր եղանակին անցան Հայաստանէն: 14- Հայերը ի՞նչ տեսակ ընդունելութիւն մը ըրին յոյն զինուորներու: 15- Յոյն զինուորները ի՞նչ գտան Հայաստանի մէջ: 16- Քսենոփոն ի՞նչպէս կը նկարագրէ հին Հայոց տուները: 17- Ըսե՛՛թ ի՞նչպէս կը խըմէին գարեջուրը :

### ՀՐԱՀԱՆԳ

Յոյց տալ քարտէսի վրայ այն երկիրները, ուրկէ անցան նահանջող յոյն զինուորները :

### ԱՂՐՈՒՐՆԵՐ

Քսենոփոն «Բիւրուն նահանջ»ի մասին գրած է իր «Անարագ» անունով գործին մէջ: Հայաստանի վերաբերող մասերն են Դ. Գրքին 1—8 գլուխները (տե՛ս Anabase, traduction française de Pierre Chambry, Librairie Garnier, էջ 121—159) :

Քսենոփոնի այս գործին Հայոց վերաբերեալ մասին թարգմանութիւնը կատարուած է եւ հրատարակուած եգիպտոսի «Պատանիին Գրադարանը» մատենաշարին մէջ [Թի. 15], «Հայաստան 2330 օտի առաջ» խորագրով, զոր կ'արժէ դասարանին մէջ կարդալ :



## ԺԸ. Դ Ա Ս

### ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Աշխարհի ամենէն նշանաւոր թագաւորներէն մէկը եղաւ Մեծն Աղեքսանդր (336—323 Ք. Ա.), որ իր երիտասարդ տարիքին՝ տիրեց ծանօթ հին աշխարհին: Մեծն Աղեքսանդր Յունաստանէն անցաւ Փոքր Ասիա, գրաւելու Պարսիկներու գերիշխանութեան տակ գտնուող երկիրները: Անիկա ունէր միայն 45 հազար զինուորներ, որոնք լաւ մարզուած էին: Պարսիկներու թագաւորն էր Դարեհ Կոսրուան, որ կէս միլիոն զինուորներով գնաց իր աշխարհակալութիւնը պաշտպանելու Մեծն Աղեքսանդրի դէմ:


ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԿԻՏԱՆՈՒԹԵԱՆ



Մեծն Աղեքսանդր Պարսիկներու նախ յաղթեց  
 Կրանիքոսի ճակատամարտին մէջ՝ 334 թուին (Ք. Ա.) :  
 Յետոյ Մեծն Աղեքսանդր ու Դարեհ կոտորման 333  
 թուին (Ք. Ա.) կռուեցան Իսուսի մէջ, ուր Դարեհ  
 չարաչար պարտուեցաւ իր կէս միլիոննոց բանակով :

Մեծն Աղեքսանդր յաղթական յառաջացաւ և գրա-  
 ւեց Ասորիքը, Փիւնիկէն, Պաղեստինը և եգիպտոսը,  
 ապա արշաւեց Միջագետք : Դարեհ կոտորման նոր բա-  
 նակ մը կազմեց արգիլելու Մեծն Աղեքսանդրի արշա-  
 ւանքը :

Մեծն Աղեքսանդր և Դարեհ կոտորման վերջին  
 անգամ՝ 331 թուին (Ք. Ա.) կռուեցան Արբելայի  
 մէջ, ուր Դարեհ կրկին պարտուեցաւ : Այսպիսով 331  
 թուականին (Ք. Ա.) վերջացաւ պարսկական աշխար-  
 հակալուծիւնը և Մեծն Աղեքսանդր տէր դարձաւ բո-  
 լոր այն երկիրներուն, որոնք կը գտնուէին Պարսիկ-  
 ներու գերիշխանութեան տակ :



**Մեծն Աղեքսանդրի դրամը**

Հայաստան ևս ինկաւ Մեծն Աղեքսանդրի գե-  
 րիշխանութեան տակ : Մեծն Աղեքսանդր, 330 թուին  
 (Ք. Ա.), Հայաստանի վրայ կուսակալ կարգեց Միհ-  
 րան անունով մէկը :

**ԸՆԴՂԱՅՆՆԵԼԻ ԿԷՏՈՐ**

- 1- Ներկայացնել Մեծն Աղեքսանդրի հայրը, կեանքը, աշ-  
 խարհակալութիւնը եւ նկարագիրը՝ հետաքրքրական դրուագներով :
- 2- Մեծն Աղեքսանդրի նպատակն էր Ասիոյ մէջ տարածել  
 յունական քաղաքակրթութիւնը :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Ո՞վ էր Մեծն Աղեքսանդրը : 2- Ո՞ր ճակատամարտները մղեց Պարսիկներու Դարեհ Գոտոման թագաւորին դէմ : 3- Մեծն Աղեքսանդր, Պարսիկներու յաղթելէ ետք, ո՞ր երկիրներու տէրը դարձաւ : 4- Պարսիկներու պարտութենէ ետք, Հայաստան որո՞ւն իշխանութեան տակ մտաւ : 5- Մեծն Աղեքսանդր զո՞վ կուսակալ կարգեց Հայաստանի վրայ : 6- Ո՞ր թուին :

**ՀՐԱՀԱՆԳ**

Յոյց տալ քարտէսի վրայ Մեծն Աղեքսանդրի յաջորդաբար գրաւած երկիրները :

**ԺԹ. Դ Ա Ս**

**ՀԱՅԱՍՏԱՆ ՍԵԼԵՒԿԵԱՆՆԵՐՈՒ  
ԳԵՐԻՇԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ**

Աղեքսանդր իր երիտասարդ տարիքին մէջ մեռաւ՝ 323 թուականին (Ք. Ա.) : Իր մահէն ետք, իր ընդարձակ կայսրութիւնը բաժան - բաժան եղաւ : Իր բազմաթիւ զօրավարները երկար ժամանակ կռուեցան իրարու դէմ : Վերջապէս Մեծն Աղեքսանդրի երկու զօրավարները՝ Պտղոմէոս և Սելեկոս Ա. բաժնեցին Աղեքսանդրի ընդարձակ կայսրութիւնը : Պտղոմէոս իշխեց Եգիպտոսի վրայ, իսկ Սելեկոս՝ Ասիոյ վրայ, 301 թուականին (Ք. Ա.) : Սելեկոսի յաջորդները կոչուեցան Սելեկեան թագաւորներ :



**Սելեկոս Ա. ի դրամը**

Հայաստան ևս ընականաբար ինկաւ Սելեկոսի գերիշխանութեան տակ :

Հայերը Սելեկեան թագաւորներու ժամանակ մնացին գրեթէ անկախ և յաճախ փորձեցին ապստամբիլ Սելեկեան թագաւորներու դէմ: Այս ժամանակ մեր երկիրը բաժնուած էր գլխաւոր երկու մասերու .

ա) Արևելեան կամ Մեծ Հայաստան և

բ) Արևմտեան Հայաստան կամ Մոփաց աշխարհ :

Մոփաց իշխանները յաճախ ապստամբեցան Սելեկեան թագաւորներու դէմ :



Անտիոքոս Գ. ի դրամը

Սելեկեան նշանաւոր թագաւոր մը՝ Անտիոքոս Գ., արշաւեց Մոփաց երկրին և Մեծ Հայաստանի վրայ, և երկուքը ևս իրեն ենթարկեց և անոնց վրայ իշխան կարգեց իր երկու զօրապետները՝ Չարեհը և Արսաէլսը :

**ԱՆՏԱՏՐԵԼԻ ԱՊՈՏՐ**

Մեծ Հայաստան (==Մեծ Հայք), Մոփաց աշխարհ :

**ԸՆԴԼԱՅՆՆԵԼԻ ԿԷՑ**

Ներկայացնել Սելեկեան թագաւորութիւնը :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Ե՞րբ մեռաւ Մեծն Աղեքսանդր : 2- Ի՞նչ պատահեցաւ Մեծն Աղեքսանդրի մահէն ետք : 3- Գողովէս և Սելեկոս ի՞նչպէս բաժնեցին Աղեքսանդրի ընդարձակ կայսրութիւնը : 4- Հայաստան որո՞ւն իշխանութեան տակ մտաւ : 5- Հայերը ի՞նչպէս ապրեցան Սելեկեան թագաւորներու ժամանակ : 6- Հայաստան քանի՞ մասերու բաժնուած էր : 7- Ի՞նչ ըրին Մոփաց իշխանները : 8- Ի՞նչ ըրաւ Անտիոքոս Գ. :

# ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

## Ի. Դ Ա Ս

### ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ԶԱՐԵՀ

Սելեկեան հսկայ թագաւորութիւնը սկսաւ հետզհետէ տկարանալ, որովհետեւ անիկա կազմուած էր բազմաթիւ ցեղերէ և երկիրներէ, զորս կառավարելը շատ դժուար էր: Հպատակ ազգերը յաճախ կը փորձէին ապստամբիլ:

Սելեկեան վերջին թագաւորներէն մին, Մեծն Անտիոքոս Գ. (222—186), շատ դժուարութեամբ կրցաւ զսպել ապստամբող ցեղերը:

Հայաստանի իշխանները ևս կը փորձէին ազատիլ Սելեկեաններու լուծէն: Անտիոքոս Գ. Հայաստանի ապստամբութիւնը զսպեց և անոր վրայ իշխան կարգեց իր զօրապետներէն՝ Արտաշէսը և Զարեհը:

Արտաշէս կուսակալն էր Մեծ Հայաստանի, իսկ Զարեհ՝ Ծոփաց աշխարհի:

Արտաշէս և Զարեհ կ'ուզէին իրենց կառավարած երկիրները անկախ դարձնել. բայց, բաւականաչափ ոյժ չունենալով, կը սպասէին յարմար առիթի՝ ապստամբելու Անտիոքոս Գ.ի դէմ:

Առիթը ներկայացաւ 190 թուին (Ք. Ա.):

Եւրոպայի մէջ երեւան եկած էր նոր և հզօր տէրութիւն մը, որ հետզհետէ կ'ընդարձակուէր և կը զօրանար: Հռոմայեցիներու պետքիւնն էր անիկա: Հռոմայեցիները եւրոպական ցամաքամասին տիրելէ ետք, կ'ուզէին իրենց աշխարհակալութեան տակ առնել նաև Ասիոյ հարուստ երկիրները: Հռոմայեցիները 190 թուին (Ք. Ա.) զօրաւոր բանակով մը մտան Ասիա:

Մեծն Անտիօքոս Գ. իր բանակով Հոռմայեցի-  
ներուն դէմ ելաւ :

Երկու հզօր տէրութեանց կռիւը տեղի ունեցաւ  
Մազնիսիայի մէջ՝ 190 թուին (Ք. Ա.) :

Հոռմայեցիները յաղթեցին Անտիօքոս Գ. ի :  
Հոռմայեցիներու բանակները գրաւեցին մինչև Տաւ-  
րոսեան Լեւնաշղթան :

Հայաստանի Արսաւէս և Զարեհ իշխանները  
տեսնելով չարաչար պարտութիւնը իրենց գերիշխա-  
նին՝ Անտիօքոս Գ. ի, անցան Հոռմայեցիներու կողմը  
և նոյնիսկ իրենք զիրենք «Թագաւոր» հռչակեցին :

Քաղաքագէտ Հոռմայեցիները բարեկամացան  
Հայաստանի ապստամբ իշխաններու հետ և զանոնք  
նկատեցին անկախ իշխաններ, որպէս զի Սելևկեան  
տէրութիւնը անդամահասուելով տկարանայ և  
իրենք, այսինքն Հոռմայեցիները, ապագային զիւրու-  
կարենան տիրել միւս երկիրներուն և իրենց աշխար-  
հակալութիւնը տարածեն աւելի հստուները :

Արտաշէս և Զարեհ սկսան գրաւել իրենց շրջա-  
կայ մանր երկիրները և հետզհետէ ընդարձակեցին  
իրենց երկիրները :

Արտաշէս կը փափաքէր որ մէկ հայրենիք  
կազմուի այն նահանգներով, ուր հայեր կային:  
Այսինքն կը փափաքէր որ հայերէն խօսող եւ հայ  
ցեղի պատկանող բոլոր մարդիկը մէկ սէրու-  
թեան մը իւրացնուրեան սակ զտնուին :

Արտաշէս նոյնիսկ կը փափաքէր որ Ծոփաց  
աշխարհը և Մեծ Հայաստանը իրարու միանան: Երբ  
Ծոփաց Զարեհ իշխանը մեռաւ 163 թուին (Ք. Ա.),  
Արտաշէս յարձակեցաւ Ծոփքի վրայ, գրաւելու և  
զայն Մեծ Հայաստանի միացնելու համար: Բայց կա-  
պազովկիոյ թագաւորը հակառակեցաւ Արտաշէսի,  
որովհետև անիկա չէր ուզեր իրեն գրացի ունենալ  
Արտաշէսի պէս զօրաւոր իշխան մը :

### Արտաւեստի դերը.

Հայոց ամենէն մեծ իշխաններէն մէկը եղաւ Արտաշէս: Անիկա շատ կարեւոր գործեր կատարեց:


1— Անիկա եղաւ հիմնադիրը Արտաշեսեան հարսութեան, 190 թուին (Ք. Ա.):

2— Արտաշէս կրցաւ միացնել հայերէն խօսող և հայ արիւնը կրող բոլոր մարդերը: Հայաստանի մէջ կային բազմաթիւ ցեղեր ու տոհմեր, որոնք ունէին տարբեր սովորութիւններ ու լեզուներ: Անոնք անջատ և ինքնագլուխ կը կառավարուէին: Արտաշէս այդ տոհմերէն ստեղծեց մէկ պագ, այսինքն Հայուքիւնը:

3— Արտաշէս ընդարձակեց մեր երկիրը: Անիկա գրաւեց շրջակայ նահանգները և միացուց Հայաստանի: Ուրեմն անիկա եղաւ աշխարհակալ մը:

4— Արտաշէս եղաւ շինարար իշխան մը. շինեց քաղաքներ, գիւղեր, կամուրջներ, մենեաններ և այլն: Արտաշէս կառոյց Արտաշատ քաղաքը երասի գետին եզերքը, որ յետոյ իր մայրաքաղաքը դարձաւ: Այս նշանաւոր քաղաքը շինուեցաւ Աննիբալի խորհուրդով, որ կարկեղոնացի մեծ զօրավար մըն էր և փախստական եկած էր Արտաշէսի քով: Արտաշէս մեռաւ մօտաւորապէս 160 թուին (Ք. Ա.):

Արտաշէս շատ սիրուեցաւ իր այս գործերուն համար. անիկա լաւ անուն մը թողուց հայ ժողովուրդին մէջ:



ԱՆՆԻԲԱԼ



**ԲԱՅԱՏՐԵՆԻ ԲԱՌԵՐ**

Մազնեսիա (նիրկայի Մանիսա, Իզմիրի թով), գերիշխան, քաղաքագետ, անդամահատուիլ, տոհմ, անջատ, ինքնագլուխ, շինարար, Կարկեղոն :

**ԸՆԴԼԱՅՆՆԻ ԿԷՏՈՐ**

1- Խօսիլ Հռոմայեցիներու մասին, շշտելով անոնց կարգապահութիւնն ու քաղաքագիտութիւնը :

2- Արտաշէսի դերը հայ ազգի կազմութեան գործին մէջ : — Հայաստանի հողին վրայ ապրող ժողովուրդները կատարելապէս կը ծուլուին եւ կը կազմեն մէկ ազգ՝ Արտաշէսի շնորհիւ : Առանց Արտաշէսի, պիտի չունենայինք Տիգրանի փառաւոր շրջանը, որ անմիջապէս կը յաջորդէ իր շրջանին :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

1- Ինչո՞ւ համար հետզհետէ տկարանալ սկսաւ Աելեկեան կայսրութիւնը : 2- Ի՞նչ ըրաւ Անտիոքոս Գ. : 3- Հայերը եւս կը փորձէին ապստամբիլ : 4- Անտիոքոս գորո՞նք իշխան կարգեց Հայաստանի վրայ : 5- Արտաշէս եւ Զարեհ Ի՞նչ կ'ուզէին ընել : 6- Որո՞նք էին Հռոմայեցիները եւ Ի՞նչ կ'ուզէին ընել : 7- Ե՞րբ եւ ո՞ւր Հռոմայեցիները յաղթեցին Անտիոքոս Գ.ի : 8- Անտիոքոսի պարտութենէն ետք, Ի՞նչ ըրին Արտաշէս եւ Զարեհ : 9- Ինչո՞ւ համար Հռոմայեցիները քաջալիրեցին Արտաշէսն ու Զարեհը : 10- Արտաշէս Ի՞նչ ծրագիր ունէր : 11- Ինչո՞ւ համար Արտաշէս յարձակեցաւ Ծոփքի վրայ : 12- Ցաշողեցա՞ւ : 13- Ինչո՞ւ : 14- Թուէ՞ք Արտաշէսի չորս կարեւոր գործերը : 15- Ինչո՞ւ պիտի սիրէիր Արտաշէսը :

**ՀՐԱՀԱՆԿ**

1- Ցոյց տալ քարտէսի վրայ Մազնեսիան, Տաւրոսեան Լեռնաշղթան, Արտաշատը (Երեւանի մօտ՝ հարաւ - արեւելքը) եւ Ծոփքը :

2- Գրաւոր խորհրդածել Արտաշէսի կատարած գործին մասին :



## ԵՌԱՄԱՆԱՅ ԵՐԱԳԻՐ

### Ա- ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՄԷՆՆԵՐՈՒ ԱՐՇԱԻԱՆՔԷՆ ԵՏՔ ( Է. ԴԱՐ Ք. Ա. )

ա — Հնդեհրոգապան Արմեններն ՈՒ ԲՆԻԿ ՈՒՐԱՐ-  
ՏԱՑԻՆԵՐԸ ԿԸ ՋՈՒԼՈՒԻՆ ԵՒ ԱՌԱՋ ԿԸ ԲԵՐԵՆ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ :

բ — ԽԱՌՆՈՒՐԴ ՑԵՂԵՐ

գ — ՀԱՅ ԵՒ ԱՐՄԷՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

### Բ- ՀԱՅԵՐԸ ՄԱՐԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ( Է. ԴԱՐԷՆ—550 ? Ք. Ա. )

ա — ԱՍՈՐԵՍԱՆՑԻՆԵՐԸ ԿԸ ՏԿԱՐԱՆԱՆ ԵՒ ՄԱՐԵՐԸ  
ԿԸ ՋՈՐԱՆԱՆ : ՄԱՐԵՐԸ ԿԸ ՅԱՂԹԵՆ ԱՍՈՐԵՍԱՆ-  
ՑԻՆԵՐՈՒ :

բ — Հնդեհրոգապան Արմենները Կ՝ՕԳՆԵՆ ՄԱՐԵ-  
ՐՈՒ :

գ — Հնդ. ԱՐՄԷՆՆԵՐԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԻՆ ՄԱՐԵՐԷ,  
ԻՍԿ ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐԸ Կ՝ԱՆՏԵՍՈՒՆ :

դ — ԵՐՈՒԱՆԻ ԹԱԳԱԻՈՐԸ Կ՝ԱՊՍԱՄԲԻ ՄԱՐԵ-  
ՐՈՒ ԴԷՄ՝ Զ. ԴԱՐՈՒՆ ( Ք. Ա. ) :

ե — ԿԻՒՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ( ԸՆԹԵՐՑՈՒՄ )

### Գ- ՀԱՅԵՐԸ ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ( 550 ?—331 Ք. Ա. )

ա — ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ ԿԻՒՐՈՍ ԻՇԽԱՆԻՆ ՋՈՐԱՑՈՒՄԸ

բ — ՀԱՅԵՐԸ ԵՆԹԱԿԱՅ ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ

գ — ՀԱՅՈՑ ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅՈՐԴԻՆ Կ՝ՕԳՆԷ ԿԻՒՐՈՍԻ :

դ — ՀԱՅԵՐԸ Կ ԱՊՍԱՄԲԻՆ ՊԱՐՍԻՑ ԴԷՄ՝  
ՃՁԹ ՅՈՒԻՆ ( Ք. Ա. ) . — ԴԱՐԵՂ Ա. ՎՇԱՍՊԵԱՆ  
ԴԺՈՒԱՐԱԻ ԿԸ ՋՍՊԷ ԱՅՍ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՆԸ .  
— ԲԵՀԻՍՏՈՒՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՆԸ

ե — ՊԱՐՍԻԿՆԵՐԸ ԻՆՋՊԷՍ ԿԸ ԿԱՌՎԱՐԷԻՆ ՀԱՅԱՍ-  
ՏԱՆԸ

[ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՁԴԵՑՈՒԹԻՆԸ ՀԱՅՈՑ ԿՐԱՅ ]

զ — ՆԱՀԱՆՋ ԲԻՒՐՈՒՆ. -1) - ՊԱՏՃԱՌԸ 2) - ԲՍԵ-  
ՆՈՓՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՆԸ

**Դ- ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ (331-323 Ք.Ա.)**  
**ԵՒ ՍԵԼԵՒԿԵԱՆՆԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ**  
**(323-190 Ք. Ա.)**

- ա — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿԻՋԱԿԸ ՍԵԼԵՒԿԵԱՆՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿ
- բ — ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԵՒՈՒՄԸ ԵՒ ՍԵԼԵՒԿԵԱՆՆԵՐՈՒ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՑԿԱՐԱՑՈՒՄԸ
- գ — ԱՆՏԻՈՔՐՈՍ Գ.
- դ — ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ԶԱՐԵԷ
  - 1. ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ (190-ԻՆ Ք. Ա.)
  - 2. ԱՐՏԱՇԷՍԻ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ԾՐԱԳԻՐԸ
  - 3. ԱՐՏԱՇԷՍԻ ԴԵՐԸ

**ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱՐՄ-ՏՈՒԹԵԱՆ ԹԱԳԱԻՈՐՆԵՐՈՒ**

- 1- Արտաշէս Ա. 190—160 (Ք. Ա.)
- 2- Արտաւազդ Ա. 160—123 (Ք. Ա.)
- 3- Տիգրան Ա. 123—95 (Ք. Ա.), *Հայերը Մեծն Տիգրան :*
- 4- Մեծն Տիգրան Բ. 95—54 (Ք. Ա.), *Աշխարհակալ :*
- 5- Արտաւազդ Բ. 54—33 (Ք. Ա.), *Որդին Մեծն Տիգրանի :*
- 6- Արտաշէս Բ. 33—20 (Ք. Ա.)
- 7- Տիգրան Գ. 20—6 (Ք. Ա.)
- 8- Տիգրան Գ. Խ Երասոյ 6 (Ք. Ա.) — 1 (Քրիստոսի ծննդեան տարին).

**ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ ԿՈՂՄԷ**

Հանցոց Արտաշէս թագաւորէն ետք, մենք ունեցանք քանի մը թագաւորներ, որոնք չեն կատարած ունէ կարեւոր գործ: Ուստի անոնցմով չենք զբաղիր և կ'անցնինք ուղղակի Մեծն Տիգրանի :



Հայոց Պատմութեան ամենէն նշանաւոր քագաւորը, որուն ժամանակ Հայերը ոչ միայն ամբողջովին անկախ դարձան, այլ նաեւ իօխեցին իրենց օրջակայ երկիրներու վրայ: Տիգրան եղաւ Հայոց մեծագոյն աշխարհակալ քագաւորը:

# ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ Բ. (95-54 Բ. Ա.)

## ԻԱ. Դ Ա Ս

### ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Հայոց Պատմութեան ամենէն նշանաւոր թագաւորը եղաւ Մեծն Տիգրան Բ., որ որդին էր Տիգրան Ա.ի: Մեծն Տիգրան թագաւոր ըլլալէ առաջ, իբրեւ պատանգ զրկուած էր Պարթեւներու երկիրը: Երբոր իր հայրը մեռաւ, Պարթեւները թոյլ տուին որ Տիգրան Բ. բարձրանայ Հայոց գահը, պայմանաւ որ Հայաստանի արեւելեան մասէն 70 հովիտներ տայ իրենց: Տիգրան Պարթեւներու ձգեց 70 այդ հովիտները և Պարթեւներու երկրէն գալով՝ բարձրացաւ Հայոց գահը՝ 95 թուականին (Բ. Ա.): Մեծն Տիգրան 45 տարեկան էր երբ գահ բարձրացաւ :

### ՀՈՒՍԱՅԵՑԻՆԵՐԸ, ՊՈՆՏԱՑԻՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Տիգրանի գահակալութեան ժամանակ աշխարհի ամենէն զօրաւոր ակերթիւնն էին Հռոմայեցիները: Անոնք, շնորհիւ իրենց մարզուած, կարգապահ և զօրաւոր բանակին, գրաւած էին բազմաթիւ երկիրներ և հասած էին մինչև Տաւրոսեան Լեռնաշղթան և կապողովկիս: Հռոմայեցիները վճռած էին գրաւել նորանոր երկիրներ, ինչպէս կապաղովկիան, Պոնտոսը և այլն :

Հայաստանի հիւսիս - արեւմտեան կողմը կար Պոնտոսը, որուն թագաւորն էր Միհրդատ Եւպատոս: Միհրդատ թէպէտ ցեղով պարսիկ էր, բայց հեղինակէր արքայ մըն էր: Միհրդատ խելացի և



ՄԻՀՐԴԱՏ

մար Հոռոմայեցիներու անարկու բանակներուն ։

Իսկ Հայաստանի մէջ Տիգրան քաղաւորը կը փափաքէր նոյնպէս իր երկիրը ընդարձակել ։ Ուրեմն Քրիստոսէ դար մը առաջ Առաջաւոր Ասիոյ մէջ կազմուած էին երեք մեծ տէրութիւններ, որոնք իրարու դէմ պիտի բախէին, որոշելու համար Ասիոյ գերիշխանը ։

### ՏԻԳՐԱՆ ԵՒ ՄԻՀՐԴԱՏ ԿԸ ԴԱՇՆԱԿՑԻՆ

Մեծն Տիգրան, գահ բարձրանալէ քիչ ետք, յարձակեցաւ Ծոփաց Արտանէս իշխանին վրայ, սպաննեց զայն և անոր երկիրը միացուց Մեծ Հայաստանի ։ Ծոփաց աշխարհը գրաւելէ ետք, Տիգրան ուզեց արբել նաև Կապադովկիոյ ։ Բայց հիւսիսէն Միհրդատ, իսկ արևմուտքէն Հոռոմայեցիները կ'ուզէին նոյնպէս գրաւել Կապադովկիան ։ Միհրդատ իմաստուն գտնուեցաւ ։ Փոփանակ Տիգրանի դէմ կռուելու, բարեկամացաւ անոր հետ ։ Իր Կղէոպատրա աղջիկը կնութեան տուաւ Տիգրանի ։ Այսպիսով Տիգրան և Միհրդատ դարձան ազգական ու դաւեմակից, Անոնք միասնաբար 91 թուին (Ք. Ա.) գրաւեցին Կապադովկիան ։

Տիգրան ու Միհրդատ որոշեցին գրաւել իրենց շրջակայ երկիրները ։ Միհրդատ պիտի գրաւէր այն երկիրները, որոնք իր հայրենիքին արևմտեան կողմը կը գտնուէին, իսկ Տիգրան պիտի գրաւէր Հայաստանի հարաւային և արևելեան կողմը գտնուող երկիրները ։

## ՄԻՀՐԴԱՏ ԿԸ ԳՐԱԻԷ ՆՈՐ ԵՐԿԻՐՆԵՐ

Կապագոովկիոյ արիւիէ կտք , Միհրդատ մեծ պատրաստութիւններ տեսաւ գրաւելու համար այն երկիրները , որոնք կը գտնուէին Կապագոովկիոյ արեւմուտքը և կը պատկանէին Հռոմայեցիներու : Միհրդատ կ'ուզէր Հռոմայեցիները Ասիայէն վռնտել , որովհետեւ անոնք կրնային օր մը իր հայրենիքը գրաւել :

Միհրդատ բազմաթիւ զինուորներով յարձակեցաւ Փոքր Ասիոյ վրայ և գրաւեց զայն : Յետոյ յառաջացաւ մինչև Յունաստան , զոր նոյնպէս գրաւեց : Իոյոր Յոյները մեծ ուրախութեամբ զիմաւորեցին Միհրդատը , որովհետեւ անիկա հեղինատէր թագաւոր մըն էր :

Հռոմայեցիները Միհրդատի գէժ զրկեցին Սիլլա զօրավարը : Սիլլա եկաւ և յաղթեց Միհրդատի և անոր ձեռքէն խլից գրաւուած երկիրները , 89 թուին ( Ք . Ա . ) :

### ՌԱՅԱՏՐԵԼԻ ԲԱՌԵՐ

Դահակալութիւն , պատանդ , Գոնոսս , հեղինատէր , դիւանագէտ :

### ԸՆԴԼԱՅՆՆԻԿ ԿԷՏՈՐ

1- Միհրդատ խելացի եւ դիւանագէտ թագաւոր մըն էր : Անիկա հեղինատէր թագաւոր մըն էր եւ կը փափաքէր որ Ասիոյ մէջ տարածուի յունական բարձր քաղաքակրթութիւնը : Անիկա նաեւ կ'ուզէր տիրել յունական երկիրներու վրայ : — Հակառակորդ էր Հռոմայեցիներու եւ չէր ուզեր որ անոնք յառաջանան Փոքր Ասիոյ մէջ , որովհետեւ այդպիսով օր մըն ալ իր հայրենիքը պիտի իյնար անոնց լուծին տակ :

2- Տիգրան գրաւեց Յոփքը : Ասով լրացաւ Հայաստանի միութիւնը , այսինքն բոլոր այն երկիրները , ուր Հայեր կային , կազմեցին մէկ հայրենիք եւ ունեցան մէկ արքայ , որ այս ժամանակ եղաւ Տիգրան :

3- Հին թագաւորները խնամիական կապերով կ'ամրացնէին իրենց զինակցութիւնը : Միհրդատ ատոր համար է որ իր աղջիկը կնութեան տուաւ Հայոց Տիգրան արքային :

### ՀԱՐՑԱՐԱՆ

1- Ո՞վ եղաւ Հայոց Պատմութեան ամենէն նշանաւոր թագաւորը : 2- Որո՞ւն որդին էր Տիգրան Բ. : 3- Տիգրան Բ., թագաւոր ըլլալէ առաջ, ո՞ւր տարուած էր : 4- Ի՞նչ պայմանով ազատեցաւ եւ թագաւոր եղաւ : 5- Ո՞ր թուին թագաւորեց : 6- Քանի՞ տարեկան էր երբ թագաւոր եղաւ :

7- Տիգրանի գահակալութեան ժամանակ որո՞նք էին ամենէն զօրաւոր ազգը : 8- Հռոմայեցիները ի՞նչ ծրագիր ունէին : 9- Ո՞վ էր Միհրդատ : 10- Ի՞նչ տեսակ թագաւոր մըն էր : 11- Ի՞նչ ծրագիր ունէր : 12- Հայոց Տիգրան Բ. արքան ի՞նչ կ'ուզէր ընել :

13- Տիգրան Բ. ո՞ւր յարձակեցաւ, երբ նոր գահ յարձրացած էր : 14- Յոփքէն ետք, կրցա՞ւ յառաջանալ դէպի Գապաղովկիա : 15- Միհրդատ ինչո՞ւ դաշնակից եղաւ Տիգրանի հետ : 16- Ի՞նչ որոշում տուին Տիգրան եւ Միհրդատ :

17- Միհրդատ ո՞ր ուզողութեամբ գրաւումներ պիտի ընէր : 18- Ինչո՞ւ համար Միհրդատ կ'ուզէր Հռոմայեցիները Ասիայէն վճնտել : 19- Միհրդատ ո՞ր երկիրները գրաւեց : 20- Յոյները ի՞նչպէս ընդունեցան Միհրդատը : 21- Ինչո՞ւ : 22- Հռոմայեցիները զո՞վ զրկեցին Միհրդատի դէմ : 23- Սիլլա կրցա՞ւ յաղթել :

## Ի Բ. Դ Ա Ս

### ՏԻԳՐԱՆ ՆՈՐԱՆՈՐ ԵՐԿԻՐՆԵՐ ԿԸ ԳՐԱԻԷ



Մեծն Տիգրանի դիմանկարը

Երբ Միհրդատ Հայաստանի տրեւմուտքը զբաղած էր կռիւններ ընելով Հռոմայեցիներու դէմ, Մեծն Տիգրան յարձակեցաւ Հայաստանի հարաւային և արեւելեան կողմը գտնուող երկիրներու վրայ և գրաւեց զանոնք :

Մեծն Տիգրան շահեցաւ հետեւեալ յաղթանակները .

## ՏԻԳՐԱՆ ԿԸ ՅԱՂԹԷ ՊԱՐԹԵՒՆԵՐՈՒ

Տիգրան, 88 թուին (Ք. Ա.), նախ յարձակեցաւ Պարթևներու վրայ, որոնց զէմ ատելութիւն ունէր, որովհետև անոնք զինք իբր պատանդ պահած էին և իրմէ 70 հովիտներ առած։ Այս ժամանակ, երբ Տիգրան կը յարձակէր Պարթևներու վրայ, Պարթևներու երկրին մէջ տեղի կ'ունենար գահակալական կռիւ, որովհետև անոնց թագաւորը սպաննուած էր և անոր տեղ նոր մը յաջորդած։ Տիգրան այս առիթը օգտագործելով, յարձակեցաւ Պարթևներու վրայ։ Յաղթեց անոնց և ետ առաւ իր տուած 70 հովիտները։ Պարթևներու յաղթելէ ետք, Տիգրան տիրացաւ Վրասանի, Աղուանից երկրի, Ասրպասականի, Մարասանի, Կորդուֆի, Ասորեսանի, Միջագետքի և Եդեսիոյ, որոնք մեծ մասամբ նախապէս կը գտնուէին Պարթևներու գերիշխանութեան տակ։ Պարթևներու տեղ զօրացաւ և աշխարհակալ տէրութիւն մը դարձաւ Հայոց թագաւորութիւնը։ Տիգրան կոչուեցաւ «արքայից արքայ», որ Պարթևներու թագաւորին տիտղոսն էր։ Այսպիսով Տիգրան Պարթևներէն լուծեց իր վրէժը։


Գրաւուած այս երկիրներու թագաւորները դարձան ստրուկները Մեծն Տիգրանի։ Այս պարտուած թագաւորները խաղաղութեան ժամանակ Տիգրանի տուրք կու սային, իսկ պատերազմի ժամանակ՝ զինուոր։

## ՏԻԳՐԱՆ ԿԸ ՅԱՂԹԷ ՍԵԼԵՒԿԵԱՆՆԵՐՈՒ

Մեծն Տիգրան չքաւականացաւ գրաւուած այս երկիրներով. ան շարունակեց իր աշխարհակալութիւնը։

Սելևկեաններու թագաւորութիւնը այս ժամանակ շատ էր սկարացեր, ներքին գահակալական կռիւներով։ Չորս եղբայրներ իրարու զէմ անվերջ կռիւ կը մղէին՝ թագաւոր ըլլալու համար։ Երկիրը աւերուած էր։ Ամէն կողմ տարածուեր էին արիւնն ու թշուառութիւնը։ Սելևկեան ժողովուրդը ձանձրացած էր և

ՄԵՐ ՏԻՐԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԿԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍԻՆ



յոգնած այս եղբայրասպան կռիւներէն: Անոնք կը փափաքէին կտաւարուիլ օտար թագաւորով մը: Ճիշդ այս ժամանակ Մեծն Տիգրան հսկայ բանակով մը, որ մտաւորապէս 500,000 զինուորէ բաղկացած էր, մտաւ Ասորիք՝ Սելեկեաններու երկիրը: Սելեկեանները սարսափեցան Տիգրանի ոյժէն և առանց դիմադրելու մտան Տիգրանի գերիշխանութեան սակ (83 Ք. Ա.):

Տիգրան մտաւ Անիոնք, որ Սելեկեաններու մայրաքաղաքն էր: Տիգրան 18 տարի իշխեց Սելեկեաններու երկրին, այսինքն Ասորիքի վրայ (83—65 Ք. Ա.):

## ՏԻԳՐԱՆԻ ՈՒՐԻՇ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Տիգրան, Ասորիքը գրաւելէ ետք, յարձակեցաւ Կիլիկիոյ վրայ և զայն գրաւեց ու միացուց իր թագաւորութեան: Կիլիկիայէն ետք, Տիգրան յարձակեցաւ Կապադովկիա, գրաւեց զայն և անկէ 300.000 յոյն գաղթականներ փոխադրեց Տիգրանակերտ, զոր Տիգրան այս ժամանակ սկսած էր շինել:

Տիգրան յարձակեցաւ նաև Փիւնիկէի վրայ և գրաւեց զայն: Տիգրան մտադրած էր արշաւել նաև Պաղեստին: Բայց Պաղեստինի Աղեֆաւսիսա թագուհին ընծաներ ու պատգամաւորներ ղրկեց և իր հպատակութիւնը յայտնեց Տիգրանի:

## ՏԻԳՐԱՆԻ ՓԱՌՔԸ

Այս բոլոր երկիրները գրաւելէ ու անոնց տիրելէ ետք, Տիգրան դարձաւ Առաջաւոր Ասիոյ մեծագոյն արքան: Անիկա կոչուեցաւ «արքայից արքայ»: Ինքնիրեն նոյնիսկ տուաւ «աստուած» մականիւրը: Տիգրան ժողովուրդին կը ներկայանար շատ պերճ հագուստներով: Չորս ստրուկ թագաւորներ կը կենային իր գահին երկու կողմերը՝ իրենց ձեռքերը ծալլած: Երբ Տիգրան ձի նստէր, այդ ստրուկ թագաւորները իր առջեւէն հեախտան կ'երթային:

Տիգրան իր անունով գրամ ձուլել սուաւ , որուն վրայ տպեց իր պատկերը :



Մեծն Տիգրանի գրամը

Տիգրանի աշխարհակալութեան սահմաններն էին . հիւսիսէն Պոնտոս , Կովկասեան Լեռնաշղթայ և Կասպից Լիճ : Հարաւէն՝ Արարական Անապատը : Արեւելքէն՝ Պարթևներու երկիրը , իսկ արեւմուտքէն՝ Կապադովկիա և Միջերկրական Ծով :

**ԱՍՏՈՍՏՐԵԼԻ ԱՒՌԻՆԻ**

Գահակալական կռիւ , մակդիր , պերճ հագուստ :

**ԸՆԴԼԱՅՆՍԼԻ ԿԷՏՈՐ**

- 1- Գահակալական կռիւները կը տկարացնեն երկիրը : Վերջնել այս դասէն երկու օրինակներ [Պարթևները եւ Սելեւկեանները:]
- 2- Հայաստան իր փառքին գագաթնակէտին հասաւ Մեծն Տիգրանի ժամանակ :

**ՀԱՐՑԱՐԱՆ**

- 1- Մեծն Տիգրան ո՞ր ուղղութեամբ տարածեց իր աշխարհակալութիւնը :
- 2- Աճեցնէն առաջ որո՞նց վրայ յարձակեցաւ :
- 3- Ինչո՞ւ :
- 4- Երբ Տիգրան կը յարձակէր Պարթևներու վրայ , ի՞նչ տեղի կ'ունենար անոնց հայրենիքին մէջ :
- 5- Տիգրան կրցա՞ւ յաղթել :
- 6- Ո՞ր երկիրներուն տիրացաւ Տիգրան , յաղթելով Պարթևներու :
- 7- Տիգրան ի՞նչ տիրոջո շահեցաւ :
- 8- Պարտուած թագաւորները ի՞նչ պարտաւորուեցան ընել Տիգրանի հանդէպ :
- 9- Այս ժամանակ ինչո՞ւ տկարացեր էր Սելեւկեան թագաւորութիւնը :
- 10- Սելեւկեաններու երկիրը (=Ասորիք) ի՞նչ վիճակի ենթարկուեր էր :
- 11- Սելեւկեան ժողովուրդը ի՞նչ կը փափարէր :
- 12- Մեծն Տիգրան ո՞րքան զօրքով մտաւ Ասորիք :
- 13- Յաղթե՞ց :
- 14- Տիգրան քանի՞ տարի իշխեց Սելեւկեաններու երկրին վրայ :
- 15- Ասորիքէն ետք Տիգրան ո՞ր երկիրներու վրայ եւս յարձակեցաւ :
- 16- Պատմէ՞ Տիգրանի փառքը :
- 17- Տո՞ւր Տիգրանի աշխարհակալութեան սահմանները :

ԸՆԹԵՐԵՑՈՒՄ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Մեծն Տիգրանի այս ընդարձակ պետութեան համար անհրաժեշտ էր նոր ու մեծ մայրաքաղաք մը: Նախկին մայրաքաղաքն էր Արաաշատը, որ երկրին հիւսիսը կը գտնուէր: Պէտք էր նոր մայրաքաղաք մը հիմնել երկրին կեդրոնը: Տիգրան Հայաստանի հարաւային կողմը, Տիգրիս գետին ձախակողմը, վայր մը ընտրեց, որ ռազմագիտական կարեւոր դիրք մը ունէր: Տիգրան սկսաւ շինել տալ այս քաղաքը, զոր շրջապատեց բարձր ու հաստ պարիսպներով: Այս քաղաքը Տիգրանի անունով կոչուեցաւ **Տիգրանակերտ**:

Քաղաքը ունէր անտուիկ միջնաբերդ մը և շքեղ պալատ մը, ինչպէս նաև որսի վայրեր ու պարտէզներ:

Տիգրան, այս քաղաքը բազմամարդ դարձնելու համար, յարձակեցաւ Կապադովկիոյ վրայ, որուն բնակիչներէն 300.000 հոգի իբր գերի բերաւ և անոնցմէ մաս մը բնակեցուց Տիգրանակերտի մէջ: Կիլիկիոյ, Ասորիքի, Փիւնիկէի, Կորդուքի, Ասորեստանի և Մարաստանի բնակիչներէն ևս բերաւ ու բնակեցուց Տիգրանակերտի մէջ:

Իսկ Հայաստանի ազնուականներն ու իշխանները ստիպեց որ երթան ու բնակին Տիգրանակերտի մէջ:

Տիգրանակերտ դարձաւ բազմամարդ, շքեղ ու մեծ քաղաք մը: Դժբախտաբար այս նշանաւոր քաղաքի բնակիչներուն մեծամասնութիւնը բաղկացած էր օտարականներէ: Մասնաւորաբար շատ յոյներ կային, որովհետև Տիգրան ճելլեմաւէր էր: Անիկա իր պալատը հրաւիրեց յոյն արուեստագէտներ ու գրագէտներ:



## Ի Գ. Դ Ա Ա

### ՄԻՀՐԴԱՏ ՆՈՐԷՆ ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒՄԱՅԵՑԻՆԵ- ՐՈՒ ԴԷՄ ԵՒ ԿԸ ՊԱՐՏՈՒԻ

Պոնտոսի Միհրդատ թագաւորը անվնաս մէկն էր. անիկա դիւրաւ չէր յուսահատեր: Սիլլալէն պարտուելէն ետք՝ 89 թուին (Ք. Ա.), անիկա վերստին պատրաստութիւններ տեսաւ, որպէս զի Հոռոմայեցիներու ձեռքէն նորէն գրաւէ իր կորսնցուցած երկիրները: Միհրդատ կազմակերպեց հսկայ բանակ մը և զօրաւոր նաւատորմիդ մը: Անիկա յաջողեցաւ նորէն տիրել ամբողջ Փոքր Ասիոյ :

Հոռոմայեցիները երբ տեսան Միհրդատի նոր յաջողութիւնները, որոշեցին կողուիլ անոր դէմ: Անոնք Փոքր Ասիոյ վերջնականօրէն տիրելու համար, զրկեցին Լուկուլլոս մեծ զօրավարը՝ 72-ին: Քանի մը կռիւներէ վերջ, Միհրդատ չարաչար պարտուեցաւ Լուկուլլոսէն և փախաւ Տիգրանի մօտ: Տիգրան, երբ տեսաւ թէ իր աները դարձեալ պարտուած է, չուզեց անոր երեսը տեսնել և բարկացած զայն զրկեց Հայաստանի ճահճահուստ մէկ տեղը...: Լուկուլլոս հալածեց Միհրդատը մինչև Հայաստանի սահմանները: Լուկուլլոս չըհամարձակեցաւ մտնել Հայաստան, որովհետև կը փախնար Տիգրանէն: Լուկուլլոս այսպէս կ'ըսէր իր բանակին՝ Տիգրանի մասին. «Տիգրան չառ զօրաւոր է. անիկա Ասիան խլած է Պարթեներէն...: Անիկա կ'իշխէ Ասորիքի և Պաղեստինի վրայ: Սելեկիան երեք թագաւորները մահուան դատապարտեց և անոնց կիներն ու աղջիկները գերի դարձուց: Տիգրան բարեկամն է ու փեսան Միհրդատի. կրնայ անոր օգնել ու մեզի դէմ պատերազմիլ: Եթէ Միհրդատը հալածենք՝ մեծ վտանգի պիտի հանդիպինք ու մեր վրայ պիտի հրաւիրենք ուշադրութիւնը Տիգրանի, որ պատրուակ կը փնտռէ մեր վրայ յարձակելու համար: Ուրեմն Միհրդատը հալածելով՝ ստիպելու չենք որ Տիգրան

օգնէ Միհրդասի՝ մեր դէմ կռուելու համար . . . »

Լուկուլլոս տիրեց Փոքր Ասիոյ բոլոր երկիրնե-  
րուն մինչև Հայաստանի սահմանները : Անիկա գրաւեց  
նաև Պոնտոսը՝ Միհրդասի երկիրը : Լուկուլլոս իր  
այս գրաւած երկիրները սկսաւ կանոնաւոր կերպով կա-  
ռավարել ու զանոնք Հռոմայեցիներու հպատակեցնել :

## ԼՈՒԿՈՒԼԼՈՍ ԿԸ ՊԱՇԱՆՁԷ ՄԻՀՐԴԱՏԸ

Միհրդասի յաղթելէ ետք, Լուկուլլոս 70 - ին  
(Ք. Ա.) իր Ապպիոս Կլաւդոս անունով փոխա-  
նորդը պատգամաւոր ղրկեց Հայաստան՝ Տիգրանի  
մօտ, պահանջելու համար Միհրդասը :

Տիգրան այս ժամանակ Հայաստան չէր գտա-  
նուեր. անիկա կը կռուէր Փիւնիկէի մէջ : Ապպիոս  
Կլաւդոս, Լուկուլլոսի պատգամաւորը, երբ իմացաւ թէ  
Տիգրան Հայաստանէն բացակայ է, անմիջապէս վերա-  
դարձաւ Անտիոք, ուր սպասեց Տիգրանի : Ապպիոս  
Կլաւդոս, Տիգրանի բացակայութենէն օգտուելով,  
սկսաւ Տիգրանի դէմ գաղտնաբար գրգռել այն թագա-  
ւորներն ու ժողովուրդները, որոնք Տիգրանի հպատա-  
կած էին : (Ասիկա Հռոմայեցիներու դիւանագիտու-  
թիւնն էր) Իսկապէս Ապպիոս Կլաւդոս կրցաւ շա-  
տերը լարել Տիգրանի դէմ :

Տիգրան գրաւեց Ասորիքի հարաւային մասն  
ալ և յաղթական վերադարձաւ Անտիոք, ուր իրեն կը  
սպասէր Ապպիոս Կլաւդոս, Հռոմայեցի դեսպանը :

Տիգրան ուզեց մեծ տպաւորութիւն ձգել Հռո-  
մայեցի դեսպանին վրայ. ուստի այսպէս ընդունեցաւ  
Ապպիոս Կլաւդոսը :

Տիգրան նստած էր ոսկեհուռ բարձր գահի վրայ,  
չըջապատուած թագաւորներով, զօրավարներով, բար-  
ձրաստիճան պալատականներով ու խորհրդականներով :  
Հագած էր ծիրանի հագուստ, ձեռքին՝ թագաւորական  
գաւազանը և գլխուն՝ մարգարտաշար բարձր թագը :

Քիչ ետք Ապպիոս համարձակութեամբ մտաւ  
արքայական սրահը և յարգանքով բարեկեց Տիգրանը

և անոր յանձնեց Լուկուլլոսի նամակը , որուն մէջ Լուկուլլոս կը պահանջէր Միհրդատի յանձնումը : Այս նամակին մէջ Լուկուլլոս «արքայից արքայ» արտոգորել էր տուած Տիգրանի : Տիգրան կարգաց և շատ վիրտուորուեցաւ այս անարգանքէն :

Ապպիուս համարձակութեամբ պահանջեց Միհրդատը , Հռոմայեցիներու մեծ թշնամին , և աւելցուց .

— Եթէ փախստական Միհրդատը չյանձնուի Հռոմայեցիներուն , անմիջապէս Լուկուլլոս պիտի արշաւէ Հայաստան :

Տիգրան մերժեց և պատասխանեց .

— Չեմ կրնար իմ աներս ու հիւրս յանձնել ձեզի՛ , Հռոմայեցիներուդ : Եթէ վեհանձնութեանս փոխարէն պատերազմ ուզէք , կրնամ ինքզինքս պաշտպանել , իսկ Միհրդատը երբե՛ք չեմ կրնար յանձնել . . . :

Ապպիուսի տուած իր այս պատասխանին պէս՝ Տիգրան Լուկուլլոսի նամակ մը գրեց , որուն մէջ ինքն ալ Լուկուլլոսի շտուաւ «իմպերատոր» արտոգորել , որ յաղթական ու աշխարհակալ Հռոմայեցի զօրավարներուն կը արուէր : Տիգրան թանկագին ընծաներ տուաւ Ապպիուսի , որ սակայն մերժեց և բաւականացաւ միայն թանկագին բաժակ մը առնելով :

### ԲԱՅԱՏՐԵՒԻ ԲԱՌԵՐ

Անվհատ, նաւատորմիդ, անիր, ճահճահուտ, պատրուակ, փոխանորդ, պատգամաւոր, լարել, դեսպան, ոսկեհուռ, բարձրատիծան պալատական, խորհրդական, մարգարտաշար, « իմպերատոր » :

### ԸՆԴԼԱՅՆՍԼԻ ԿԷՏԵՐ

1- Ենչտուի Միհրդատի անվհատ եւ յարատեւ ոգին : — Միհրդատ մէկէ աւելի անգամներ պարտուեցաւ Հռոմայեցիներէն ու չյուսահատեցաւ :

2- Ապպիուս Պլաւդոս, իբրեւ դիւանագէտ Հռոմայեցի մը, Տիգրանի դէմ կը զրգռէ հպատակ ժողովուրդները : Այս պարագան ներկայացնել իբրեւ հռոմէական դիւանագիտութեան օրինակ :

3- Տիգրան իր պարտուած աները չպատուեց, բայց զայն չյանձնեց Հռոմայեցիներու : Ենչտուի Տիգրանի վեհանձնութիւնը :

4- Ապպիուս Պլաւդոս մերժեց ընդունիլ Տիգրանի նուէրը : — Ենչտուի հռոմայեցի դեսպանին անկաշառ ոգին :

**ՀԱՐՑԱՌԱՆ**

1- Ի՞նչ տեսակ մէկն էր Միհրդատ: 2- Սիլլայէն պարտուելէ ետք ի՞նչ ըրաւ: 3- Հռոմայեցիները ի՞նչ ըրին, երբ իմացան Միհրդատի նոր յաջողութիւնները: 4- Լուկուլլոս կրցա՞ւ յաղթել Միհրդատի: 5- Լուկուլլոս մինչև ո՞ւր հալածեց Միհրդատը: 6- Լուկուլլոս ինչո՞ւ համար չմտաւ Հայաստան եւ ի՞նչ ըսաւ իր բանակին Տիգրանի մասին: 7- Լուկուլլոս ի՞նչ ըրաւ իր նոր գրաւած երկիրները :

8- Լուկուլլոս ինչո՞ւ համար Տիգրանի մօտ դրկեց Ապպիոս Կլաւդոսը: 9- Ո՞ւր գնաց Ապպիոս Կլաւդոս: 10- Ի՞նչ ըրաւ Անտիոքի մէջ: 11- Տիգրան ի՞նչպէս ընդունեցաւ Ապպիոս Կլաւդոսը, երբ Հայաստան վերադարձաւ: 12- Պատմէ՛ Տիգրանի եւ Ապպիոսի տեսակցութիւնը: 13- Ինչո՞ւ համար Տիգրան մերժեց յանձնել Միհրդատը: 14- Տիգրան ի՞նչ պատասխան գրեց Լուկուլլոսի: 15- Ապպիոս ինչո՞ւ համար մերժեց Տիգրանի նուէրը :

**ԻՒ. Գ Ա Ս**

**ԼՈՒԿՈՒԼԼՈՍ Կ՝ՈՐՈՇԷ ԿՌՈՒԻԼ ՏԻԳՐԱՆԻ ԴԷՍ**

Ապպիոս Կլաւդոս մեկնեցաւ Տիգրանի պալատէն :

Լուկուլլոս, Հայաստանի արեւմուտքը բանակ դրած, անհամբեր կը սպասէր Ապպիոսի բերելիք պատասխանին: Բաւական ժամանակ ետքը, վերջապէս Ապպիոս վերադարձաւ Լուկուլլոսի բանակը: Լուկուլլոս Ապպիոսէն իմացաւ թէ Տիգրան մերժած է Միհրդատը յանձնել: Ուստի Լուկուլլոս վճռեց պատերազմիլ Տիգրանի հետ, Միհրդատը ոչնչացնելու համար: Ուրեմն պիտի սկսէր պատերազմը Հայոց եւ Հռոմայեցիներու միջև :

**ՏԻԳՐԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ**

Տիգրան եւ, Ապպիոսի մեկնելէն ետք, սկսաւ պատրաստութիւններ տեսնել՝ մօտալուտ պատերազմի համար: Հռոմայեցիներու դէմ յաջող պատերազմ մը ընելու համար, Տիգրան հասկցաւ թէ պէտք է դիմել Միհրդատի խորհուրդներուն, որովհետեւ Միհրդատ Հռոմայեցիներու դէմ բազմաթիւ պատերազմներ մղած էր, փորձառու եղած էր եւ գիտէր անոնց յաղթելու կերպը:

Միհրդատ այս ատեն կը գտնուէր Հայաստանի ճահճա-  
 յին և վատառողջ մէկ վայրը, որովհետեւ Տիգրան մեր-  
 ժած էր անոր հետ տեսնուիլ, երբ ան Լուկուլլոսէն  
 պարտուած եկած էր իր քով: Տիգրան Միհրդատը  
 Հռոմայեցիներուն չէր յանձնած, բայց արհամարհան-  
 քով վարուած էր անոր հետ...:

Տիգրան կանչեց Միհրդատը և մեծ պատուով  
 ընդունեցաւ զայն: Անոնք առաջուան պէս կրկին բա-  
 բեկամացան:

Տիգրան Միհրդատի տուաւ 10.000 զինուորներ:  
 Միհրդատ զանոնք առաւ ու գնաց Պոնտոսը վերստին  
 գրաւելու:

Տիգրան զօրացուց իր բանակը: Իրեն հպատակ  
 երկիրներէն օգնական զօրք ստացաւ: Տիգրան կ'ու-  
 զէր անմիջապէս յարձակիլ Լուկուլլոսի վրայ: Անիկա  
 կ'ուզէր նախաշարձակ ըլլալ:



**ՌԱՅՅԱՏՐՈՒԹ ԲԱՌՆՈՐ**

Օգնական զօրք, նախաշարձակ:

**ՀԱՐՅԱՐԱՆ**

- 1- Ապպիուս Ֆլաւդոս որո՞ւն քով գնաց, Տիգրանի պալատէն  
 հեռանալէ ետք:
- 2- Ապպիուս ի՞նչ բան իմացուց Լուկուլլոսի:
- 3- Լուկուլլոս ի՞նչ բան վճռեց, երբ իմացաւ թէ Տիգրան կը մերժէ  
 յանձնիլ Միհրդատը:
- 4- Լուկուլլոս ինչո՞ւ վճռեց կռուիլ Տիգրանի  
 դէմ:
- 5- Տիգրան ինչո՞ւ պատրաստութիւններ տեսաւ, Ապպիուս  
 Ֆլաւդոսի մեկնելէ ետք:
- 6- Տիգրան ինչո՞ւ իր մօտ կանչեց Միհր-  
 դատը եւ անոր հետ բարեկամացաւ:
- 7- Ուրկէ՞ կանչուեցաւ Միհր-  
 դատ: 8- Տիգրան ի՞նչպէս ընդունեցաւ Միհրդատը:
- 9- Ի՞նչ պար-  
 տականութիւն ստանձնեց Միհրդատ: 10- Տիգրան ի՞նչ ըրաւ իր  
 բանակը: 11- Որոնցմէ՞ օգնական զօրք ստացաւ: 12- Տիգրան ի՞նչ  
 կ'ուզէր ընել: 13- Ինչո՞ւ կ'ուզէր նախաշարձակ ըլլալ [ տրամա-  
 բանել ]:



ԸՆԹԵՐՑՈՒՄ

# ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Լուկուլլոս անապարեց երբ իմացաւ թէ Տիգրան կ'ուզէ իր վրայ յարձակիլ: Անիկա իր գրաւած երկիրներու պաշտպանութեան համար 6.000 զինուոր պահակ թողուց և մնացած 22.000 զինուորները իր հետ առնելով՝ ճամբայ ելաւ դէպի Հայաստան, Տիգրանի ճամբան կտրելու: Լուկուլլոսի այս արշաւանքը տեղի կ'ունենար 69 թուին (Ք. Ա.): Եղանակը գարուն էր: Լուկուլլոս իր զինուորներով քիչ ետք հասաւ Եփրատ գետին եզերքը: Հռոմայեցիները չկրցին գետէն անցնիլ, որովհետեւ դարնան ձիւնահալքի պատճառաւ գետը յորդած էր: Շարժական կամուրջներով պէտք է անցնէին, ինչ որ շատ ժամանակ պիտի խլէր իրենցմէ և Տիգրանին առիթ պիտի տար պատրաստուելու: Հռոմայեցի զինուորները նեղօրտեցան, որովհետեւ անոնք անհամբեր էին Տիգրանի ճամբան կտրելու: Երեկոյեան, սակայն, Եփրատի ջուրը յանկարծ նուազեցաւ և գիշերը այնքան իջաւ, որ Հռոմայեցիները զիւրութեամբ անցան գետէն՝ առանց ժամանակ կորսնցնելու: Հռոմայեցի զինուորները կարծեցին թէ գետը կը հնազանդի իրենց զօրավարին: Մինչդեռ գետի ջուրին նուազելուն պատճառը հետեեալն էր. — Եղանակը գարուն էր. ցերեկին տաք կ'ընէր, ձիւնը կը հալէր և գետը ևս կը վարարէր: Իսկ երեկոյեան ցուրտը կ'իջնէր, լեռան ձիւնները կը սառէին և այսպիսով գետի ջուրը ևս կը նուազէր: Հռոմէական բանակը մտաւ հայկական հողը՝ Ծոփաց աշխարհը: Երբ բանակը գետէն նոր անցեր էր, զինուորներուն դէմը ելաւ Անահիտ չաստուածուհիի մեհեանի եզներէն մէկը, որ մասնաւոր նշան մը կը կրէր իր վրայ և որ ինքնաբերաբար եկաւ և իր գլուխը ձռեց, կարծէք թէ

ըսել ուզելով. «Զիս մորթեցէ՛ք...»: Հոռմայեցիները կարծեցին թէ աստուածները զայն զրկած են, որպէս զի մորթեն և եփրատ գետին գոհեն, շնորհակալութիւն յայտնելու համար գետին: Մինչդեռ իրականութիւնը այն էր որ Անահիտի մեհնանին եզները վարժուած էին երկրպագուներու ձեռքով իրենց վրզէն շոյուելու, և երբ մարդ տեսնէին՝ վարժութեամբ իրենց գլուխը կը ծռէին...:

Հոռմայեցի գինուորները այս յաջողութիւններէն խրախուսուած՝ ուրախութեամբ և աշխոյժով անցան Ծոփաց աշխարհէն: Լուկուլլոս հրամայեց իր գինուորներուն որ Ծոփաց երկրի բնակիչներուն վնաս չհասցնեն, որպէս զի սիրաշահին զանոնք և դժուարութիւն չկրեն անոնցմէ:

Լուկուլլոս ուղիղ կ'արշաւէր Տիգրանակերտի վրայ:

Եփրատ գետէն Տիգրիսի հեռաւորութիւնը 150 քիլոմետր է: Լուկուլլոս օրական 25 քիլոմետր քայելով, շարաթ մը ետք հասաւ Տիգրիսի եզերքը, ուրկէ անցաւ՝ յարձակելու Տիգրանակերտի վրայ: Հոռմայեցիները մեծ արագութեամբ կարեցին այդ ճամբան:

Տիգրան երբ լսեց թէ Լուկուլլոս անցած է Տիգրիսը և արդէն մօտեցած Տիգրանակերտի, բարկութենէն կատղեցաւ, որովհետեւ ինք կ'ուզէր առաջին անգամ յարձակիլ անոր վրայ, և յետոյ՝ որովհետեւ Լուկուլլոս կը համարձակէր յարձակիլ իրեն պէս «արքայից արքային» վրայ...: Տիգրան չէր կրնար հաւատալ թէ Լուկուլլոս կրնար այդ համարձակութիւնը ունենալ: Այնպէս որ առաջին մարդը, որ եկաւ և Լուկուլլոսի յարձակումը իմացուց իրեն, կախաղանի արժանացաւ: Այլևս ոչ ոք համարձակեցաւ խօսիլ այդ մասին: Բոլորը սկսան Տիգրանը շողոքորթել, ըսելով թէ Հոռմայեցիները երբեք չեն կրնար ունենալ այդ համարձակութիւնը: Տիգրան կը մնար անտեղեակ Լուկուլլոսի կատարած արշաւանքին և անոր առաջ բերած գծրախառութեանց մասին: Տիգրան յաղթութիւններէն կուրացած թագաւոր մըն էր:

Տիգրանի շատ սիրելի բարեկամը , Միհրո-  
բարզանի իշխանը , վերջապէս համարձակեցաւ վտան-  
գը յիշեցնել : Տիգրան այն ատեն միայն հաւատաց . . . :

Տիգրան զեռ չէր պատրաստուած : Անիկա իր  
հպատակ երկիրներէն կը սպասէր օգնական ոյժերու ,  
զոր անոնք պարտաւոր էին զրկելու : Ժամանակ չահելու  
համար Տիգրան զրկեց Միհրոբարզանը Հռոմայեցի-  
ներու դէմ՝ 3000 զինուորներով , և հպարտութեամբ  
պատուիրեց անոր . « Բե՛ր ինձի Լուկուլլոսը կենդանի ,  
իսկ մնացեալները ոտքերուդ տակ ջախջախէ՛ ու ան-  
ցի՛ր » : Միհրոբարզան քաջաբար կռուեցաւ և սպան-  
նուեցաւ : Պարտուեցան նաև անոր զինուորները : Լու-  
կուլլոս այլևս կրնար սկսիլ Տիգրանակերտի պաշար-  
ման : Տիգրան երբ տեսաւ թէ Միհրոբարզան պար-  
տուած է և Լուկուլլոս անարգել կը յառաջանայ դէ-  
պի Տիգրանակերտ , իր մայրաքաղաքին պաշտպանու-  
թիւնը յանձնեց Մանգէոս զօրավարին և ինք փա-  
խաւ Մշոյ դաշտը , պատրաստութիւն տեսնելու : Տիգ-  
րան մինչև այս ատեն դժբախտաբար անտարբեր կե-  
ցած էր : Տիգրան իր այս փախուստին ժամանակ՝ չկըր-  
ցաւ Տիգրանակերտէն փախցնել իր կիներն ու ան-  
հաշուելի գանձերը :

Լուկուլլոս պաշարեց Հայոց մեծ մայրաքաղաքը՝  
Տիգրանակերտը :

## ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Մեծն Տիգրան Մշոյ դաշտէն հրաման ըրաւ  
իրեն հպատակ բոլոր ազգերուն , որպէս զի օգնու-  
թեան հասնին : Հպատակ ժողովուրդները փու-  
թացին օգնութեան : Անմիջապէս առաջ եկաւ հսկայ  
բանակ մը , այլևայլ ազգերէ բաղկացած : Տիգրան օգ-  
նութեան կանչեց նաև Միհրդատը , որ այս ժամանակ  
Պոնտոս կը գահուէր : Միհրդատ զիտմամբ ուշացաւ և  
իր Տաքսիլէս անունով պատգամաւորին միջոցաւ Տիգ-  
րանի իմացուց որ յետաձգէ յարձակումը և տունց

իրեն չպատերազմի Հոռմաշեցիներու հետ: Եթէ պատերազմը յետաձգէր, Հոռմաշեցիները սովի պիտի մատնուէին և իրենք իրենց պիտի պարտուէին:

Տիգրան անհամբեր էր. հրը տեսաւ թէ Մինրգատ կ'ուշանայ, տաանց անոր յառաջացաւ Լուկուլոսի բանակին վրայ, որ Տիգրանակերտի շուրջ զբաղած էր պաշարման գործով: Տիգրանակերտի պաշարուած բնակիչները հրը տեսան Տիգրանի գալը, ուրախուեցան աղաղակներ բարձրացուցին:

Տիգրանակերտի մէջ կը գտնուէին Տիգրանի կանանոցն ու անհաշուելի գանձերը: Պէտք էր նախ զանոնք ազատել, որպէս զի անոնք չիյնային թշնամիին ձեռքը: Վեց հազար (6000) հայ երիտասարդ զինուորներ յանձն առին զանոնք ազատել: Անոնք յաջողեցան Լուկուլոսի բանակը ձեղքել ու մտնել Տիգրանակերտ: Յետոյ անոնք մեծագոյն յանդգնութեամբ կանանոցն ու գանձերը փախցուցին ու հասցուցին Տիգրանի բանակը:



Հայ զինուորները կ'ազատեն Տիգրանի կանանոցն ու գանձերը

Տիգրանակերտ քաղաքը ներսէն լաւ էր պաշտպանուած : Կարհլի չէր գայն շուտով դրաւել : Մանաւանդ Մանգէսս և հայ զինուորները դիւցազնաբար կը պաշտպանէին զայն : Լուկուլլոս զգաց թէ վտանգաւոր վիճակի մէջ կը գտնուի : Անիկա Տիգրանակերտի շուրջ համայնիցի 6000 զինուորներ ձգեց և մնացեալ զօրքով գնաց Տիգրանի դէմ կռուելու :

Հետզհետէ դէմ աս դէմ կու գային Տիգրանի և Լուկուլլոսի բանակները : Տիգրանի բանակը կեցած էր բլուրի մը վրայ : Երկու բանակներուն միջև կը գըտնուէր գետակ մը , որ Տիգրիսի մէկ օձանդակն էր : Բլուրին վրայէն Տիգրան և իր զինուորները կը տեսնէին Լուկուլլոսի բանակը , որ դէպի իրենց կողմը կը յառաջանար : Տիգրան և իրեն զօրապետները արհամարհանքով վերաբերուեցան Լուկուլլոսի բանակին հետ : Տիգրան նոյնիսկ ըսաւ . « Եթէ ասոնք եկած են իբրև պատգամաւորներ , չափազանց շատ են . իսկ եթէ իբրև կռուող զինուորներ՝ չափազանց քիչ են : » Աւրիմն Տիգրան վստահ էր իր յաղթանակին :

Իսկ իր զօրավարներէն ոմանք , չողքորթելու համար զինք , վէպ կը խաղային : Տիգրան երբ այս տեսաւ , հարցուց անոնց թէ ինչո՞ւ վէպ կը խաղան : Անոնք պատասխանեցին . « Այժմէն վիճակ կը ձգենք թէ որո՞ւն բաժին պիտի իյնայ Լուկուլլոսի բանակին ձգելիք աւարը : » Տիգրանի զօրավարներէն ուրիշներ իրմէ կը խնդրէին որ իրենցմէ միայն մէկը երթայ և իր գունդովը կռուի Լուկուլլոսի բանակին դէմ : Ի վերջոյ Տիգրան շատ կը ցաւէր որ ստիպուած է կռուիլ ոչ թէ Հոմէր բոլոր զօրավարներուն , այլ միայն Լուկուլլոսի դէմ . . . : Այս բոլոր զօրավարներու մէջ միայն Տաքսիլէսը , Միհրդատի դեսպանը , թելադրեց զգոյշ կենալ և անմիջապէս չպատերազմիլ : Շատեր և նոյնիսկ Տիգրան կը կարծէին թէ Տաքսիլէս կը նախանձի Տիգրանի ունենալիք յաղթանակին և ատոր համար կ'արգիլէ անմիջապէս պատերազմիլ :

Տիգրան վճռեց պատերազմիլ :

Քիչ հաք պիտի սկսէր երկար ատենէ ի վեր սպասուած անկող ճակատամարտը: Օրը 6 Հոկտեմբերն էր՝ 69-ի թուի (Ք. Ա.): Երկու բանակները դէմ առ դէմ էին արդէն, գետակին երկու եզիրքը: Գետի արևմտեան կողմը կար ցած տեղ մը, ուրկէ բանակը կրնար դիւրաւ անցնիլ: Լուկուլլոս այդ կողմ ուղղուեցաւ: Տիգրան երբ իր բարձունքէն այս տեսաւ, կարծեց թէ Հռոմայեցիները կը փախչին, ուստի բացականչեց իր մօտ գտնուող Տաքսիլէսին.

— Ինչպէս կը փախչին . . . :

Փորձառու Տաքսիլէս, Միհրդատի պատգամաւորը, պատասխանեց Տիգրանի.

— Անոնք ոչ թէ կը փախչին, այլ կը պատրաստուին մեր վրայ յարձակելու . . . :

Հազիւ թէ իր խօսքը վերջացուցած էր Տաքսիլէս, Հռոմայեցիները գետը անցան և ուղղուեցան Հայոց դէմ:

Հայոց հսկայ բանակը, ինչպէս ըսինք, բլուրի մը ստորոտը դիրք բռնած էր: Հայկական զօրքը կը կրէր ծանր զէնքեր ու զրահներ: Լուկուլլոս յանկարծական հրաման մը արձակեց: Հռոմայեցիները աշխոյժով ու ճարպիկութեամբ յարձակեցան Հայոց վրայ: Հայերը շփոթած սկսան նահանջիլ: Անսպասելիօրէն Հայերը պարտուած էին: Հռոմայեցիներ 20 քիլոմետր հալածեցին Հայերը: Հռոմայեցիները վերադարձան պատերազմի դաշտ ու կողոպտեցին ձգուած աւարը: Լուկուլլոս չարաչար յաղթելէ հաք Տիգրանի, բուն թափով մը յարձակեցաւ Տիգրանակերտի վրայ, զոր տակաւին կը պաշարէին 6000 հռոմայեցի զինուորներ: Տիգրանակերտի բնակիչները, ինչպէս ծանօթ է, կազմուած էին օտարականներէ, որոնք վրէժով և ատելութեամբ լեցուած էին Տիգրանի հանդէպ: Անոնք, երբ իմացան Տիգրանի պարտութիւնը, դաւազութիւն սարքեցին: Խոստացան Տիգրանակերտի պարիսպին դռները բանալ Լուկուլլոսի առջև, պայման դնելով որ Լուկուլլոս զիրենք վերադարձնէ իրենց հայրենիքները: Լուկուլլոս խոստացաւ: Տիգրանակեր-

աի պարիսպին գոները բացուեցան: Լուկուլլոս զիւ-  
րուխիամբ մտաւ Տիգրանակերտ և տիրացաւ անոր  
անհաշուելի գանձերուն: Լուկուլլոս Տիգրանակերտի  
օտար բնակիչներուն առաւ ազատութիւն իրենց եր-  
կիրները վերագանալու :

## ՏԻԳՐԱՆԻ ԵՒ ՄԻՀՐԴԱՏԻ ՅՈՒՋԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Պարտուած Տիգրանի զինուորները խելակորոյս  
կը փախէին : Այս ժամանակ կամաց-կամաց դէպի  
Հայաստան կու գար Միհրդատ, որ լուր չունէր պա-  
տահածներէն: Միհրդատ ճամբան տեսաւ փախստական  
զինուորներ, որոնք կու գային պատերազմի դաշտէն:  
Միհրդատ մեծ ցաւով իմացաւ այդ զինուորներէն, որ  
Տիգրան՝ առանց իրեն սպասելու՝ պատերազմած է և  
Լուկուլլոսէն չարաչար պարտուած: Միհրդատ քիչ  
ետք հանգիպեցաւ Տիգրանի, որ բոլորովին յուսահա-  
տած էր և զլիսիկոր եղած: Շատ յուզիչ եղաւ անոնց  
տեսակցութիւնը: Միհրդատ վիհանձն գտնուեցաւ.  
փոխանակ Տիգրանը անարգելու իր պարտութեան հա-  
մար, ինչպէս որ Հայոց արքան ժամանակին իրեն ը-  
րած էր, Միհրդատ իջաւ իր ձիէն և անոր հետ լացաւ  
այս դառն պարտութեան վրայ: Միհրդատ իր գունդը  
և հետևորդները տրամադրեց Տիգրանի և գայն խրա-  
խուսեց և քաջալերեց :

Տիգրան և Միհրդատ որոշեցին վերստին պատ-  
րաստուիլ, պատերազմելու համար Լուկուլլոսի դէմ :

## ԱՐԱԾԱՆԻԻ ԿՈՒԻԷ

Լուկուլլոս տիրեց Տիգրանակերտի: Տիգրան և  
Միհրդատ քաջուեցան Արտաշատ՝ Հայաստանի հին  
մայրաքաղաքը, ուր անոնք վերազինուեցան և պատ-  
րաստութիւն տեսան վերստին կռուելու Լուկուլլոսի  
դէմ :

Լուկուլլոս վերջնականօրէն խորսակելու համար  
Տիգրանի և Միհրդատի ոյժը, ուզեց յարձակիլ Արտա-  
շատի վրայ, ուր ամրացած էր Տիգրան, իր ընտա-  
նիքով :

Տիգրան, երբ իմացաւ թէ Լուկուլլոս կ'արչաւէ Արտաշատի վրայ, չուզեց պաշարուած մնալ. անիկա առաւ իր բանակը և մայրաքաղաքէն դուրս եկաւ, կռուելու համար Լուկուլլոսի դէմ: Չորս օրուան ճամբայ մը քալելէ հետք, Տիգրանի բանակը հանդիպեցաւ Լուկուլլոսի՝ Արածանի գետին եզերքը, որ եփրատի արևելքսան օժանդակն է:

Արածանի գետին եզերքը տեղի ունեցաւ կռիւր: Տիգրան դարձեալ պարտուեցաւ, հակառակ իր բաւական ոյժին, որովհետև Տիգրանի օգնութեան եկած գունդերը դասալիք եղան: Լուկուլլոսի ձեռքը գիրի ինկան բազմաթիւ հայ ազնուականներ:

Արածանիի այս կռիւր տեղի ունեցաւ 68 թուին (Ք. Ա.), աշնան սկիզբը:

Լուկուլլոս Տիգրանի զօրութիւնը բոլորովին ջախջախելու նպատակով, հալածեց Տիգրանի զինուորները և յառաջացաւ դէպի Արտաշատ, գրաւելու համար զայն:

Լուկուլլոսի զինուորները ճամբայ կրան դէպի Արտաշատ: Զմեռը վրայ հասած էր արդէն: Այս կզանակին Հայաստանի մէջ բանակի յառաջխաղացքը շատ դժուար էր: Լուկուլլոսի զինուորները տրանջաթին: Այսպիսով անկարելի եղաւ արչաւանքը: Արդէն հոռմայեցի զինուորներու ծառայութեան շրջանը լրացած էր: Յոգնած զինուորները կ'ուզէին հայրենիք վերադառնալ: Լուկուլլոս իր ճամբան փոխեց դէպի հարաւ, յարձակեցաւ Մծքին քաղաքի վրայ և զայն գրաւեց ու տիրեց անոր մեծ հարստութիւններուն:

Սերեմն Լուկուլլոս չկրցաւ տիրել Արտաշատի և ստիպուեցաւ հեռանալ Հայաստանէն, ուր ձգեց հոռմայեցի զինուորներ:

---

**ԹԵՂԱՆԻՐՈՒԹԻՒՆ.**— Ընթերցման համար դուրս  
այս հասուածը նախ պէտք է դաստրանի մէջ կարդացուի՝  
ուսուցչին կողմէ, առակերտներուն օտլով անհրաժեշտ լու-  
սաբանութիւններն ու ծանօթութիւնները: Յետոյ առակեր-  
տները պէտք է որ Յոյնը պատմեն կենդանի եւ ամբողջական  
ձեւով մը:

### ՌԱՅԱՅՐՆԷԼԻ ՌԱՌՈՒՐ

Պահակ, ճամբայ կտրել, ձիւնահալք, շարժական կամուրջ, վարարիլ, երկրպագու, խրախուսուիլ, սիրաշահիլ, անտեղեակ, յաղթուիլ, ինքնիշխանութիւններէ կուրացած, ժամանակ շահիլ, անարգել, Մշոյ դաշտ, ճակատամարտ, պատգամաւոր, յետածգել, կանանոց, դիւզազնաբար, վէգ, աւար, դաւաղորութիւն սարքել, հետեւորդ, Արածանի, դասալիք ըլլալ, յառաջխաղացք :

### ԸՆԿԷԼԱՅՆՆԷԼԻ ԿԷՏՈՒ

1- Լուկուլլոսի արագաշարժութիւնը հակադրել Տիգրանի դանդաղ եւ անտարբեր ընթացքին :

2- Անահիտ չաստուածուհիի մեհեանին եզները անհպելի էին եւ ազատօրէն կը ճարակէին արօտաՎայրերու մէջ : Անոնք իրենց գլխուն կը կրէին ջահեր :

3- Լոռմայեցի զինուորները հաւաստ ունին իրենք իրենց, ինչպէս նաեւ իրենց զօրավարին՝ Լուկուլլոսի վրայ : Անոնք բնական երեւոյթները ( եփրատի ջուրին նուազիլը, մեհեանի եզին վլուխ ձուլը ) կը մեկնեն իբրեւ նախանշան յայտնութիւնները իրենց յաջողութեան, որուն մեծապէս վստահ էին :

4- Լուկուլլոս գիտէ սիրաշահիլ մանր ժողովուրդները : — Ձի վնասեր Ծովացիներուն :

5- Միհրդարգանը անննգ բարեկամ մըն էր : Անիկա ի զին իր կեանքին, Տիգրանի յիշեցուց վերահաս վտանգը եւ գիտցաւ քաջաբար զոհուիլ :

6- Շեշտել Տիգրանի չոր եւ սին հպարտութիւնը, որ զինք արգիլեց զգոյշ եւ խոհեմ ընթացք մը ունենալէ :

7- Շեշտել Միհրդատի փորձառութիւնն ու խորագիտութիւնը, Անիկա՝ հակառակ Տիգրանի՝ կը հաւատար թէ կարելի է Քըշնամիին յաղթել զինուորներու խոշոր թիւէն աւելի խելքով՝ դիւանագիտութեամբ : Միհրդատի զօրավարը, Տաքսիլէսը եւս իր տիրոջ պէս խոհեմ էր ու փորձառու : Միհրդատ գիտէր թէ Լայոց խուռներամ, բայց խայտաբղէտ ու անկազմակերպ զօրքը պիտի չկրնար յաղթել Լուկուլլոսի սակաւաթիւ, բայց կազմակերպեալ ոյժին : Ուստի կը թելադրէր ճակատ տալէ խուսափիլ, պատերազմը յետածգել եւ այսպիսով Լոռմայեցիները սովամահ ընկլ :

8- Վեց հազար հայ երիտասարդ զինուորները քաջութեամբ կրցան ճեղքել Լոռմայեցիներու բանակը, որովհետեւ իրենք այդ արարքը ըրին, ազատելու համար թագաւորին կիները : Այսինքն՝ ցոյց տալ հայ զինուորի արժանապատուութեան բարձրութիւնը :

9- Բացատրել Տիգրանակերտի օտարական բնակիչներուն դաւաղորութիւնը :

### ՀՐԱՀԱՆԳ

Յատկացնել պահ մը գրաւոր պատմելու համար հայ — լուկուլլեան պատերազմները :

## ԻՆ. Դ Ա Ս

### ՊՈՄՊԷՈՍ ԿՈՒ ԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Երբ Լուկուլլոս նահանջեց, Միհրդատ վերստին տիրեց Պոնտոսի, իսկ Տիգրան՝ Հայաստանի: Միհրդատի և Տիգրանի միացեալ բանակները նորանոր յաղթանակներ տարին Հռոմայեցիներու վրայ, որոնք ջարդուեցան և փախան Պոնտոսէն ու Հայաստանէն: Լուկուլլոս անկարող եղաւ այս պարտութիւններուն առաջք առնել: Իր զինուորները մերժեցին կռուիլ, որովհետեւ երկար առեմէ ի վեր հայրենիքէն հեռացած էին և բազմաթիւ կոիւններու մէջ սպառած: Տիգրան ու Միհրդատ յառաջացան դէպի արեւմուտք:

Հռոմի Մերակոյսը այս ձախողութիւններուն վրայ պաշտօնանկ ըրաւ Լուկուլլոսը և անոր տեղ Ասիա զրկեց Պոմպէոսը, երիտասարդ և մեծ զօրավարը:



ՊՈՄՊԷՈՍ

Հումայեցիները վճռած էին տիրել Ասիոյ , որուն համար քանի մը դարէ ի վեր այնքան տրիւն ու զրամ վատներ էին , բայց տակաւին չէին կրցած բոլորովին տիրել անոր : Ասոր համար Հումայեցիները զրկեցին իրենց մեծագոյն զօրավարը՝ Պոմպէոսը :

Պոմպէոս 66 թուին (Ք. Ա.) եկաւ Փոքր Ասիա , կռուեցաւ և յաղթեց Միհրդատի : Պոմպէոս Միհրդատի յաղթելէ ետք՝ արշաւեց Տիգրանի վրայ :

Մեծն Տիգրանի պզտիկ որդին , Կրտսեր Տիգրան կոչուած , դաւաճանեց իր հօրը , որպէս զի անոր տեղ ինք թագաւոր ըլլայ : Կրտսեր Տիգրան գնաց Պոմպէոսի մօտ և անոր բանակը առաջնորդեց իր հօրը վրայ : Կրտսեր Տիգրան Հումայեցիներու ցոյց տուաւ Հայաստանի կարճ և սպանով ճամբաները և այսպիսով շատ օգտակար եղաւ անոնց : Մեծն Տիգրան շատ յուզուեցաւ իր զաւկին այս ըրածին վրայ :

Պոմպէոս և դաւաճան որդին սկսան գրաւել Մեծն Տիգրանի ամրոցները և յառաջացան դէպի Հայաստանի սիրտը՝ Արտաշատ մայրաքաղաքը , ուր կը գտնուէր Տիգրան :

Տիգրան զգալով վտանգը՝ ուզեց առանց կռուելու հաշտուիլ Պոմպէոսի հետ և խաղաղութեան դաշինք կնքել : Ինսպաններ զրկեց Պոմպէոսի մօտ : Սակայն կարելի չեղաւ հաշտուիլ , որովհետև Կրտսեր Տիգրան խանգարեց բանակցութիւնը , որպէս զի իր հայրը անպայման պարտուի և ինք անոր տեղ թագաւոր ըլլայ Հայաստանի :

Հոռոմէական բանակը եկաւ և պաշարեց Արտաշատը : Պաշարուած Տիգրանը զգաց թէ կարելի չէ յաղթել Հումայեցիներու : Տիգրան վստահ ըլլալով Պոմպէոսի մեղմութեան և արդարասիրութեան՝ իր բոլոր ազգականներով և բարեկամներով , գնաց Պոմպէոսի բանակը , իր հպատակութիւնը անոր յայտնելու : Տիգրան իր թագը միայն դրած էր և հեծած՝ իր ձիուն վրայ : Տիգրան յառաջացաւ հոռոմայեցի զինուորներու մէջէն՝ իր հետեորդներով : Պոմպէոս հրամայեց

որ ձիէն վար իջնէ : Տիգրան հնազանդեցաւ , իջաւ իր ձիէն , խոնարհութիւն ըրաւ Պոմպէոսի և անոր ոտքերուն առջև դրաւ իր թագը : Պոմպէոս չափազանց յուզուեցաւ , վերցուց Տիգրանը , թագը դրաւ անոր գլխուն և զայն բազմեցուց իր կողքին : Պոմպէոս ըսաւ Մեծն Տիգրանի . « Թագաւորութիւնդ չես կորսնցնուցած և դարձած ես Հռոմի բարեկամը : » Անարժան որդին , կրտսեր Տիգրանը , որ Պոմպէոսի քովն էր , նոյնիսկ ոտքի չելաւ իր հայրը պատուելու համար և գութի կամ զղջումի ոչ մէկ արտայայտութիւն ունեցաւ :

Հռոմայեցիները ի պատիւ Մեծն Տիգրանի իւրնջոյք մը սարքեցին : Մեծն Տիգրան ուրախութենէն դրամ բաշխեց հռոմայեցի զինուորներուն : Կրտսեր Տիգրան չմասնակցեցաւ այս խնջոյքին : Անիկա զայրացաւ տեսնելով որ իր հայրը բարեկամացած է Հռոմայեցիներու հետ : Այլևս ինք չէր կրնար Հայաստանի թագաւոր ըլլալ , որուն համար մատնած էր իր հայրը : Պոմպէոս խորունկ զգուսնք ունէր այդ դաւաճան որդիին հանդէպ : Պոմպէոս , երբ տեսաւ թէ կրտսեր Տիգրան կոշտութեամբ կը վիճի իր հօրը հետ , որոշեց Մեծ Հայաստանի թագաւորութիւնը յանձնել Մեծն Տիգրանի , իսկ իբր շատ չնչին վարձատրութիւն , կրտսեր Տիգրանի յանձնեց Մոփաց իշխանութիւնը միայն : Մոփաց երկրի գանձերը ևս պիտի պատկանէին Մեծն Տիգրանի :

Կրտսեր Տիգրան շատ զմգոհ եղաւ և յուսախաբ : Անիկա ուզեց խլրտումներ հանել Պոմպէոսի դէմ և մերժեց Մոփաց երկրի գանձերը յանձնել :

Ասոր վրայ Պոմպէոս շղթայեց կրտսեր Տիգրանը և իր մօտ պահեց , Հռոմի մէջ ցուցադրելու համար զայն իր յաղթութիւններուն իբր նշան : Պոմպէոս Մոփաց երկրի գանձերը յանձնեց Մեծն Տիգրանի :

Հռոմայեցիները և Հայերը դաշնակից դարձան : Մեծն Տիգրան , իբր պատերազմական տուգանք , փճարեց 6000 ասպանդ :

Ասկէ ետք Պոմպէոս հալածեց Միհրդատը, որ փախաւ Կովկաս: Միհրդատ յուսահատած էր: Անիկա նախ թոյն խմեց, բայց չմեռաւ, որովհետեւ փոքր տարիքէն վարժուած էր թոյն գործածելու: Յետոյ իր դաշոյնով անձնասպան եղաւ:

Պոմպէոս, Հայերէն ետք, կռուեցաւ Մարերոս, Կորդուացիներու և Պարթևներու հետ:

Պոմպէոս այս փառաւոր յաղթանակներով Ասիոյ մէջ հաստատեց հռոմէական գերիշխանութիւնը: Անիկա յաղթական մտաւ Հոմմ, ուր ժողովուրդը ուրախութեամբ ընդունեցաւ զինք: Հոմմի մէջ տեղի ունեցան հանդէսներ, որոնց ընթացքին Պոմպէոս ժողովուրդին ցոյց տուաւ Կրասեր Տիգրանը . . . :

Այսպիսով վերջացաւ Տիգրանի հզօր աշխարհակալութիւնը: Տիգրան այլևս միայն Հայաստանի թագաւորն էր: Արդէն ծերացած, տասնեակ մը տարի ևս իշխելէ ետք, մեռաւ 54 թուին (Ք. Ա.): Իրեն յաջորդեց իր որդին Արտաւազդ Ա.:

**ՌԱՅԱՑՐՈՒՄ ԲԱՌՈՒՄ**

Ծիրակոյտ, պաշտօնանկ ընել, վատնել, ամրոց, դեսպան, բանակցութիւն, խլրտում, պատերազմական տուգանք:

**ԸՆԴՈՒԱՅՆՆԵՐ ԿԷՑՈՒ**

- 1- Լուկուլլոսի նահանջէն ետք Հայոց ունեցած այս յաջողութիւնները արդիւրքն են Միհրդատի, որ յուսահատիլ չգիտցաւ:
- 2- Պոմպէոս արդարասէր եւ մեղմարարոյ նկարագիր մը ունէր: Միաժամանակ Հոմմի ամենէն կտրող զօրավարներէն էր:
- 3- Կրտսեր Տիգրան փառամոլ եւ անհեռատես անձ մըն էր: Անոր դաւաճանութիւնը զգուանք կը պատճառէր նոյնիսկ թշնամիին: — Արժանի էր իր վախճանին:
- 4- Անդրադառնալ Միհրդատի վրայ, ներկայացնելով զայն իբր անվերջ պայքարող մը: Յուզիչ է անոր վախճանը եւ շատ կը յիշեցնէ Ռուսա Ա.ի մահը:
- 5- Խօսիլ Տիգրանի նկարագրի դրական եւ ժխտական գիծերուն մասին:

**ՀԱՐՑԱՐԱՆ**

- 1- Լուկուլլոսի նահանջէն ետք, ի՞նչ ըրին Միհրդատ եւ Տիգրան: 2- Ինչո՞ւ համար Լուկուլլոս չկրցաւ դիմադրել Միհրդատի եւ Տիգրանի: 3- Հոմմի Մերակոյտը Լուկուլլոսի տեղ զո՞վ

զրկեց Ասիա, կոռուելու համար Միհրդատի եւ Տիգրանի դէմ : 4-  
 Ինչո՞ւ Պոմպէոսը զրկեցին : 5- Ասիան ի՞նչ արժէք կը ներկայացնէր  
 Հռոմի համար : 6- Ի՞նչ ըրաւ Պոմպէոս : 7- Ո՞ր թուին յաղթեց Մի-  
 հրդատի : 8- Միհրդատի յաղթելէ ետք, ի՞նչ ըրաւ Պոմպէոս : 9- Ո՞վ  
 էր Կրտսեր Տիգրան : 10- Ի՞նչ ըրաւ Հռոմայեցիներու համար : 11-  
 Ինչո՞ւ համար դաւաճանեց իր հօրը : 12- Ի՞նչ ըրաւ Մեծն Տիգրան,  
 երբ իմացաւ թէ Պոմպէոս կ'արշաւէ ուղիղ Արտաշատի վրայ : 13-  
 Կրտսեր Տիգրան ինչո՞ւ խանգարեց բանակցութիւնը : 14- Պատմէ՛  
 Տիգրանի երթը դէպի Պոմպէոսի բանակը : 15- Պոմպէոս ի՞նչպէս  
 ընդունեցաւ Տիգրանը : 16- Կրտսեր Տիգրան ի՞նչպէս վերաբերեցաւ  
 իր հօր հետ : 17- Ի՞նչ վարձատրութեան արժանացաւ Կրտսեր Տիգ-  
 րան : 18- Մեծն Տիգրան ի՞նչ վճարեց իրբեւ պատերազմական  
 տուրք : 19- Ի՞նչ վախճան ունեցաւ Միհրդատ : 20- Պատմէ՛ թէ  
 Պոմպէոս ի՞նչ տեսակ մուտք մը ունեցաւ Հռոմ : 21- Ե՛րբ միտաւ  
 Մեծն Տիգրան : 22- Ո՞վ յաջորդեց անոր :

ԱՂԲԻԻՐՆԵՐ ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ

PLUTARQUE, Les Vies des Hommes Illustres, Librairie Gar-  
 nier. — Պլուտարքոս Հայերէնի եւս թարգմանուած է ձեռագիր Հ.  
 Աղիա Թոմանյանի. « Պլուտարքայ Բերովնացոյ Չուգա-  
 կօրս », Վենետիկ 1833: Պլուտարքոսի մէջ Տիգրանի վերաբնորդ  
 մասերը կը գտնուին այն հատուածներու մէջ, որոնք նուիրուած  
 են Լուկուլլոսի եւ Պոմպէոսի: — Կարօ Էֆեարդ, « Տիգրան Բ. եւ  
 Հայ — Լուկուլլեան Պատերազմները », Ազգ. Մատեն. Քիւ ձժԿ.,  
 Վիեննա, 1926, Հ. 6. Աստուրեան « Բաղարական վերաբերու-  
 թիւններ ընդ մէջ Հայաստանի եւ Հռովմայ », Վենետիկ, 1912,  
 Էջ 391—424: Տեսնել նաեւ Ա. Մ. Գարագաշեանի, Դոլէնս եւ Ա. Խայի, Ն. Ս. 8.  
 Մոսկուսեանի, Եղիշէ Արք. Դուրեանի պատմութեան ձեռնարկ-  
 ներու Տիգրանի նուիրուած մասերը :



## ԻԶ. Դ Ա Ս

Արտաւագդ Բ. (54—33 Գ. Ա.)

Մեծն Տրգրանի յաջորդեց իր որդին Արտաւագդ Բ. (54—33 Գ. Ա.), որ նշանաւոր եղաւ իբրև կրթուած ու գրագէտ թագաւոր մը : Անիկա յունարէն լեզուով գրած էր գեղեցիկ թատերագութիւններ , որոնք կը ներկայացուէին բեմերու վրայ :

### ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՆ ՈՒ ՊԱՐԹԵՒՆԵՐԸ

Արտաւագդի ժամանակ , Առաջաւոր Ասիոյ մէջ , ամենէն զօրաւոր երկու տէրութիւններն էին Հռոմայեցիներն ու Պարթեւները : Հռոմայեցիները , Մեծն Տրգրանի աշխարհակալութիւնը կործանելէ ետք , տիրած էին բազմաթիւ երկիրներու և իրենց սահմանները կը հասնէին մինչև Տրգրիսի ափերը : Պարթեւները ևս զօրաւոր էին : Հռոմայեցիներու մեծագոյն հակառակորդը Պարթեւներն էին Ասիոյ մէջ : Հռոմայեցիները յառաջանալու համար դէպի արեւելք՝ պէտք է կառուէին Պարթեւներու հետ : Հայաստան , Արտաւագդէն սկսեալ , մնաց Հռոմայեցիներու և Պարթեւներու միջև , որոնք կ'ուզէին մեր երկիրը իրենց հպատակեցնել : Հայաստան այլևս պիտի դառնար կառախնձոր մը այս երկու հզօր տէրութեանց միջև :

### ԿՐԱՍՍՈՍ ԿՈՒ ԳԱՅ ԱՐԵՒԵԼԲ

Հռոմայեցիները կ'իշխէին բազմաթիւ երկիրներու վրայ : Անոնք գրաւած էին Եւրոպայի գրեթէ կէսը , հիւսիսային Ափրիկէն և արեւմտեան Ասիան : Շատ դժուար էր կառավարել այսքան ընդարձակ աշխարհակալութիւն մը : Աւստի Հռոմայեցի երեք անձեր՝ Պոմպէոս , Յուլիոս Կեսար և Կրասսոս 60 թուին (Բ. Ա.) կազմեցին եռապետութիւն մը , որպէս զի ուեղի դիւրաւ կառավարեն հռոմէական այս ընդարձակ աշխարհակալութիւնը : Անոնք իրարու մէջ բաժնեցին

հումէական երկիրները: Յուլիոս Կեսար ստացաւ Եւրոպական մասը, Պոմպէոս՝ Ափրիկեան մասը (Եգիպտոս), իսկ Կրասսոս առաւ Ասիական մասը:

Կրասսոս 53 թուին (Ք. Ա.) եկաւ արեւելք, կառավարելու համար գրաւուած երկիրները և նոյն տոնն կոռելու Պարթևներու դէմ: Կրասսոս ազան և արծաթասէր մարդ մըն էր: Անիկա իր բանակը կեդրոնացուց Ասորիքի մէջ: Հայերը և Հռոմայեցիները Մեծն Տիգրանի ժամանակ դաշնակից դարձած էին: Ուստի Արտաւազդ պարտաւոր էր օգնել Կրասսոսի: Արտաւազդ լուր ղրկեց Կրասսոսի որ Հայաստանի վրայով յարձաէի Պարթևներու վրայ:

Բայց Կրասսոս մերժեց Արտաւազդի առաջարկը և նախընտրեց Միջագետքի վրայով յարձակիլ Պարթևներու վրայ:

Պարթևներու թագաւորն էր Որոդէս Ա.: Որոդէս Ա. իր բանակը երկու մասի բաժնեց. մին յանձնեց Սուրէն զօրավարի և զայն ղրկեց Կրասսոսի դէմ, իսկ միւս մասը ինք առաւ և գնաց Արտաւազդի դէմ, որպէս զի Հայոց թագաւորը չօգնէ Կրասսոսի: Արտաւազդ ստիպուեցաւ բարեկամանալ Որոդէսի հետ: Որոդէսի որդին Բակուրը ամուսնացաւ Արտաւազդի քրոջ հետ, որպէս զի Հայերը և Պարթևները աւելի սերտ դաշնակիցներ դառնան:

Կրասսոս և Պարթևներու Սուրէն զօրավարը կոռելուցան Միջագետքի մէջ, Կրասսոս չարաչար պարտուեցաւ Սուրէն զօրավարէն և սպաննուեցաւ: Հումէական արձուենչան գրօշակները գերի ինկան Պարթևներու ձեռքը: Սուրէն Հայաստան ղրկեց Կրասսոսի գլուխը: Հարսանեկան ուրախութիւններ տեղի կ'ունենային, երբ Կրասսոսի արիւնլուայ գլուխը կը բերուէր Արտաշատ մայրաքաղաքը: Ճիշդ այս ժամանակ երկու թագաւորներն ու իշխանները ներկայ էին թատերագութեան մը: Յանկարծ Կրասսոսի գլուխը նետուեցաւ Որոդէսի ռաքերուն սողէ: Բոլոր սրահը թնդաց ուրախութեան ազագակներով: Իերասանը անմիջապէս վերցուց Կրասսոսի գլուխը և արտասանեց իր խաղ-

քաձ թատրերգութեան հետեւեալ տողերը .

«Լեռներէն մինք կը բերինք հոս  
Առիւծի ձագը՝ նոր սպաննուած :  
Որտորդութիւն բախտաւոր :»

## ԱՆՏՈՆԻՈՍ ԿՈՒ ԳԱՅ ԱՐԵՒԵԼԲ

Կրասսոսի մահով Եռապետութեան անգամ մնացին Պոմպէոսն ու Յուլիոս Կեսարը, որոնք իրարու դէմ կռուեցան, միահեծան իշխելու համար հռոմէական հրկիրներու վրայ: Պոմպէոս պարտուեցաւ ու սպաննուեցաւ: Մնաց միայն Յուլիոս Կեսար: Յուլիոս Կեսար եկաւ Ասիա, Կրասսոսի վրէժը լուծելու համար Պարթեաներէն: Յուլիոս Կեսար յաղթեց Պարթեաներուն, ազատեց հռոմէական արժուենշան զրօշները և իր յաղթանակը երեք բառով իմացուց Հռոմի ժողովուրդին. «Վենի, վրտի, վրչի»: Այսինքն՝ «եկայ, տեսայ, յաղթեցի»: Քիչ ետք՝ սակայն Հռոմի մէջ սպաննուեցաւ նաև Յուլիոս Կեսար: Անոր մահէն ետք կազմուեցաւ ուրիշ եռապետութիւն մը, որուն անդամներն էին Օգոստոս, Անտոնիոս և Լեպիտոս:

Անտոնիոս եկաւ Արևելք՝ կառավարելու համար հռոմէական հրկիրները: Անիկա ամուսնացաւ Եգիպտոսի Կղէոպատրա թագուհիին հետ և անոր ձեռքը խաղալիկ դարձաւ: Անտոնիոսի Բասսոս զօրավարը 38 թուին (Ք. Ա.) կռուեցաւ Պարթեաներու Սրոզէս թագաւորին հետ և յաղթեց անոր ու նոյնիսկ սպաննեց անոր Բակուր որդին (Արտաւազդի քեռայրը): Պարթեաներու պարտութեան վրայ՝ Արտաւազդ ստիպուեցաւ բարեկամանալ Անտոնիոսի հետ:

Անտոնիոս որոշեց երկրորդ անգամ յարձակիլ Պարթեաներու վրայ, որոնց նոր թագաւորն էր Հրատատ Գ.: Անտոնիոս 36 թուին (Ք. Ա.) արշաւեց Պարթեաներու վրայ: Հայոց Արտաւազդ թագաւորը օգնեց Անտոնիոսի: Արտաւազդի թելադրութեամբ Անտոնիոս Պարթեաներու վրայ յարձակեցաւ Հայաստանի վրայով: Կռիւը տեղի ունեցաւ Ատրպատականի մէջ, Պարթեաները չարաչար յաղթեցին Անտոնիոսի, որ պարտուած

վերագարձաւ Եզրիպտոս: Անտոնիոս իր պարտութեան միակ պատճառը նկատեց Արտաւազդը: Ուստի ուզեց խաբեբայութեամբ պատժել Արտաւազդը: Երեք անգամ լուր զրկեց Արտաւազդի և զայն հրաւիրեց Եզրիպտոս, իբր թէ խորհրդակցելու համար: Բայց Արտաւազդ հասկցաւ Անտոնիոսի մտադրութիւնը և մերժեց Եզրիպտոս երթալ: Ասոր վրայ Անտոնիոս 34 թուին (Ք. Ա.) անձամբ գնաց Հայաստան և խարդախութեամբ ձերբակալեց Արտաւազդը: Անտոնիոս արծաթէ չղթաներով կապեց Արտաւազդի ձեռքերը և Հայոց թագաւորն ու անոր սմբողջ ընտանիքը իբր պատերազմական գերիներ տարաւ Աղեքսանդրիա և զանոնք նուիրեց իր կնոջ՝ Կղէոպատրա թագուհիին:

Անտոնիոս Աղեքսանդրիայի մէջ կազմակերպեց հանդէս մը, իբր թէ իր «յազթուլեան» առիթով:

Արտաւազդ իր ընտանիքով ներկայ էր այդ հանդէսին, որուն թագուհին էր Կղէոպատրա: Անտոնիոս կը մտածէր մեծ յարգանք մը մատուցանել Կղէոպատրայի: Անիկա հրամայեց Հայոց թագաւորին ու անոր հետ եղողներուն, որ խոնարհութիւն ընեն Կղէոպատրայի առջև և զայն կոչեն «թագուհիներու թագուհին»: Անտոնիոս Հայոց թագաւորին ու անոր հետ եղողներուն ազատութիւն խոստացաւ, եթէ անոնք կատարէին իր այդ հրամանը: Անոնք սակայն Կղէոպատրայի առջև մնացին ուղիղ ու լուռ... Ո՛չ խոնարհութիւն ըրին և ո՛չ «թագուհիներու թագուհին» կոչեցին զայն: Անտոնիոս այս ըմբոստութեան համար զանոնք բանաւր նետեց 34 թուին (Ք. Ա.):

Հոռոմի մէջ շատ զայրացան, երբ իմացան Անտոնիոսի այդ վատ արարքը: Օգոստոս Կայսրը շատ յուզուեցաւ և եկաւ Արեւելք կոռուելու Անտոնիոսի դէմ: Օգոստոս ուզեց ազատել Հայոց թագաւորը: Անտոնիոս և Օգոստոս կռուեցան: Անտոնիոս պարտուեցաւ 31 թուին (Ք. Ա.) և սպաննել տուաւ բանտարկուած Արտաւազդը: որպէս զի Օգոստոս չկարենայ



Օ Գ Ո Ս Տ Ո Ս

գայն ազատեց :

Այսպէս վերջացաւ կեանքը Հայոց Արտաւազգ  
Թագաւորին , որ գիտցաւ բարձր պահել իր արժանա-  
պատուութիւնը :



### ՌԱՅԱՏՐՍԸ Ի ՌԱՌԵՐ

Գրագէտ Թագաւոր, Թատրերգութիւն, թեմ, հակառակորդ,  
կուլանձոր, եռապետութիւն, արծաթաւէր, արծուենշան, դրո-  
շակ, միանեման իշխել :

### ԸՆՎԱՅՆՍԸ Ի ԿԷՏԵՐ

1- Արտաւազգ գրագէտ Թագաւոր մըն էր — Ուրեմն Թագա-  
ւորները կրնան գրադիլ նաեւ մտաւորական գործերով :

2- Հայաստանի երկու կողմերը միշտ գոյութիւն ունեցած  
են երկու հզօր տէրութիւններ, որոնց մրցակցութեան իբրեւ կը-

առաջինձոր ծառայած է մեր երկիրը: Այս դարու ն այդ երկու տէրու թիւներն էին Հռոմայեցիներն ու Պարթեւները :

3- Գրաստոսի բանակը Հայաստանի մէջէն անցնելով՝ թերեւս ւաւելի բախտաւոր ըլլար պատերազմի արդիւնքը, վասն զի հռոմէական բանակը բարեկամ երկրի մը մէջէն պիտի անցնէր եւ զինուորներու պարենաւորումը ւաւելի զիւրին պիտի ըլլար :

4- Հռոմայեցիներու համար շատ անպատուարեր էր թշնամիին յանձնել արծուենշան դրօշակը :

5- Կղէոպատրա հաճոյամոյ ու խորամանկ թագուհի մըն էր :

6- Արտաւազդի վերջին արարքը՝ այսինքն Գղէոպատրայի խոնարհութիւն չընելը ցոյց կու տայ Հայոց այս արքայի նկարագրին վեհութիւնը :

7- Խօսիլ Օգոստոս Կայսեր մասին :

### ՀԱՐՑԱՐԱՆ

- 1- Ո՞վ յաջորդեց Մեծն Տիգրանի :
- 2- Ինչո՞վ նշանաւոր եղաւ Արտաւազդ Բ. :
- 3- Խօսէ՛ Հռոմայեցիներու եւ Պարթեւներու, ինչպէս նաեւ ( անոնց ծրագիրներուն մասին :
- 4- Այս երկու հզօր տէրութեանց միջեւ՝ Հայաստանի ի՞նչ դեր վիճակուած էր :
- 5- Ինչո՞ւ համար Հռոմայեցիները կազմեցին եռապետութիւն մը :
- 6- Ի՞նչպէս բաժնեցին այդ ընդարձակ աշխարհակալութիւնը :
- 7- Թ՞ր բաժինը ինկաւ Կրաստոսի :
- 8- Ի՞նչ ըրաւ Կրաստոս :
- 9- Ի՞նչ տեսակ մէկն էր անիկա :
- 10- Պատմէ՛ Կրաստոսի արշաւանքը Պարթեւներու վրայ :
- 11- Ի՞նչ ըրաւ Արտաւազդ այս պատերազմի ժամանակ :
- 12- Ի՞նչ պատահեցաւ Կրաստոսի. — Պատմէ՛ անոր մահը :
- 13- Կրաստոսի մահով ի՞նչ պատահեցաւ եռապետութեան :
- 14- Պատմէ՛ Յուլիոս Գեսարի կռիւը Պարթեւներու դէմ :
- 15- Որո՞նք կազմեցին երկրորդ եռապետութիւնը :
- 16- Ի՞նչ ըրաւ Անտոնիոս, երբ Արեւելք եկաւ :
- 17- Պատմէ՛ Բաստոսի կռիւը Պարթեւներու դէմ :
- 18- Բաստոսի յաղթանակով՝ Արտաւազդ որո՞նց կողմը անցաւ :
- 19- Պատմէ՛ Անտոնիոսի արշաւանքը Պարթեւներու վրայ :
- 20- Անտոնիոս իր պարտութեան պատճառը զո՞վ նկատեց :
- 21- Անտոնիոս ի՞նչպէս ձեռք ձգեց Արտաւազդը :
- 22- Ո՞ւր տարուեցան Արտաւազդ եւ իր ընտաբիքը :
- 23- Ի՞նչ պատահեցաւ Արտաւազդի, Աղեքսանդրիայի մէջ : Պատմէ՛ :
- 24- Ի՞նչ ըրաւ Օգոստոս, երբ իմացաւ Արտաւազդի բանտարկութիւնը :
- 25- Պատմէ՛ Օգոստոսի կռիւը Անտոնիոսի դէմ, ինչպէս նաեւ Արտաւազդի մահը :



# Ի Ե. Դ Ա Ս

## ԱՐՏԱԻԱԶԴԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Արտաւազդ Բ. (33—20 Բ. Ա.)

Արտաւազդ, երբ 34 թուին (Ք. Ա.) գերի տարուեցաւ Եգիպտոս, յաջորդ տարին՝ 33 թուին (Ք. Ա.)

գահ բարձրացաւ Արտաւազդի Բ., որդին Արտաւազդի:

Արտաւազդ Բ. քաջ և յանդուգն թագաւոր մըն էր: Անիկա անհուն ատելութեամբ մը լիցուած էր Հռոմայեցիներու դէմ, որոնք վատաբար ձերբակալած էին իր հայրը: Արտաւազդ Բ. իր հօր սպանութեան վրայ, ջարդեց Հայաստանի մէջ մնացած բոլոր Հռոմայեցիները: Անիկա իշխեց բոլորովին անկախ:

Արտաւազդ Բ. բարեկամացաւ Պարթևներու հետ, որոնք իրեն պէս թշնամի էին Հռոմայեցիներու:

Այս ժամանակ Հայաստանի մէջ կազմուեցան երկու կուսակցութիւններ. Հռոմայաւէր Կուսակցութիւն և Պարթևաւէր Կուսակցութիւն: Օգոստոս Կայսրը, երբ տեսաւ թէ Արտաւազդ Բ. Պարթևներու հետ կը բարեկամանայ և թշնամի կը դառնայ Հռոմի, 20 թուին (Ք. Ա.), մեծ բանակով Հայաստան զրկեց Տիգրանը՝ Արտաւազդի որդիներէն մին, որ Օգոստոսի ձեռքով Հռոմ տարուած էր և հռոմէական կրթութիւն ստացած: Տիգրան երբ Հայաստան հասաւ, Հռոմայաւէր Կուսակցութեան անդամները սպաննեցին Արտաւազդ Բ.ը և գահ բարձրացուցին Տիգրան Գ.ը: Այսպիսով 20 թուին (Ք. Ա.) սպաննուեցաւ Արտաւազդ Բ.ը և Հայոց թագաւորութիւնը սկսաւ տկարանալ:

## ՏԻԳՐԱՆ Գ., ՏԻԳՐԱՆ Գ. ԵՒ ԵՐԱՏՈՅ

Տիգրան Գ. թագաւորեց 14 տարի (20—6 Ք. Ա.): Անիկա ոչ մէկ կարեւոր գործ կատարեց: Անոր օրով Հայաստան գրեթէ հպատակ դարձաւ Հռոմի:

Տիգրան Գ. ի յաջորդեցին Տիգրան Գ. և անոր քոյրը Երասոյ (6—1 Ք. Ա.), որոնք իրարու հետ ամուսնացած էին : Քրոջ և եղբոր ամուսնութիւնը պարսկական սովորութիւն էր : Տիգրան Գ. և Երասոյ պարթեաւէր էին : Ուստի հռոմէական զօրքերը մասն շայաստան և շայոց գահէն հեռացուցին Տիգրան Գ. ը և Երասոն, որոնք Պարթեւներու երկիրը փախան : Տիգրան Գ. Պարթեւներու օգնութեամբ եկաւ և իր գահին աիրացաւ : Հռոմայեցիները այս անգամ դրդեցին Կովկասեան վայրենիները, որոնք արշաւեցին շայաստան : Տիգրան Գ. անոնց դէմ ելաւ և սպաննուեցաւ 1 թուին :

Տիգրան Գ. ի մահով վերջացաւ Արտաշիսեան թագաւորութիւնը (190—1) :

### ԱՆՅԱՏՐԵԼԻ ԱՎՈՒՄԸ

Հռոմայաւէր, պարթեւաւէր, դրդել :

### ԸՆԴԼԱՅՆՆԵԼԻ ԿԷՏՄԸ

- 1- Խօսիլ Հռոմայաւէր եւ Պարթեւաւէր Գուսակցութեանց նպատակին մասին : — շայերը աւելի պարթեւաւէր էին, որովհետեւ ցեղով, կրօնքով ու բարքերով աւելի մօտ էին Պարթեւներուն :
- 2- Հռոմայեցիները հպատակ ժողովուրդներու թագաժառանգները Հռոմի մէջ կը դաստիարակէին, որպէս զի անոնք ապագային իբր թագաւոր պաշտպանէին հռոմէական շահերը :

### ՀԱՐՑԱՐԱՆ

- 1- Ո՞վ յաջորդեց Արտաւազդի :
- 2- Արտաշէս Բ. ի՞նչ տեսակ թագաւոր մը եղաւ :
- 3- Ինչո՞ւ թշնամացաւ Հռոմայեցիներու եւ բարեկամացաւ Պարթեւներու հետ :
- 4- Այս ժամանակ շայաստանի մէջ ո՞ր կուսակցութիւնները կազմուած էին :
- 5- Ի՞նչպէս սպաննուեցաւ Արտաշէս Բ. :
- 6- Ո՞վ յաջորդեց Արտաշէս Բ. ի :
- 7- Որո՞նք յաջորդեցին Տիգրան Գ. ի :
- 8- Պատմէ՛ Տիգրան Գ. ի եւ Երասոյի կռիւնները շայաստանի գահը պահելու համար :
- 9- Ե՞րբ մեռաւ Տիգրան Գ. :
- 10- Ո՞ր թուին վերջացաւ Արտաշիսեան հարստութիւնը : — Ե՞րբ սկսած էր ան :



## ԻԸ. Դ Ա Ս

### ա. Հին ՀԱՅՈՑ ԿՐՕՆԸ

**ԱՐԾԵԸ.** — Հին Հայերը ամենէն շատ պաշտած են արեւը, որովհետեւ անոնք ուրիշ ժողովուրդներէ աւելի պէտք կամ կարօք ունէին արեւի լուսին եւ ջերմութեան: Հայաստան շատ ցուրտ կ'ընէ: Անրկա երկարաակ ձմեռ մը ունի: Ամբողջ երկիրը ձիւնով եւ սառով ծածկուած կ'ըլլայ ձմրան ընթացքին: Հայերը ուրեմն զրկուած կը մնային արեւին ջերմութենէն, որուն շատ պէտք ունէին: Հայերուն տուները գետնափոր էին. ամբողջ ձմրան անոնք այդ տուներուն մէջ անլոյս կը մնային՝ գիշեր թէ ցերեկ:

Հայերը միւս ժողովուրդներէն աւելի կը գգային արեւին մեծ բարիքը: Ատոր համար է որ իրենք ամենէն շատ պաշտած են արեգակը:

**ԼՈՒՍԻՆԸ, ԶՈՒՐԸ, ԿՐԱԿԸ ԵՒ ՍՍԵՆԵՐԸ.** — Հայերը պաշտած են նաև լուսինը, իրրեւ լուսատու մարմին մը:

Հին Հայերը պաշտած են նաև կրակն ու ջուրը, որոնք օգտակար էին եւ ունէին մաքրելու զօրութիւն:

Հայերը կը պաշտէին Արմաւիրի մօտերը գըտնուող սօսինքնու անտառը: Սրբազան ծառեր էին անոնք. Հայերը կը կարծէին թէ անոնց մէջ սօսափողը իրենց նախահայրերուն մեկնած հոգին է: Հին Հայերը սօսինքնու շարժման համաձայն գուշակութիւններ կ'ընէին:

**ՅԱՐԱԼԷԶՆԵՐԸ.** — Հին Հայերը կը կարծէին թէ Յարալէզները լիզկով կ'առողջացնէին վէրքերը այն մարդոց, որոնք գեղեցիկ, քաղ եւ հայրենասէր էին եւ կ'իյնային պատերազմի դաւաճի

վրայ: Օրինակ Արա Գեղեցիկը, որ իր հայրենիքին համար ինկաւ պատերազմի դաշտին վրայ:

Ուրեմն հին Հայերը կը հոււատային թէ քաջ և գեղեցիկ մարդիկ անմահ են:

**ՔԱՋՅՐ ԿԱՄ ԲԱՐԻ ՈԳԻՆՆԵՐ.** — Հին Հայերը կը հաւատային թէ բարձր լիոներու վրայ կ'ապրին քաջերը կամ բարի ոգիները, որոնք բարի և լաւ մարդոց պաշտպանն են և կը պատժեն չար մարդիկը, բանտելով զանոնք լիոներու խոր ու մթին տեղերու մէջ:

ԴՅԵՆԵՐԸ չար ոգիներ էին. անոնք կը քաջալիւրէին չարութիւններն ու չար մարդիկը, և նոյն ատեն կը ջանային վնասել օգտակար կամ բարի մարդոց: Ուրեմն դէերը հակառակորդներն էին բարի ոգիներու կամ քաջերու:

Իւերուն բնակարանը կը կոչուէր դժոխք:

**ՀՐԵՇՏԱԿՆԵՐ.** — Հրեշտակները այն ոգիներն էին, որոնք աստուածներու կամքը կը յայտնէին մարդոց: Ուրեմն անոնք աստուածներու և մարդոց միջև միջնորդներ էին:

**ՎԱՆԱՏՈՒՐ.** — Վանատուրը Հայոց պտղաբերութեան աստուածն էր: Ան էր որ կ'արգաստուորէր մեր դաշտերն ու ծառաստանները: Հայոց աշխարհը իր պտղաբերութիւնը կը պարտէր այս աստուծոյ: Ուրեմն անոր հրախառգէտ պէտք էին ըլլալ, զայն պաշտելով:

Վանատուր աստուծոյ տարեկան տօնը կը կատարուէր Օգոստոս 11-ին, այսինքն այն ամիսին՝ երբ երկիրը կը պտղաբերէր և հունձքը արգէն հասած կ'ըլլար:

Օգոստոս 11-ը Հայոց նոր տարին էր և կը կոչուէր ՆԱՐԱՍԱՐԴ, որ պարսկերէն կը նշանակէ նոր տարի:

Հայերը այդ օրը կը հաւաքուէին Աշտիշատ

աւանը (Տարօնի նահանգին մէջ) և մեծ ուրախութիւններ կ'ընէին : Նախ իրենց առաջին բերքը (՝հրախայրիքը) նուէր կը տանէին Վանատուրի, իրրե հրախտագիտութեան նշան : Ատօք հասկերէ կազմուած պսակ մը կը դնէին Վանատուրի արձանին վրայ :

Կրօնական արարողութենէն ետք, ա՛լ կը սկսէին մեծ ուրախութիւններն ու խաղերը, որոնց կարօտը կը քաշէին ամբողջ տարին : Հայոց ամենէն սիրելի տօնն էր Նաւասարդ :

**ՄԻՆԸ.** — Մինքը Հայոց կրակի աստուածն էր, որ մեր աշխարհին տաքութիւն կու տար : Հայերը շատ սիրած են ու պաշտած Մինքը, որովհետեւ մեր երկիրը ցուրտ էր և բնակիչները պէտք ունէին տաքութեան : Ամէն տարի Փետրուար 14-ին կը կատարէին Մինքի տօնը : Այդ առթիւ մեծ խարոյկներ կը վառէին :

**ՏԻՐ.** — Տիրը ճարտարութեան և գիտութեան աստուածն էր : Անիկա գրագիրն էր Արամազդ աստուծոյ : Հայերը Տիրի կ'աղօթէին, որպէս զի անիկա իրենց իմաստութիւն և ուսում տայ :

**ԱՆՍԱՀԻՏ.** — Հայոց ամենէն կարեւոր աստուածն էր Անահիտ : Հին Հայերը Անահիտը կը նկատէին մայր զգաստութեան և երկրին շունչ ու կենդանութիւն պարգեւող : Անոր կուռքը ոսկիէ շինուած էր. ատոր համար Անահիտը կը կոչուէր նաև ոսկեծիմն, ոսկեմայր : Անահիտի ոսկեղէն կուռքը կը գտնուէր Երիզայի մէջ :

Հայերը շատ կը սիրէին ու կը յարգէին Անահիտը : Ատոր համար անոր արձանը շինած էին ոսկիէ : Անահիտի կը զօհէին եղներ, զոր մասնաւոր մարդիկ կը մեծցնէին : Անահիտի համար զոհուելիք այդ եղները ազատօրէն կը պտըտէին արօտավայրերուն մէջ և մասնաւոր նշան մը կը կրէին իրենց ճակատին վրայ : Անահիտի կուռքէն բժշկութիւն խնդրելու հա-

մար շատ ուխտաւորներ կու գային :

**ԱՐԱՄԱՋԵՐ.** — Աստուածներու հայրն էր Արամ :  
մազդ : Անիկա կը նկատուէր **ԱՐԱՐԻՆՉ**ը երկինքի եւ  
երկրի : Անիկա մարդոց կը պարգեւէր աստուծիւն :

**ԱՍՏՂԻԿ.** — Աստղիկ գեղեցկութեան աստուածուհին էր : Անոր մեծ արձանը կը գտնուէր Աշտիշատի մէջ (Տարօն) :

Աստղիկի տօնին կը զարդարուէին վարդով :  
Ատոր համար այդ տօնը կը կոչուէր **ՎԱՐՊԱՎԱՌ**,  
որ կը նշանակէ զարդարում վարդով :

**ՎԱՀԱԳՆ.** — Հայոց քաջութեան եւ կրակի աստուածն էր Վահագն : Անոր արձանը ես կը գտնուէր Աշտիշատի մէջ :

Վահագն կը կոչուէր վիշապաքաղ, որ կը նշանակէ օձասպան, որովհետեւ իրեն համար կը պատմուէր թէ կռուած է օձերու հետ եւ սպաննած զանոնք :

Վահագն արեւ աստուածութեան մարմնացումն էր :  
Իր ծնունդը այսպէս կ'երգէին հին հայ գուսանները .

«Յրկներ երկին եւ երկիր,  
Յրկներ եւ ծիրանի ծով,  
Յրկն ի ծովուն ուներ զկարմրիկ հեղեցիկն .  
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,  
Ընդ եղեգան փող բոց ելանէր,  
Սւ ի բոցոյն պատանկիկ վագեր .  
Նա հուր հեր ուներ,  
Ապա թէ բոց ուներ մօրուս,  
Սւ աշկուսից էին տրեցակուսի : »

Վահագն նաեւ **ԲԱՅՈՒՐԵԱՆ** աստուածն էր : Հայ թագաւորները յաղթութիւն կը խնդրէին անկէ :

**ՆԱՆԷ.** — Նանէն կին աստուածութիւն մըն էր :  
Անիկա աղջիկն էր Արամազդի :

Նանէ պարկեշտութեան աստուածուհին էր :  
Անիկա կը ջանար որ բազմանան տիպար եւ պարկեշտ  
հայ կիներ :

Հայերը այս կուռքերուն երկրպագեցին մինչեւ  
Գ. Դար (Ք. Ն.), որմէ ետք Հայոց Լուսաւորիչը՝  
Ս. Գրիգոր եկաւ եւ մեր երկրին մէջ քարոզեց քրիստոնէութիւնը եւ կործանեց բոլոր կուռքերը :

## Բ- Հին ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Հին Հայերը իրենց նախաքննիկներէն՝ Սուբարի-ներէն, Սարրի-Միտանիներէն և Ուրարտացիներէն ժառանգեցին բարձր քաղաքակրթութիւն մը, զոր պահեցին ու զարգացուցին :

Հին Հայոց գլխաւոր երկու զբաղումները եղած են երկրագործութիւնն ու անասնաբուծութիւնը : Հայ երկրագործը կը մշակէր ցորեն, գարի և բրինձ : Իսկ հայ անասնապահները կը բուծանէին ոչխար, այծ, կով, ձի, ջորի և այլն : Մասնաւորաբար շատ նշանաւոր էին Հայաստանի ընտիր ձիերը : Պարսիկները տարին 20.000 ձիեր կը ստանային Հայաստանէն՝ իբրև տուրք :

— Հայերը շատ ճարպիկ հանդիսացան վաճառականութեան մէջ : Հայաստանի մէջէն կ'անցնէր Դարեհ Ա. վշտասպետի շինած մեծ ճամբան, որ կ'երկարէր Ծօշէն մինչև Սարգիկէ : Դարեհի այս ճամբան պատճառ եղաւ որ հայ վաճառականութիւնը յառաջ-գիմէ : Հայերը այս ճամբով կ'երթային հեռաւոր երկիրներ և կը զբաղէին առևտուրով : Անոնք կ'երթային մինչև հեռաւոր Հնդկաստան : Իսկ Եփրատ և Տիգրիս գետերու վրայ իրենց լաստերով կ'երթային մինչև Բաբելոն : Հայերը այս ժամանակներէն սկսեալ դարձան անուանի առևտրականներ : Հայ ժողովուրդը հարբստացաւ շնորհիւ իր վաճառականութեան :

Հայ ժողովուրդը, Ուրարտացիներու պէս, մեծ ճարտարութիւն ցոյց տուաւ արուեստներու և արհեստներու մէջ : Հին Հայերը կ'օգտագործէին Հայաստանի հանքերը. անոնք առատօրէն կ'արտադրէին աղ, պղինձ, երկաթ, կապար, արծաթ և այլն : Այս մետաղներով ալ կը շինէին զանազան գործիքներ և տնային առարկաներ, ինչպէս գէնքեր, սաղաւարտներ, զրահներ, կաթսաներ, ամաններ և այլն : Հայ արձանագործները պղինձէ և քարէ կը ձուլէին իրենց աստուածներու կուռքերը :

Հին Հայերը կը պատրաստէին անուշահոտ իւղեր, զոր կը գործածէին իբրև օձանելիքներ : Անոնք կը պատրաստէին գինի և գարեջուր, զոր մեծ ախորժակով կը գործածէին : Բահնոփոն զօրավարը Հայոց

տուներու մէջ՝ հողի սակ թալուած տեսաւ խոշոր կարասներ, որոնք լիցուն էին գարեջուրով :

Հին Հայերը մասնաւորաբար նշանաւոր էին կարմիր կամ ծիրանի ներկի պատրաստութեամբ: Այդ ներկը կը սասնային ուրիշ կոչուած կարմիր որդէն: Հայոց պատրաստած կարմիր ներկով է որ արեւելքի թագաւորները կը ներկէին իրենց արքայական պատմուճանները :

Հին Հայերը կարող էին նաև ճարտարապետութեան մէջ: Անոնք շինած են գեղեցիկ պալատներ, մեհեաններ և աշտարակներ, ինչպէս նաև քաղաքներ: Հայոց Արտաշատ մայրաքաղաքը յայտնի էր իբրև գեղեցիկ քաղաք մը :

Հայերը սակայն քիչ մը յետադէմ մնացին գրականութեան մէջ, որովհետև գիր չունէին: Սակայն հայ գուսանները կամ աչուղները անգիր կը յօրինէին գեղեցիկ բանաստեղծութիւններ հայ քաջերու մասին, և խնջոյքներու ժամանակ զանոնք կ'երգէին իրենց բամբիւռով: Հին Հայոց գրականութիւնը անգիր էր մինչև Ս. Մեսրոպ, որ Ս. դարուն ստեղծեց մեր այբուբենը :

**ԲԱՅԱՏՐԵԼԻ ԲԱՌԻՐ**

Գետափոր, սօսի, սօսափիւն, գուշակութիւն, պողաբնութիւն, արգասաւորել, ատոք հասկ, մայր զգաստութեան, Երիզա (՝նեբրկայիս Երզնկա), արարիչ, Եօշ, Սարդիկէ, գուսան, բամբիւռ:

**ՀԱՐՏԱՐԱՆ**


1- Խօսիլ հին Հայոց պաշտած աստուածներէն իւրաքանչիւրին մասին :

2- Ըսէ՛ թէ հին Հայերը ո՞ր զբաղումներու եւ արհեստներու մէջ յառաջդիմած էին :

**ԱՂԲԻՒՐՆԵՐ ՀԻՆ ՀԱՅՈՑ ԿՐՕՆՔԻՆ ԵՒ**

**ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Լէօ, Հայոց Պատմութիւն, հար. Ա., էջ 340—380, 481—532, Ա. Մ. Գարագաշեան, Քննական Պատմութիւն Հայոց, Մասն Ա., Թիֆլիս, 1895, էջ 266—278, Լ. Սահակ Տ. Մովսէսեան, Պատմութիւն Հայոց, Ա., էջ 149—165, 179—216, Մ. Էմին, Ընդհանուր Տեսութիւն Հայոց Հեթանոսական կրօնի վրայ, Գ. Գոստանեանց, Հայոց Հեթանոսական Գրօնը, Վաղարշապատ, 1879, Լ. Ալիշան, Հին Հաւատք Հայոց, Վենետիկ, 1895, Եղիշէ Արքեպ. Կուրեան, Հայոց Գրօնը, Երուսաղէմ, 1933, եւ այլն:



## ԵՌԱՄՍԵԱՅ ԾՐԱԳԻՐ

### Ա- ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ Բ. (95-54 Բ. Ա.)

- ա — ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ
- բ — ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԸ, ՊՈՆՏԱՑԻՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ
- գ — ՄԻՀՐԴԱՏ, ԻՐ ԾՐԱԳԻՐԸ ԵՒ ԳՐԱԻՈՒՄՆԵՐԸ
- դ — ՏԻԳՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ
- ե — ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԾԻՆՈՒԹԻՒՆԸ
- զ — ՄԻՀՐԴԱՏ ԿԸ ՊԱՐՏՈՒԻ ԼՈՒԿՈՒԼԼՈՍԷՆ
- է — ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԵՒ ՏԻԳՐԱՆԻ ԿՈՒԻԸ

1- Յիգրանակերթի ճակատամարտը

2- Արամանի կոթիք

բ — ՊՈՄՊԷՆՍ ԵՒ ՏԻԳՐԱՆ

### Բ- ԱՐՏԱԻԱԶԴ Բ. (54-33 Բ. Ա.)

Գ- ԱՐՏԱԻԱԶԴԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ. - ԱՐՏԱՇԻՍԵԱՆ  
ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ՝ 1 ԹՈՒԻՆ :

Դ- ՀԻՆ ՀԱՅՈՑ ԿՐՈՆԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒ-  
ԹԻՒՆԸ :



[In 204]

A 34129

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պարասոց սիւմոն սիւմոնեան

1. — Տարրական Ա. Տարի Բ. Տպագրութիւն
2. — Տարրական Բ. Տարի Բ. Տպագրութիւն
3. — Տարրական Գ. Տարի
4. — Հին Շրջան Ա. Տարի Բ. Տպագրութիւն
5. — Միջին Շրջան Բ. Տարի



## Ա Ր Ա Գ Ա Մ

Դասագիրք հայերէն լեզուի

Պարասոցին

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ և ԾԵՆԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ

1. — Արագած Ա. Տարի
2. — Արագած Բ. Տարի
3. — Արագած Գ. Տարի
4. — Արագած Դ. Տարի

ՇԵՆԻՍԱԿԻ ՀԱՍՅԷՆ  
 Simon Simonian  
 B. P. 133  
 Alep (Syrie)

ՀԱՍՅԷ  
 Librairie Bogharian  
 B. P. 285  
 Alep (Syrie)

ԳԻՆ 300 Ա. Դ.